ԱԿԱՆԱՏԵՍ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների դիտորդական առաքելության

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2023

Սույն զեկույցն ամփոփում է Երևանի ավագանու 2023 թ. սեպտեմբերի 17-ին կայացած ընտրությունների ընթացքում «Ականատես» դիտորդական նախաձեռնության երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկումների արդյունքները:

Դիտորդական առաքելությունն իրականացվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու են «Ականատես» դիտորդական առաքելության անդամ կազմակերպությունները, և այն չի արտացոլում դրամաշնորհատուի տեսակետները:

Դիտորդական առաքելությունն իր երախտագիտությունն է արտահայտում ընտրությունների դիտարկման գործընթացում ներգրավված դիտորդներին, համակարգողներին, իրավաբաններին և այլ անձանց, որոնց ակտիվ և նվիրված աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել արդյունավետ և որակյալ դիտորդական առաքելություն:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

Երևան
2023 դեկտեմբեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 10

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 10

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 12

1. Ընտրություններին նախորդող զարգացումներ 12
2. Ընտրությունների վարչարարություն 19
3. Ընտրարշավ 27
4. Վարչական ռեսուրսի չարաշահում 45
5. Այլ խնդրահարույց խախտումներ 51
6. Քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկություն և հաշվետվողականություն 55
7. Քվեարկության օր 58
8. Դիմում-բողոքներ և հաղորդումներ պետական մարմիններին 67
9. Ավագանու ձևավորում և քաղաքապետի ընտրություն 71

ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 73

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 80

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸԸՀ	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
ԺՀՄԻԳ	ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎՎԾ	Վերահսկիչ վերստուգիչ ծառայություն
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2023 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի են ունեցել Երևան քաղաքի ավագանու հերթական ընտրություններ:

«Ականատես» դիտորդական նախաձեռնությունը դիտարկել է նախընտրական, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացները և գնահատել դրանց համապատասխանությունը ՀՀ ընտրական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին, ինչպես նաև գործընթացների հնարավոր ռիսկերը ազատ, թափանցիկ և մրցակցային ընտրություններ անցկացնելու տեսանկյունից:

Առաքելությունն իրականացրել է դիտարկումը 2023 թվականի օգոստոսից 1-ից հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում:

Մեթոդաբանություն

Երևան քաղաքի ավագանու ընտրությունների դիտարկումն իրականացվել է գրասենյակային հետազոտությունների, ինչպես նաև 10 երկարաժամկետ և 60 կարճաժամկետ դիտորդների կողմից կատարված ուսումնասիրությունների միջոցով: Հավաքագրվել են քանակական և որակական տվյալներ անմիջական դիտարկումների, հանդիպումների, հարցազրույցների, քարոզչական միջոցառումներին, մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով, ըստ անհրաժեշտության՝ տեղերում գործակցելով ընտրական գործընթացի այլ դերակատարների հետ: Տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով դիտարկման տարբեր փուլերում ստացված ոչ պաշտոնական տվյալները ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Գրասենյակային հետազոտությունների թիրախում եղել են ընտրություններին նախորդող և նախընտրական միջավայրը պայմանավորող զարգացումները, ընտրական հանձնաժողովների կազմի, ընտրողների հաշվառման, ընտրական ցուցակների ձևավորման, կուսակցությունների ֆինանսավորման և ծախսերի, վարչական ռեսուրսի օգտագործման, պետական բյուջեից կատարված հատկացումների, ընտրարշավում սոցիալական մեդիայի գործածության հետ կապված հարցերը, մասնակցությունը, Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) պաշտոնական ձևավորումը, ընդհուպ՝ ավագանու առաջին նիստը, Երևանի քաղաքապետի ընտրությունը և երդմնակալության արարողությունը: Սոցիալական մեդիայի հարթակներում նախընտրական քարոզչությունը դիտարկելու նպատակով «Ականատես»-ն օգտագործել է Meta ընկերության CrowdTangle և Meta Ads Library գործիքները:

Երկարաժամկետ դիտորդական առաքելության շրջանակներում ուսումնասիրվել են նախընտրական և հետընտրական գործընթացները Երևանի 10 ընտրատարածքային հանձնաժողովների (ԸԸՀ) սպասարկման տարածքներում, այդ թվում՝ ընտրական վարչարարությունը, կուսակցությունների (դաշինքի) շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի օգտագործումը, ընտրական գործընթացի մասնակիցների դերակատարումը, ընտրատեղամասերից ընտրական պարկերի ստացումը և քվեարկության արդյունքների աղյուսակավորումը:

Կարճաժամկետ դիտորդներն իրականացրել են քվեարկության գործընթացի և արդյունքների ամփոփման դիտարկումը շրջելով և այցելելով 290 ընտրատեղամաս (ընդհանուր 475-ի մոտ 61%-ը): Ուշադրության կենտրոնում են եղել քվեարկության օրվա գործընթացները, իրավիճակը ընտրատեղամասերում, դրանց շրջակայքում, նախընտրական շտաբների մոտ, քվեարկության օրվա ընդհանուր մթնոլորտը քաղաքում:

Ընտրական գործընթացի վերաբերյալ արձանագրված էական խախտումների հիման վրա կազմվել և ներկայացվել են դիմում-բողոքներ Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ) և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ (ԸԸՀ-ներ), ինչպես նաև հաղորդումներ իրավապահ մարմիններին:

Դիտարկման արդյունքներ

Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածը պաշտոնապես սկսվել է քվեարկության օրվանից 25 օր առաջ՝ օգոստոսի 23-ին: Իրականում, սակայն, նախընտրական քարոզարշավը և համապատասխան միջոցների ներդրումը ընտրություններին մասնակցող մի շարք քաղաքական ուժերի կողմից ընտրողների համակրանքը շահելու նպատակով մեկնարկել է տվյալ պաշտոնական ժամկետից ավելի վաղ:

ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածից առաջ վարչական լծակների օգտագործման վերաբերյալ իրավակարգավորումների բացակայության պայմաններում կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և նրա ներկայացուցիչների կողմից նախընտրական գործընթացների նախապատրաստումն ուղեկցվել է վարչական ռեսուրսի ինտենսիվ կիրառմամբ: Սա ձևավորել է անհավասար մրցակցային միջավայր, որտեղ կառավարող կուսակցության թեկնածուն ձեռք է բերել ակնհայտ առավելություն մյուսների նկատմամբ:

Նախքան պաշտոնական քարոզչության մեկնարկը նկատվել են նաև այլ քաղաքական ուժերի ու նրանց թեկնածուների կողմից տարածվող, այդ թվում՝ ասոցացվող նյութեր, որոնցից շատերը պահպանվել են նաև օրենքով սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, որը նպաստել է ընդհանուր նախընտրական մրցակցային դաշտի աղճատմանը:

Ընտրությունների վարչարարությունն, ընդհանուր առմամբ, իրականացվել է ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ԿԸՀ կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան:

ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների կազմում սեռերի ներկայացվածությունը հիմնականում բավարար էր, սակայն խնդրահարույց էր հանձնաժողովների նախագահների մեջ տղամարդկանց, իսկ քարտուղարների մեջ՝ կանանց գերակշռումը: Հրապարակված տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ բացահայտել հանձնաժողովների անդամների հիմնական աշխատանքով պայմանավորված շահերի բախման իրավիճակները:

ԸԸՀ աշխատանքային տարածքները և պայմանները շարունակում են խնդրահարույց լինել, ինչը չի նպաստում պատշաճ և արժանապատիվ աշխատանքի ապահովմանը: Կայքում առկա տեղեկատվության որակը բավարար չէ պատշաճ հանրային վերահսկողություն

իրականացնելու համար: ՏԸՀ անդամների ուսուցման որակը հիմնականում բարձր է, սակայն հանձնաժողովների աշխատանքի որակը շատ դեպքերում անբավարար է:

Ընտրողների հասցեների հետ կապված տարիներ շարունակ բարձրաձայնած խնդիրները ՀՀ ոստիկանության կողմից լիարժեքորեն պատշաճ լուծում չեն ստացել և առկա են մեծաքանակ ընտրողներով խնդրահարույց հասցեներ:

Քարոզարշավը հիմնականում ընթացել է հանգիստ և հանդարտ, թեև որոշակի լարվածություն են ստեղծել սահմանային անվտանգության սպառնալիքները, ապատեղեկատվությունը, կեղծ օգտատերերի և էջերի միջոցով իրականացվող հակաքարոզչությունը և վիրավորանքը, միմյանց՝ արդեն սովորական դարձած պիտակավորումը: Քաղաքացիներին անհանգստացրել է Երևան քաղաքում աննախադեպ ծավալով իրականացվող բարեկարգումների հիմքում ընկած վարչական ռեսուրսի օգտագործման փաստը:

Կանանց ներկայացվածությունը կուսակցությունների և մեկ կուսակցությունների դաշինքի ցուցակներում եղել է բավարար, բայց ակնհայտորեն հիմնականում միտված է եղել օրենքի ձևական պահանջի պահպանմանը: Կուսակցությունների ցուցակում նկատվել է կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուների թվի թույլատրելի առավելագույն շեմի գերազանցում՝ գրանցմանը հաջորդող փուլերում:

Օրենսդրական պարտադիր պահանջի բացակայության պայմաններում մրցակցող քաղաքական ուժերից երկուսը չեն ունեցել նախընտրական ծրագրեր: Կուսակցությունները հիմնականում չեն արձագանքել դիտորդական նախաձեռնության պաշտոնական հարցումներին:

Նախընտրական քարոզչության նպատակով մրցակից ուժերն օգտագործել են բազմազան ձևաչափեր: Ընդհանուր ծախսերը կազմել են մոտ 557 միլիոն ՀՀ դրամ, որի կեսից ավելին՝ մոտ 299 մլն ՀՀ դրամ հայտարարագրել է «Քաղաքացիական պայմանագիրը»: Քվեարկության արդյունքներով՝ բոլոր քաղաքական ուժերը համատեղ նախընտրական հիմնադրամներից մեկ քվեի հաշվարկով ծախսել են միջինում 3,747 ՀՀ դրամ, ընդ որում՝ առավելագույն գումարը ծախսվել է «Ուժը հայրենյաց» կուսակցության և «Ապրելու երկիր» կուսակցության կողմից, որոնք չեն հաղթահարել անցողիկ շեմը: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությանը նպաստել է վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից կատարված հատկացումները: Ակնհայտորեն, քաղաքական ուժերի կողմից ներդրված ջանքերն ու ֆինանսական ռեսուրսները չեն արդարացրել սպասելիքները, և ընտրողների կողմնորոշումները պայմանավորված են եղել այլ գործոններով:

Նկատվել են քարոզչանյութերի տարածման համար սահմանված կանոնների բազմաթիվ խախտումներ, ավելի հաճախ՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Ուժը հայրենյաց» և «Ապրելու երկիր» կուսակցությունների պարագայում: Օրենքի խախտմամբ փակցված քարոզչանյութերի հեռացման ուղղությամբ իրավասու մարմինները հիմնականում դրսևորել են անգործություն:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից լայնորեն կիրառվել է վարչական ռեսուրսը քարոզարշավում վարչական շրջանների ղեկավարների և աշխատակազմերի,

կրթական հաստատությունների աշխատողների ներգրավման, պետական և համայնքային կազմակերպությունների աշխատակիցների կոլեկտիվ մասնակցություն ապահովելու, ՏԻՄ աշխատանքները քարոզչության նպատակով օգտագործելու, չնախատեսված մշակութային և զվարճանքի միջոցառումներ ձեռնարկելու միջոցով:

Եղել են բազմաթիվ դեպքեր, երբ քաղաքական ուժերը անչափահասներ են ներգրավել իրենց քարոզչական գործողություններում: «Հանրային ձայն» կուսակցության և «Մայր Հայաստան» դաշինքի քարոզչության ընթացքում գերակշռող է եղել ատելության խոսքը, վիրավորանքը, անձերի թիրախավորումը և թշնամանքի տարածումը: Նկատվել են մի շարք դեպքեր, երբ վնասվել են քաղաքական ուժերի փակցված քարոզչանյութերը, խոչընդոտվել են քարոզչական միջոցառումները:

Արձանագրվել են քրեական հանցակազմ պարունակող գործողություններ: Մի շարք դեպքերում խոչընդոտվել է «Ականատես»-ի դիտորդական գործունեությունը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների կողմից: Տեղ են գտել հավաքների մասնակիցներին նյութապես շահագրգռելու դեպքեր, երբ երիտասարդներին գումար է խոստացվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական երթերին քայլելու համար: «Ապրելու երկիր» կուսակցությունը քարոզչական նյութերին զուգահեռ որոշ ընտրողների տրամադրել է նվեր-քարտեր, որոնք ընտրողների մոտ ձևավորել են որևէ բարիք ստանալու առերևույթ ակնկալիք:

Կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերի, կուսակցությունների և դաշինքի նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի, ինչպես նաև կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տվել խնդիրներ, որոնք փաստացի անհնարին են դարձնում կուսակցությունների և քարոզարշավի ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը և օրինականության ապահովումը: Այդ փաստաթղթերը միասնական մոտեցմամբ չեն լրացվում, և հնարավոր չէ միմյանց նկատմամբ համադրումն ու ֆինանսավորման վերաբերյալ ամբողջական պատկերի ստացումը: Ներկայացվող տվյալները լիարժեք, մեքենայաընթեռնելի ու բավարար մատչելի չեն և հնարավորություն չեն տալիս դրանք ենթարկել մշակման, վերաօգտագործման և վերարտադրման: ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության (ՎՎԾ) կողմից կազմվող եզրակացությունները բավարար տեղեկություններ չեն պարունակում բացահայտված խնդիրների և ձեռնարկած քայլերի վերաբերյալ: Որոշ կուսակցությունները թերանում են հրապարակելու տարեկան հաշվետվությունները, իսկ նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:

Դիտարկված տեղամասերում քվեարկության նախապատրաստման, բուն քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացները հիմնականում կազմակերպվել են օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ առանց լուրջ խախտումների: Ընդհանուր առմամբ, քվեարկության օրն անցել է խաղաղ:

Ընտրատեղամաս դիտորդների մուտքը խոչընդոտելու վերաբերյալ արձանագրվել է մեկ դեպք: Արձանագրված մյուս էական խախտումները եղել են տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ, դրվագային և չհամակարգված: Քվեարկության գաղտնիությանն առնչվող խնդիրները հիմնականում կապված են եղել ընտրատեղամասի

և/կամ քվեարկության սենյակի անհաջող ընտրության կամ սխալ կահավորման հետ: Տեխնիկական և ընթացակարգային խնդիրները պայմանավորված են եղել ՏԸՀ անդամների մոտ անհրաժեշտ գիտելիքի բացակայությամբ կամ իրականացվող աշխատանքի նկատմամբ անկարգապահ և անպատասխանատու վերաբերմունքով: Խախտումների մասին դիտորդի գնահատականը գրանցամատյանում չգրանցելու դեպքերը ի ցույց են դրել որոշ ՏԸՀ նախագահների և/կամ քարտուղարների վերաբերմունքը օրենքի պահանջների նկատմամբ:

Քվեարկության արդյունքների աղյուսակավորման գործընթացում հիմնական խնդիրներն առնչվել են ՏԸՀ-ների կողմից ոչ պատշաճ աշխատանքի հետևանքների վերացմանը, այդ թվում՝ ընտրական պարագաների կազմակերպման և արդյունքների ամփոփման արձանագրությունների լրացման թերությունները շտկելու գործողություններին:

Դիտորդների կողմից արձանագրված ընտրախախտումների վերաբերյալ «Ականատես»-ը 3 դիմում-բողոք է ներկայացրել ընտրական հանձնաժողովներին և 4 հանցագործության մասին հաղորդում՝ իրավապահ մարմիններին:

Առաջարկություններ

Ընտրական գործընթացների բարելավման, դրանցում ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման, արդարության հաստատման և ընտրական գործընթացների ու արդյունքների նկատմամբ հանրային վստահության բարձրացման, ինչպես նաև ՏԻՄ-երի հետագա գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է վերանայել ՀՀ ընտրական օրենսգիրքը, ինչպես նաև առնչվող այլ իրավական ակտերը, մասնավորապես՝ ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման և անցկացման պրակտիկան ու մոտեցումները:

Մասնավորապես, առաջարկվում է՝

- նախատեսել Երևանի քաղաքապետի պաշտոնը թափուր մնալու պարագայում նոր քաղաքապետ ընտրելու պարտադիր պահանջ, իսկ հակառակ դեպքում՝ իրավական հետևանքներ, ներառյալ՝ ավագանու արտահերթ ընտրություններ:
- օրենսդրությամբ նախատեսել, որ համայնքներում ավագանու անդամները չեն կարող զբաղեցնել հանրային ծառայության այլ պաշտոն՝ լիարժեքորեն ապահովելու տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը և անկախությունը:
- կատարելագործել ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների ձևավորման, սեռերի ներկայացվածության, պատասխանատու և անկողմնակալ աշխատանքի ապահովման, շահերի բախման բացառման կանոնները և ընթացակարգերը, պրոֆեսիոնալ վերապատրաստման գործընթացները, տեխնիկական, գույքային և աշխատանքային պայմանները.
- նախընտրական քարոզչության կանոնների խախտումների կանխարգելման, դրանց նկատմամբ պատշաճ վերահսկողություն և պատասխանատվություն ապահովելու նպատակով՝ խթանել ընտրական հանձնաժողովների նախաձեռնողականությունը, խախտումների վերաբերյալ ահազանգերի ստացման արդյունավետ հնարավորությունը և գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը.

- ընտրողների ցուցակներում ճշգրտել և հստակեցնել խնդրահարույց հասցեները, ստորագրված ցուցակների հրապարակման ընթացքում ապահովել ընտրողների անձնական տվյալների պաշտպանությունը՝ առանց վնասելու նշված բնագավառում հանրային վերահսկողության իրականացմանը.
- ստեղծել իրավական հիմքեր երաշխավորելու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի թափանցիկ և հաշվետու գործունեությունը, ընտրական ցուցակներում սեռերի և կուսակցությունների անդամների պատշաճ ներկայացվածությունը, դաշինք կազմելու պահանջների արդյունավետ ապահովումը.
- հստակեցնել և խստացնել քարոզչանյութերի, դրանց տարածման, քարոզչական միջոցառումների համար ներկայացվող պահանջները, դրանց նկատմամբ վերահսկողությունը և խախտումների համար պատասխանատվությունը.
- սահմանել համացանցում իրականացվող քարոզչության համար առավել խիստ կանոններ և պատասխանատվություն, կատարել ուսումնասիրություններ և ձեռնարկել միջոցներ առավել արդյունավետ վերահսկողություն իրականացնելու և հնարավոր արտաքին ազդեցությունները չեզոքացնելու նպատակով.
- ամրագրել նախընտրական քարոզարշավում ներգրավվող «երրորդ անձ» եզրույթը և սահմանել կանոններ այդպիսի անձանց կողմից քարոզչության և նրանց ֆինանսավորման թափանցիկությունն ապահովելու համար.
- խստացնել վարչական ռեսուրսի օգտագործումն արգելող և սահմանափակող օրենսդրական կարգավորումները, ստեղծել արդյունավետ հիմքեր դրանց վերաբերյալ հանրային ծառայողներին իրազեկելու և վարչական ռեսուրսի չարաշահումը կանխարգելելու համար.
- կատարելագործել և խստացնել կուսակցությունների տարեկան հաշվետվություններում, կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերում և նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում տվյալների լրացման և ներկայացման պահանջները և վերահսկողությունը, ապահովել ֆինանսավորման, գույքի օգտագործման և հաշվետվությունների նկատմամբ լիարժեք վերահսկողություն իրականացնելու հնարավորությունն և թափանցիկությունը.
- սահմանել տեղամասային կենտրոնների ընտրության և դրանց մատչելիության կարգավիճակը հաստատելու համար պատշաճ ստուգման մեխանիզմներ, նախատեսել քվեարկության օրվա տեսագրությունների հասանելիությունը ԿԸՀ կայքում քվեարկությունից հետո առնվազն մինչև ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը. և տեսանկարահանող սարքերը փոխարինել տեսաձայնագրող սարքերով, ապահովել տեխնիկական սարքերի միջոցով ընտրողների բացակայության մասին զրոյական տեղեկանքի սահմանված ժամկետում տպագրելու տեխնիկական հնարավորությունը.
- ճանաչել դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով, ինչպես նաև սահմանել դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը.
- խթանել բողոքարկմանն առնչվող վարչարարությունը՝ վերացնելով ընտրական գործընթացներին առնչվող բոլոր հայցերով պետական տուրքի վճարման պահանջը և վերանայելով բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին վերաբերող իրավակարգավորումները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի են ունեցել Երևան քաղաքի ավագանու հերթական ընտրություններ:

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցել է 13 կուսակցություն և կուսակցությունների 1 դաշինք: Ընտրական գործընթացները հսկվել են երեք տեղական համատեղ դիտորդական առաքելությունների և երկու միջազգային դիտորդական առաքելությունների կողմից:

Քվեարկությանը մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների 28.46%-ը:

Ընտրությունների արդյունքում ձևավորվել է Երևան քաղաքի ավագանին, որում ներկայացված է 5 քաղաքական ուժ՝ «Հանրային ձայն», «Քաղաքացիական պայմանագիր», «Ազգային առաջընթաց», «Հանրապետություն» կուսակցությունները և «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքը (այսուհետ նաև՝ դաշինք)՝ բաղկացած «Երկիր ծիրանի» և «Ինտելեկտուալ Հայաստան» կուսակցություններից:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ականատես» դիտորդական նախաձեռնությունը դիտարկել է Երևանի ավագանու ընտրությունները 2023 թվականի օգոստոսից 1-ից հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում:

«Ականատես» առաքելության նպատակն է հսկել ընտրական գործընթացների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությանը, ինչպես նաև միջազգային նորմերին ու լավագույն փորձին:

Դիտարկումն իրականացվել է գրասենյակային հետազոտությունների, ինչպես նաև երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների կողմից կատարված ուսումնասիրությունների միջոցով:

Գրասենյակային հետազոտությունների թիրախում եղել են ընտրություններին նախորդող և նախընտրական միջավայրը պայմանավորող զարգացումները, ընտրական հանձնաժողովների կազմի, ընտրողների հաշվառման, ընտրական ցուցակների ձևավորման, կուսակցությունների ֆինանսավորման և ծախսերի, վարչական ռեսուրսի օգտագործման, պետական բյուջեից կատարված հատկացումների, ընտրարշավում սոցիալական մեդիայի գործածության հետ կապված հարցերը, մասնակցությունը, Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) պաշտոնական ձևավորումը, ընդհուպ՝ ավագանու առաջին նիստը, Երևանի քաղաքապետի ընտրությունը և երդմնակալության արարողությունը: Տվյալների հավաքագրումը կատարվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ), ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, Երևանի քաղաքապետարանի կայքէջերի և առցանց այլ բաց աղբյուրների վերլուծության,

պաշտոնական հարցումների, մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով:

Սոցիալական մեդիայի հարթակներում նախընտրական քարոզչությունը դիտարկելու նպատակով «Ականատես»-ն օգտագործել է Meta ընկերության CrowdTangle և Meta Ads Library գործիքները: Առաջինի միջոցով ուսումնասիրվել են կուսակցությունների և թեկնածուների էջերի հրապարակումների ակտիվությունը, դրանց հավանումների, տարածման ու մեկնաբանման (interactions) միտումները, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների կայքէջերի ակտիվությունը 2023 թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում: Meta Ads Library գործիքով ուսումնասիրվել են քաղաքական ուժերի և թեկնածուների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ու վարչական շրջանների կողմից Facebook, Instagram և Messenger հարթակներում որպես «քաղաքական» մակնշված գովազդների տարածման և դրա համար ներդրված ֆինանսական միջոցները՝ ընդգրկելով 2023 թվականի հունիսի 15-ից սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածը:

Երկարաժամկետ դիտորդական առաքելության շրջանակներում 10 դիտորդ ուսումնասիրել է նախընտրական և հետընտրական գործընթացները Երևանի 10 ընտրատարածքային հանձնաժողովների (ԸԸՀ) սպասարկման տարածքներում, այդ թվում՝ ընտրական վարչարարությունը, կուսակցությունների (դաշինքի) շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի օգտագործումը, ընտրական գործընթացի մասնակիցների դերակատարումը, ընտրատեղամասերից ընտրական պարկերի ստացումը և քվեարկության արդյունքների աղյուսակավորումը: Հավաքագրվել են քանակական և որակական տվյալներ անմիջական դիտարկումների, հանդիպումների, հարցազրույցների, քարոզչական միջոցառումներին, մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով, ըստ անհրաժեշտության՝ տեղերում գործակցելով ընտրական գործընթացի այլ դերակատարների հետ: Մասնավորապես, դիտորդների կողմից իրականացվել է 83 այց ԸԸՀ-ներ, դիտարկվել է 20 նիստ, հանձնաժողովի անդամների վերապատրաստման 40 դասընթաց, որոնց մասնակցել է 767 անդամ: Կազմակերպվել է 32 հանդիպում վարչական շրջանների (թաղապետարանների) ներկայացուցիչների հետ, 82 այցելություն կուսակցությունների և դաշինքների նախընտրական շտաբներ, ընդհանուր 35 հանդիպում ընտրական գործընթացում ներառված այլ անձանց հետ՝ ոստիկանություն, համատիրություններ, ՁԼՄ ներկայացուցիչներ և այլն: Իրականացվել է առավել շատ ընտրողներ ունեցող 50 հասցեների ստուգում, 110 նախընտրական միջոցառման դիտարկում: Անցկացվել է 310 հանդիպում համայնքների բնակիչների հետ, որոնց մասնակցել է 563 քաղաքացի: Երկարաժամկետ դիտորդները նաև հետևել են ՏԸՀ-ների կողմից ընտրական փաստաթղթերի ԸԸՀ-ներ ներկայացնելու գործընթացներին:

Կարճաժամկետ դիտորդներն իրականացրել են քվեարկության գործընթացի և արդյունքների ամփոփման դիտարկումը: Քվեարկության օրվա դիտորդությունն իրականացվել է 60 շրջիկ դիտորդների ներգրավմամբ, որոնք այցելել են 290 ընտրատեղամաս (ընդհանուր 475-ի մոտ 61%-ը), հսկել են իրավիճակը ընտրատեղամասերում, դրանց շրջակայքում, նախընտրական շտաբների մոտ, ինչպես նաև՝ քվեարկության օրվա ընդհանուր մթնոլորտը քաղաքում: Հավաքագրվել են քանակական և որակական տվյալներ անմիջական դիտարկումների միջոցով:

Քարոզարշավի և քվեարկության օրվա ընթացքում տեղ գտած ընտրախախտումների մասին քաղաքացիների և շահագրգիռ այլ կողմերի միջոցով տեղեկատվության հավաքագրման նպատակով գործել է նաև ահազանգերի iDitord առցանց հարթակը:

Տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով դիտարկման տարբեր փուլերում ստացված ոչ պաշտոնական տվյալները ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Ընտրական գործընթացի վերաբերյալ արձանագրված էական խախտումների հիման վրա կազմվել և ներկայացվել են դիմում-բողոքներ ԿԸՀ-ին, հաղորդումներ իրավապահ մարմիններին:

Դիտորդական առաքելության ընթացքում հավաքագրված տվյալները, բացահայտումներն ու վերլուծություններն ամփոփվել են «Ականատես» ընթացիկ տեղեկագրերում, ֆեյսբուքյան էջում հրապարակվող օրագրում, մամուլի հաղորդագրություններում և վիզուալ նյութերում:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դիտարկման արդյունքները ներկայացված են ստորև՝ ըստ ընտրական գործընթացի փուլերի ու ժամանակահատվածների: Դրանք ներառում են ընտրություններին նախորդող և նախընտրական միջավայրը պայմանավորող զարգացումները, պաշտոնական նախընտրական քարոզչության, քվեարկության օրվա, հետընտրական փուլերը և Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) պաշտոնական ձևավորումը, ընդհուպ՝ ավագանու առաջին նիստը, Երևանի քաղաքապետի ընտրությունը և երդմնակալության արարողությունը:

1. Ընտրություններին նախորդող զարգացումներ

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածը պաշտոնապես սկսվել է քվեարկության օրվանից 25 օր առաջ՝ օգոստոսի 23-ին: Իրականում, սակայն, նախընտրական քարոզարշավը և համապատասխան միջոցների ներդրումը ընտրություններին մասնակցող մի շարք քաղաքական ուժերի կողմից ընտրողների համակրանքը շահելու նպատակով մեկնարկել է տվյալ պաշտոնական ժամկետից ավելի վաղ:

Կառավարող քաղաքական ուժի կողմից տարվող քարոզչություն

ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածից առաջ վարչական լծակների օգտագործման վերաբերյալ իրավակարգավորումների բացակայության պայմաններում կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և նրա ներկայացուցիչների կողմից նախընտրական գործընթացների նախապատրաստումն ուղեկցվել է վարչական ռեսուրսի ինտենսիվ կիրառմամբ: Սա ձևավորել է անհավասար մրցակցային միջավայր, որտեղ կառավարող կուսակցության թեկնածուն ձեռք է բերել ակնհայտ առավելություն մյուսների նկատմամբ:

Քաղաքական վերադասավորումներ և վարչական լծակների կենտրոնացում

Երևան քաղաքի 2018-2023 թվականների ավագանին ձևավորվել էր 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո՝ սեպտեմբերի 23-ին անցկացված արտահերթ ընտրությունների արդյունքում, որտեղ հաղթել էր «Քաղաքացիական պայմանագիր» և «Առաքելություն» կուսակցություններից բաղկացած «Իմ քայլը» դաշինքը, իսկ դաշինքի ցուցակի առաջին համարը՝ Հայկ Մարությանը դարձել էր Երևանի քաղաքապետ:

Վերջին երկու տարվա ընթացքում Երևանի քաղաքապետարանում կատարվել են որոշ քաղաքական վերադասավորումներ, ինչը պայմանավորել է 2023 թ. Երևանի ավագանու հերթական ընտրությունների ֆոնային տրամադրությունները, ընտրապայքարի որակը և արդյունքները:

Նախ, 2021 թվականի դեկտեմբերի 22-ին Երևան քաղաքի ավագանու անդամները փակ, գաղտնի քվեարկությամբ պաշտոնանկ արեցին Հ. Մարությանին և նրա փոխարեն «Իմ քայլը» դաշինքի կողմից Երևանի քաղաքապետ ընտրվեց տվյալ պահին քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Շատ չանցած՝ 2022 թ.-ի մարտի 31-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը պաշտոնապես հայտարարեց Երևան քաղաքի ավագանու հաջորդ ընտրություններում քաղաքապետի իր թեկնածուի՝ Տիգրան Ավինյանի մասին, ով 2018 թ. մայիսից մինչև 2021 թ. օգոստոս զբաղեցրել էր ՀՀ առաջին փոխվարչապետի պաշտոնը և թողել այն 2021 թ. հունիսին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո:

2022 թ. սեպտեմբերի 23-ին Տ. Ավինյանը Երևանի ավագանու կողմից ընտրվեց Երևանի քաղաքապետի տեղակալ: Նա ստանձնեց քաղաքապետարանի շինարարության և բարեկարգման, մշակույթի և տուրիզմի, կոմունալ տնտեսության, տրանսպորտի վարչությունների, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատանքի համակարգումն ու վերահսկողությունը, ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի կողմից համատեղ իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի կատարումը: Կարևոր է արձանագրել, որ մինչ այս պահը՝ վարչական շրջանների ղեկավարների աշխատանքի և կառավարության ու քաղաքապետարանի կողմից համատեղ իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի համակարգման լիազորություններն իրականացվել են Երևանի քաղաքապետի կողմից և վերապահված չեն եղել քաղաքապետի որևէ տեղակալի, ինչը փաստել է նաև ինքը՝ Տ. Ավինյանը: Ի լրումն, նա Հ.Սարգսյանի փոխարեն սկսեց մասնակցել ՀՀ կառավարության նիստերին՝ հիմնավորելով դա իր՝ փոխվարչապետի աշխատանքային փորձառությամբ:

2023 թվականի մարտի 17-ին Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հրաժարական տվեց: «Իմ քայլը» դաշինքը չառաջադրեց Երևանի քաղաքապետի նոր թեկնածու՝ օգտվելով ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի բացից, որը չի ամրագրում Երևանի քաղաքապետի հրաժարականի պարագայում նոր քաղաքապետ ընտրելու պարտադիր պահանջ և չի հստակեցնում դրա իրավական հետևանքները: Ի տարբերություն, մյուս համամասնական ընտրակարգով ընտրվող ՏԻՄ-երի դեպքում՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 142.3-րդ հոդվածի համաձայն

համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի պաշտոնը թափուր մնալուց հետո ավագանու սահմանած ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մեկ ամիսը, անցկացվում է համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն, իսկ եթե ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ավագանու նիստը գումարելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում համայնքի ղեկավար չի ընտրվում, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ կառավարությունը վաղաժամկետ դադարեցնում է ավագանու լիազորությունները:

Երևանի քաղաքապետի պարտականությունները պաշտոնապես դրվեցին քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանի վրա՝ հաշվի առնելով, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 142.1-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավար կարող է դառնալ համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու կողմից անուղղակի ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարը, որը պետք է լինի ավագանու անդամ:

Միաժամանակ՝ իրականացվեց աշխատանքի վերաբաշխում և Տ. Ավինյանին փոխանցվեցին Երևանի քաղաքապետի գործառույթների զգալի, այդ թվում՝ հրապարակային մասը, ինչն արհեստականորեն մեծացրեց նրա հանրային տեսանելիությունը, ինչպես նաև ապահովեց առավել զգալի հասանելիություն վարչական ռեսուրսներին:

Այդպիսի լիազորություններից մեկը Երևանի քաղաքապետարանի ներքին աշխատանքների կազմակերպումը և գործակարգավարական նիստերի վարումն էր Տ.Ավինյանի կողմից, ինչը սակայն իրավաչափ չէր և հակասում էր Երևանի քաղաքապետի 2017 թ. հունիսի 13-ի «Երևանի քաղաքապետի կողմից գործակարգավարական խորհրդակցությունների անցկացման մասին» 1993-Ա որոշմանը, որով «գործակարգավարական խորհրդակցությունները վարում է Երևանի քաղաքապետը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ քաղաքապետի առաջին տեղակալը»: Նշված իրավակարգավորումը փոխվեց 2023 թ. մարտի 31-ի 715-Ա որոշմամբ՝ Տ.Ավինյանի կողմից գործակարգավարական առաջին նիստը փաստացի վարելուց չորս օր անց: Դրանում ավելացվեց դրույթ, որ Երևանի քաղաքապետի բացակայությամբ գործակարգավարական նիստը կարող է վարել նրա տեղակալներից որևէ մեկը՝ այդպիսով իրավակարգավորումը համապատասխանեցնելով փաստացի պրակտիկային:

Պետք է հավելել, որ Երևանի փոխքաղաքապետ դառնալուն զուգահեռ Տ. Ավինյանը պահպանել է փոխվարչապետի պաշտոնով պայմանավորված 100% պետական մասնակցությամբ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» («ԱՆԻՖ») ՓԲԸ տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը: Այս երկու պաշտոնները զբաղեցնելու անհամատեղելիության հիմքով ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սկսել է վարչական վարույթ, որի նյութերն ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն: Վերջինս նախաձեռնել է քրեական վարույթ մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու հատկանիշներով: Տ.Ավինյանի լիազորությունները «ԱՆԻՖ»-ի տնօրենների խորհրդում դադարեցվել են միայն 2023 թ. նոյեմբերի 10-ին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի հրամանով:

Երևանի քաղաքապետ դառնալու հետ մեկտեղ Տ.Ավինյանը նաև պահպանել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոնը, որը զբաղեցնում է ցայսօր:

Պետական բյուջեից հատկացումներ Երևանի քաղաքապետարանին

2019-2023 թվականներին պետական բյուջեից Երևանի քաղաքապետարանին կատարված հատկացումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2023 թվականի գարնանը ՀՀ կառավարությունը համարյա երկու անգամ ավելացրել է Երևանի քաղաքապետարանի ֆինանսավորումը՝ մոտ 10 մլրդ դրամից հասցնելով մոտ 20,6 մլրդ դրամի: Այս բյուջետային հատկացումը նաև էականորեն տարբերվում է նախորդ 4 տարիների հատկացումներից, որոնք երբևէ չեն գերազանցել 10 մլրդ դրամը: Ավելին, ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների համաձայն 2020-22 թթ. ՀՀ կառավարությունը նվազեցրել է ՀՀ ազգային ժողովի կողմից պետական բյուջեով Երևանի քաղաքապետարանին կատարված հատկացումները (2020-ին՝ 433.5 մլն, 2021-ին՝ 1,778.3 մլն, իսկ 2022-ին՝ 369.4 մլն ՀՀ դրամով):

Նույնիսկ, եթե համարվում էր, որ Երևանի քաղաքապետարանի բյուջեի վերջին տարվա կատարողականը առանձին ոլորտներում բարելավվել է, տարվա երկրորդ եռամսյակում, ընտրություններից ընդամենը 5 ամիս առաջ համայնքի բյուջեն կրկնապատկելը և համապատասխան ոլորտներում ինտենսիվ աշխատանքների նախաձեռնումը չեն կարող այլ կերպ ընկալվել, քան որպես լրացուցիչ հատկացում Երևանի ավագանու ընտրություններում հանրային համակրանքը հօգուտ կառավարող քաղաքական ուժի ուղղելու և նրա համար մրցակցային առավելություն ապահովելու նպատակով: Նաև որոշակի կասկածների տեղիք կարող էր տալ այդ հատկացումների հիմնավորվածությունը և դրանք սեղմ ժամկետներում նպատակային և արդյունավետ ծախսելու կարողությունը և հնարավորությունը:

Երևանի քաղաքապետարանին 2023 թ. լրացուցիչ հատկացումները հիմնականում արվել են ՀՀ կառավարության ապրիլի 13-ի N531-Ն որոշմամբ, որի Հավելված 3-ով որոշ միջոցառումների կամ դրանց մի մասի իրականացման պատասխանատվություն/ իրավունքը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից փոխանցվել է Երևանի քաղաքապետարանին՝ 9,994,024.6 հազար դրամով ավելացնելով հատկացումները ՀՀ պահուստային ֆոնդից: Հատկացված գումարի զգալի մասը նախատեսվել է ծախսել հետևյալ աշխատանքների համար.

Նպատակ	Գումար/ հազ. ՀՀ դրամ
Բազմաբնակարան շենքերի վերելակների արդիականացում	4,729,840.0
Ճանապարհների կառուցում և միջին նորոգում	1,651,196.0
Երևանի մետրոպոլիտենի վերանորոգում և կառուցում	1,691,000.0
Հանգստի գոտիների և այգիների կառուցում և հիմնանորոգում	1,563,036.2
Նախադպրոցական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում	831,902.2
Նոր Խարբերդի թաղամասում գազատարի կառուցում	522,963.4
Կոյուղատար համակարգի արդիականացում և ընդլայնում	452,878.1
Առողջապահական կազմակերպությունների հիմնանորոգում	242,208.7

Տ. Ավինյանն իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է բակերի հիմնանորոգման և կառուցման համար Երևանի բյուջեով նախատեսված ֆինանսների դինամիկան (ենթադրաբար՝ պետական բյուջեից կատարված հատկացման հաշվին)՝ ընդգծելով 2022 թ. համեմատ գումարի հնգապատիկ աճը և նախատեսվող վերանորոգման աշխատանքները «աննախադեպ թվով՝ 210 բակային տարածքներում»:

Ընտրությունների նախաշեմին մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում ընթացել են լայնածավալ կառուցապատման ու բարեկարգման աշխատանքներ՝ ասֆալտապատում, բակային տարածքների վերանորոգում, եզրաքարերի հիմնանորոգում և այլն: «Ականատես»-ի դիտորդների՝ քաղաքի բնակիչների հետ ունեցած հանդիպումների ընթացքում պարզվել է, որ նաև սկսել են լուծվել այնպիսի հարցեր, որոնք տարիներ շարունակ լուծում չեն ստացել, ինչը, բնականաբար, արվել է քաղաքացիների ձայները ներգրավելու նպատակով:

Երևան քաղաքին պետական բյուջեից հատկացվող գումարի կտրուկ ավելացումն ուշագրավ է նաև Հայաստանի մնացած՝ 70-ից ավելի համայնքներին տրվող պետական հատկացումների ծավալների համեմատ, ինչն ապացուցում է քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված իրավիճակային ու հայեցողական մոտեցումը:

Նախընտրական քարոզչության դեպքեր

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ակնհայտ նախընտրական քարոզչությունը փաստացի մեկնարկել է դեռևս 2022 թվականի օգոստոսից՝ Երևանի «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի հետևանքների վերացման աշխատանքներին Տիգրան Ավինյանի ներկայությամբ:

2022 թվականի սեպտեմբերին Երևանի քաղաքապետի տեղակալ ընտրվելուց անմիջապես հետո Տ. Ավինյանը նախաձեռնել է հանդիպումների շարք Երևանի վարչական շրջաններում, որոնք ակտիվորեն լուսաբանվել են ԶԼՄ-ների կողմից: Լուսաբանումների նյութի մի մասը կապված էր նրա պաշտոնեական լիազորությունների հետ, սակայն կար նաև տեղեկատվություն, որը ընտրությունների նախաշեմին կարող էր ողջամտորեն ընկալվել որպես նպատակադրված նախընտրական քարոզչություն:

Ակնհայտ նախընտրական քարոզչության դրսևորում էր 2023 թվականի հունիսի 29-ին երևանյան սիրված երգիչ Ֆորշին համայնքի անունից բնակարան նվիրելը, մինչդեռ առնվազն 2018 թվականից հետո Երևանի քաղաքապետարանի կողմից արվեստի գործիչներին նման հանդիսավորությամբ նվերներ չէին տրվել, իսկ շահառուի կամ պահի ընտրության չափանիշները թափանցիկ և հասկանալի չէին և այլ կերպ, քան քարոզչություն չէին կարող մեկնաբանվել: Այդպիսի դրսևորումներ էին Տ.Ավինյանի կողմից նոր տրոլեյբուսների շահագործման մեկնարկի հանդիսությունը հուլիսի 8-ին, Դալմայի այգիների տարածքում անտառատնկման աշխատանքների վերաբերյալ հայտարարությունը հուլիսի 24-ին, Երևանի վերջին գազելի վարումը օգոստոսի 11-ին, ընդ որում՝ առանց համապատասխան վարորդական վկայականի և ամրագոտիների, ինչի համար Տ.Ավինյանն ավելի ուշ տուգանվեց պարեկային ծառայության կողմից:

Նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածից առաջ արդեն իսկ նկատվել են մի շարք համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին ակտիվ քարոզչության դրվագներ: Այսպես՝

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կոմունալ բաժնի ֆեյսբուքյան էջում հուլիսի 21-ի ամսաթվով տեղադրվել է նյութ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Քանաքեռ-Զեյթուն տարածքային կազմակերպության նախաձեռնող խմբի հուլիսի 18-ի արտահերթ նիստի վերաբերյալ, որի ժամանակ ներկայացվել են խորհրդի կողմից հաստատված ավագանու թեկնածուներին:
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Անդրանիկ Ավետիսյանը իր ֆեյսբուքյան էջում որպես ետնանկար հրապարակել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ կապված քարոզչական նյութեր:
- Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Սերոբ Սարգսյանն իր ֆեյսբուքյան էջում ակտիվ քարոզչություն է արել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին:
- Աջափնյակ վարչական շրջանի աշխատակիցները մասնակցել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից կազմակերպված դրամահավաք-երեկոյին և հրապարակել լուսանկար վարչապետի հետ:
- Աջափնյակ վարչական շրջանի մեկ այլ աշխատակից՝ Նարինե Չոբանյանը, իր ֆեյսբուքյան էջում ակտիվ քարոզչություն է իրականացրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին և հակաքարոզչություն՝ ընդդեմ Հայկ Մարությանի՝ համապատասխան մեկնաբանություններով տարածելով վերջինիս Երևանի քաղաքապետի ընտրություններին մասնակցելու մտադրության մասին տեսանյութը:

Ներկայացված ֆեյսբուքյան գրառումների նկարները հասանելի են այստեղ:

Օգոստոսի սկզբից նկատվել են նաև «Ասացի՞ք» և «Արեցի՛նք» գրությունները պարունակող գովազդային վահանակները, որոնք կրում էին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անվանումն ու տարբերանշանը և որոնք պահպանվել են նաև օրենքով սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

Խնդրահարույց խոստումներ և նախաձեռնություններ

Ի լրումն քարոզչության վերը նշված դեպքերի, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները, այդ թվում՝ Տ. Ավինյանը, հանդես են եկել մի շարք խնդրահարույց նախընտրական խոստումներով և նախաձեռնություններով:

Երևանի ավագանու ընտրություններից 2 ամիս առաջ, Երևանի քաղաքապետարանը հայտարարություն է տարածել քաղաքապետին կից «Երիտասարդության հարցերի խորհրդի» ձևավորման մասին՝ կոչ անելով դիմել մինչև օգոստոսի 14-ը: Մինչ այդ, տվյալ կառույցի գործունեությունը դադարեցվել էր հենց նույն պաշտոնյաների կողմից՝ Հայկ Մարությանին պաշտոնից հեռացնելուց մի քանի ամիս անց՝ այն պատճառաբանությամբ, թե նման խորհրդի

իմաստն անհասկանալի է: Հետագայում երկար ժամանակ որևէ քայլ չէր արվել խորհուրդը վերականգնելու ուղղությամբ: Տպավորություն է ստեղծվել, որ ընտրությունների նախաշեմին որոշվել է տվյալ խորհուրդը ծառայեցնել որպես քարոզչագործիք՝ երիտասարդ ընտրողներին շահագրգռելու նպատակով՝ չնայած, որ գործնականում այսպիսի ազդեցության մասին հետագա փաստեր առկա չեն:

Կառավարող քաղաքական ուժի կողմից արվել են մեգանախագծերի մասին հայտարարություններ, որոնք չեն բխել Երևանի հաստատված և գործող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից: Երևանի քաղաքի նոր գլխավոր պլանի/հատակագծի (գործող փաստաթղթի գործողության ժամկետը մինչև 2020 թվականն էր) մշակման ուղղությամբ մասնագիտական կազմակերպությունների և հանրույթի ներգրավմամբ շուտափույթ քայլեր ձեռնարկելու և քաղաքի խնդիրներին համապարփակ և համակարգային լուծումներ տալու փոխարեն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները հանդես են եկել սեփական ճաշակով ռազմավարական բնույթի առաջարկներով և քաղաքական խոստումներով՝ «Աջափնյակ» մետրոյի կայարանի կառուցման ծրագրով, «Փեթակ» առևտրային կենտրոնի հարևանությամբ մետրոյի մեկ այլ կայարանի բացման ծրագրով, նոր ճոպանուղու կառուցման մասին հայտարարությամբ և այլն:

Հանրային միջոցներով լուսաբանում

2022 թ. սեպտեմբերին Տ.Ավինյանի Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակվելուց ի վեր նրա պաշտոնական լիազորությունների իրականացումն ուղեկցվել է ինտենսիվ հանրային իրազեկմամբ, որի համար օգտագործվել են նաև հանրային միջոցները, այդ թվում՝ Հանրային հեռուստատեսությունը, Երևանի քաղաքապետարանի ու վարչական շրջանների ֆեյսբուքյան էջերը: Առանձնակի ակտիվությամբ լուսաբանվել է Տ. Ավինյանի առօրյա աշխատանքային գործունեությունը, հանդիպումները Երևան քաղաքի բնակիչների հետ, խնդիրների վերաբերյալ գնահատականները, խոստումները, հանձնարարականները և այլն: Բացի այդ, Հանրային հեռուստաընկերության եթերում նրա հետ անցկացվել են քարոզչական ենթատեքստ ունեցող հարցազրույցներ, օրինակ՝ ապրիլի 17-ին Պետրոս Ղազարյանի հետ, մայիսի 21-ին Շուշան Ռաֆայելյանի հետ:

Հանրային հեռուստատեսությամբ Տ. Ավինյանի գործունեության լուսաբանման ինտենսիվությունն ակնհայտորեն գերազանցել է և՛ Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի, և՛ Երևանի քաղաքապետի մյուս տեղակալների, և՛ Երևան քաղաքի նախորդ երկու քաղաքապետերի, և՛, թերևս, Հայաստանի բոլոր համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների գործունեության ընդհանուր լուսաբանումների ինտենսիվությունը և ծավալը:

Այլ քաղաքական ուժերի կողմից տարվող քարոզչություն

Նախքան պաշտոնական քարոզչության մեկնարկը նկատվել են նաև այլ քաղաքական ուժերի ու նրանց թեկնածուների կողմից տարածվող, այդ թվում՝ ասոցացվող նյութեր (որոնցից շատերը պահպանվել են նաև օրենքով սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածում), որոնք թեև չեն արգելվում օրենքով՝ ֆինանսական

հաշվետվություններում համապատասխան ծախսերն արտացոլելու պայմանով, դրանք նպաստում են ընդհանուր նախընտրական մրցակցային դաշտի աղճատմանը:

- «Ապրելու երկիր» կուսակցության ցուցակը գլխավորող Մանե Թանդիլյանի «Քո քաղաքամայրը» խորագրով տարբեր կոչերով պաստառները և Prestige ամսագրի նկարները փակցված են եղել փողոցներում, վերելակներում:
- Քաղաքի տարբեր վայրերում նկատվել է «Արցախը ապրելու է» կարգախոսով պաստառ, որն ասոցացվել է «Ապրելու երկիր» կուսակցության հետ:
- Հեռուստատեսությամբ հեռարձակվել է «Տիկին նախարար» ֆիլմը և քաղաքում տարածված են պաստառներ, որոնք ասոցացվել են «Ապրելու երկիր» կուսակցության և նրա թեկնածու Մ.Թանդիլյանի հետ:
- Հայկ Մարությանի «Քաղաքապետը» մոնոներկայացումը, որը բեմադրվել էր դեռևս 2022 թվականին, օգոստոսի 19-ից հասանելի է դարձել համացանցում:
- Երևան մտնող մայրուղիներում նկատվել են «Մայր Հայաստան» դաշինքի թեկնածու Անդրանիկ Թևանյանի և «Ազգային առաջընթաց» կուսակցության նախագահ Հայկ Գրիգորյանի պաստառները:
- Կենտրոն վարչական շրջանի բազմաթիվ վահանակներին ցուցադրվել են «Ուժը հայրենյաց» ընտրական ցուցակի երկրորդ համար Նատալյա Ռոտենբերգի նկարով պաստառները:
- Համացանցում տարածվել են «ժողովրդավարական համախմբում» կուսակցության տեսանյութերը:

Պետք է ավելացնել, որ բացի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությունից Երևանի գլխավոր պլանի հատակագծի անտեսմամբ քաղաքաշինական մեգանախագծերի, մասնավորապես՝ մի շարք ճոպանուղիների կառուցման խոստումներով հանդես է եկել նաև «Ապրելու երկիր» կուսակցությունը:

2. Ընտրությունների վարչարարություն

Ընտրությունների վարչարարությունն, ընդհանուր առմամբ, իրականացվել է ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ԿԸՀ կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան: Գործընթացները կազմակերպվել են ԿԸՀ կողմից, Երևանում տեղաբաշխված 10 ԸԸՀ-ների միջոցով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Երևան քաղաքի ավագանու 2023 թ. սեպտեմբերի 17-ի ընտրությունները խոշորագույնն էին ԿԸՀ 2022 թվականի հոկտեմբերի 7-ին ձևավորված նոր կազմի համար, որոնք այդուհանդերձ անցկացվեցին լավ կազմակերպված և սահուն կերպով: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ վարչական ռեսուրսի համատարած չարաշահման պայմաններում ԿԸՀ արձագանքն ակնհայտորեն համաչափ ու բավարար չէր:

2023 թ. հուլիսի 18-ին ԿԸՀ կողմից Երևան քաղաքի ավագանու ընտրությունների վերաբերյալ տեղեկությունը հրապարակելու պահից մինչև սեպտեմբերի 17-ը ԿԸՀ-ն գումարել է 9 նիստ, որոնցում հիմնականում քննարկվել են ընտրությունների կազմակերպմանն առնչվող հարցեր,

ներառյալ որոշ թեկնածուների ինքնաբացարկի դիմումները: Նիստերն անցել են առանց տեսանելի խնդիրների:

ԿԸՀ և ԸԸՀ-ների գործունեության մասին տվյալները, այդ թվում՝ նիստերի ժամանակացույցը, օրակարգը, նիստերի ուղիղ հեռարձակումը, տեսաձայնագրությունները և որոշումները ներկայացված են ԿԸՀ համացանցային կայքում՝ www.elections.am հասցեով: Վերջինս բավականին ինֆորմատիվ և հարմարավետ հարթակ է, և տվյալների զգալի մասն այստեղ տեղադրվում է բաց տվյալների և մատչելի ձևաչափով, այդուհանդերձ կան կարևոր փաստաթղթեր և նյութեր, որոնք չեն բավարարում մատչելիության սկզբունքին և որոնման հնարավորություն չեն ընձեռնում: Մասնավորապես, ԿԸՀ և ԸԸՀ որոշումները, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության (ՎՎԾ) եզրակացությունները հրապարակվում են PDF ձևաչափով, որը սակայն հնարավորություն չի տալիս փաստաթղթում բառերով որոնում իրականացնելու, դրանից քաղվածք պատճենելու համար:

ԿԸՀ կայքի վարչական վարույթների բաժնում ներկայացված է երկու դիմում: Մեկը՝ «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության կողմից, ներկայացված 2023 թ. սեպտեմբերի 20-ին վարչապետ Ն.Փաշինյանի կողմից սեպտեմբերի 15-ի հանրահավաքին պաշտոնական դիրք և ատելության խոսք օգտագործելու մասով մերժվել է՝ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքով, թեև այն փաստացի չէր կարող ներկայացվել ավելի վաղ: Մյուսը՝ ԸԸՀ-ների կողմից սեպտեմբերի 22-ին ներկայացված միջնորդություն է՝ մի շարք անձանց ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները ուժը կորցրած ճանաչելու մասին, որի ընթացքի մասին, սակայն, տեղեկություն առկա է միայն ԿԸՀ որոշումների բաժնում:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ

Երևան քաղաքում գործող 10 ԸԸՀ-ների սպասարկման տարածքները հիմնականում համընկնում են Երևանի վարչական շրջանների հետ, բացառությամբ՝ երկուսի. թիվ 9 ընտրատարածքում միավորված են Կենտրոն և Նորք Մարաշ, իսկ թիվ 10-ում՝ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանները:

Ընդհանուր առմամբ՝ ԸԸՀ-ների աշխատանքներն ընթացել են բնականոն հունով՝ առանց միջադեպերի և խախտումների:

ԸԸՀ-ների կազմ

ՀՀ ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ԸԸՀ-ների կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից:

Ընդհանուր ԸԸՀ-ների կազմում սեռերի ներկայացվածությունը գրեթե հավասար է, կանայք՝ 49, տղամարդիկ՝ 51%: Միևնույն ժամանակ՝ ԸԸՀ նախագահների 80%-ը տղամարդիկ են, իսկ քարտուղարների 90%-ը՝ կանայք, ինչը խնդրահարույց է:







«Ականատես»-ը հարցում է ուղարկել ԿԸՀ՝ Երևանում տեղակայված ԸԸՀ անդամների աշխատավայրերի և պաշտոնների/զբաղվածության մասին առավել ամբողջական պատկեր ստանալու նպատակով, ինչին ԿԸՀ-ն տվել է հակասական պատասխաններ: Նախ ԿԸՀ-ն նշել է, որ ԸԸՀ անդամները, ըստ համապատասխան դիմումների, չեն զբաղեցնում Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պաշտոնները: Միաժամանակ, ԿԸՀ-ն հայտնել է, որ ԿԸՀ-ում առկա չեն պաշտոնապես ներկայացված տեղեկություններ ԸԸՀ անդամների այլ պաշտոնների/զբաղվածության մասին: Բացի այդ, ԿԸՀ-ն տեղեկացրել է, որ ԸԸՀ թեկնածուները ներկայացնում են ինքնակենսագրություն, սակայն «հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և հաշվի առնելով, որ նշված անձնական տվյալների փոխանցումը երրորդ անձանց կամ այլ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրելն օրենքով նախատեսված չէ, ինչպես նա առկա չէ հայցվող տեղեկատվության տվյալների սուբյեկտների կողմից՝ իրենց վերաբերյալ տվյալները երրորդ անձանց փոխանցելու համաձայնություն, վերոնշյալ անձնական տվյալները տրամադրվել չեն կարող»:

ԸԸՀ անդամների պաշտոնների համատեղելիության վերաբերյալ տեղեկատվության այսաստիճան փակ լինելը խնդիրներ է առաջացնում ընտրությունների թափանցիկության և ընտրական քարոզչության մեջ նրանց ներգրավման վերահսկելիության առումով:

«Ականատես»-ի դիտորդների սեփական դիտարկումներով հանձնաժողովներում չեն բացահայտվել անձինք, որոնք, օրենքի համաձայն, իրավունք չունեն լինել ընտրական հանձնաժողովի անդամ: Սակայն ուշագրավ է, որ մի շարք հանձնաժողովի անդամներ զուգահեռաբար զբաղեցրել են հանրային ծառայության այլ՝ այնպիսի պաշտոններ, որոնք կարող են նրանց մոտ առաջացնել շահերի բախման իրավիճակներ:

Մասնավորապես՝ Ավան վարչական շրջանը սպասարկող թիվ 1 ԸԸՀ անդամներից առնվազն 4-ը, Արաբկիրը սպասարկող թիվ 4 ԸԸՀ անդամներից առնվազն 5-ը, Աջափնյակը սպասարկող թիվ 6 ԸԸՀ անդամներից առնվազն 3-ը, Շենգավիթը սպասարկող թիվ 8 ԸԸՀ անդամներից առնվազն 3-ը հանդիսանում են համապատասխան վարչական շրջանների աշխատակիցներ: ԸԸՀ-ների այսօրինակ սերտաճումը վարչական շրջանների աշխատակազմերի հետ խնդրահարույց է:

Թեև նշված իրավիճակներում չեն խախտվում Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները, դրանք խնդրահարույց են ԸԸՀ-ների անկախության սկզբունքի ապահովման համատեքստում: Նմանատիպ համատեղումները վարչական ռեսուրսի չարաշահման որոշակի ռիսկեր են պարունակում ինչպե՛ս այդ հանրային ծառայողների՝ իրենց գործատուների/վերադասների կողմից ազդեցության ենթակա լինելու և անկախ դիրքորոշումներ դրսևորելու, այնպե՛ս էլ՝ իրենց ծառայության շրջանակում շահառու հանդիսացող քաղաքացիների վրա ազդեցություն գործելու հնարավորությունների առումով:

«Ականատես»-ի ներկայացուցչի՝ Ավան վարչական շրջանի աշխատակիցների հետ կապ հաստատելուց հետո նրա հետ հետադարձ կապվել է թիվ 1 ԸԸՀ նախագահ Արա Այվազյանը և առաջարկել վարչական շրջանի ներկայացուցիչների փոխարեն հանդիպել իր հետ և հարցերն ուղղել իրեն: Ընդ որում՝ տվյալ անձը միաժամանակ Ավան վարչական շրջանի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավարն է: Նման դեպք գրանցվել է նաև Էրեբունի վարչական շրջանում, երբ հերթական այցի ժամանակ թիվ 10 ԸԸՀ անդամներից մեկը դիտորդին առաջարկել է վարչական շրջանի աշխատակազմ չայցելել և միանգամից հարցերն ուղղել իրեն, քանի որ ինքն աշխատում է այնտեղ:

Առավել խնդրահարույց է թիվ 6 ԸԸՀ նախագահ Սոնա Սարգսյանի դեպքը, ով զբաղեցնում է ԿԸՀ ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնը: Ստացվում է, որ վերադաս հանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչը միաժամանակ պաշտոնավարել է ստորադաս հանձնաժողովում:

ԸԸՀ անդամների անկախությանն առնչվող մեկ այլ խնդրահարույց դրվագ է ԸԸՀ անդամի ներկայությունը կուսակցության շտաբում: Մասնավորապես, կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Քանաքեռ-Զեյթունի շտաբում դիտորդը աշխատանքային ժամին հանդիպել է թիվ 3 ԸԸՀ անդամ Բորիս Գրիգորյանին, ով միաժամանակ հանդիսանում է Ավան վարչական շրջանի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետը:

Աշխատանքային պայմաններ և հասանելիություն

ԸԸՀ աշխատանքային տարածքները և պայմանները շարունակում են խնդրահարույց լինել, ինչը չի նպաստում պատշաճ և արժանապատիվ գործունեության ապահովմանը:

Թիվ 2, 3, 7, 8 և 9 ԸԸՀ-ների դեպքում արձանագրվել են տարածքի դժվարամատչելիության խնդիրներ, մասնավորապես վերոնշյալ ԸԸՀ-ների շենքերի դիմաց չկան թեքահարթակներ և մուտքի աստիճանները շատ բարձր են:

Թիվ 3 և 8 ԸԸՀ-ներում գրանցվել են աշխատանքային պայմաններին առնչվող խնդիրներ: Այսպես՝ թիվ 3 ԸԸՀ-ն, որը տեղակայված է Դավիթ Անհաղթի 11 հասցեի 1-ին հարկում՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ նույն շենքում, ապահովված չէ բավարար օդափոխության պայմաններով, իսկ թիվ 1 արհեստագործական ուսումնարանի շենքում տեղակայված թիվ 8 ԸԸՀ-ի աշխատասենյակում չկա պատուհան, տարածքը չի օդափոխվում և զրկված է բնական լուսավորությունից, ինտերնետային կապը նորմալ չի գործում, բարվոք չէ սանհանգույցի սանիտարահիգիենիկ վիճակը: Ընդհանուր տեղանքը և աստիճանավանդակն անհարմար են. բազրիքներ և թեքահարթակ չկան: Սրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ նույն շենքի նիստերի և դասընթացների համար նախատեսված դահլիճը նորոգված է՝ կահավորված անհրաժեշտ գույքով և նոր տեխնիկայով, սակայն օդափոխման համակարգը բացակայում է:

Նիստեր

2023 թ. օգոստոսի 7-ից մինչև սեպտեմբերի 17-ը ընկած ժամանակահատվածում բոլոր 10 ԸԸՀ-ներում գումարվել է ընդամենը 40 նիստ, ընդունվել է 40 որոշում: Յուրաքանչյուր ԸԸՀ-ի համապատասխան Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) կազմերը հաստատելու մասին որոշումներում կատարվել են փոփոխություններ՝ պայմանավորված ՏԸՀ-ների մի շարք անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հանգամանքով:

ՀՀ ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն՝ ԸԸՀ-ն պետք է վերահսկի իր կողմից սպասարկվող տարածքում ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների կատարումը: Չնայած քարոզչանյութերի տարածման կանոնների խախտման ու վարչական ռեսուրսների օգտագործման բազմաթիվ դեպքերին որևէ ԸԸՀ-ի կողմից սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ չի հարուցվել:

Դիտորդները բոլոր 10 ԸԸՀ-ների հետ մշտապես գտնվել են կապի մեջ և ներկայացրել բանավոր ահազանգեր արգելված վայրերում փակցված քարոզչանյութերի և նկատված այլ խախտումների վերաբերյալ: ԸԸՀ-ների համագործակցությունը դիտորդների հետ մեծամասամբ գնահատվել է բաց և կառուցողական՝ առանց խոչընդոտների: Չսահմանված վայրում փակցված քարոզչանյութերը վերացվել են հիմնականում թիվ 8 և թիվ 9 ԸԸՀ-ների կողմից, թեև եղել են դեպքեր, երբ հեռացված քարոզչանյութերը կրկին հայտնվել են միևնույն արգելված վայրերում: Մյուս ԸԸՀ-ները համապատասխան քայլեր չեն ձեռնարկել:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ

Քվեարկության կազմակերպման նպատակով կազմավորվել է 475 ընտրական տեղամաս, որոնցում ներգրավված է եղել ՏԸՀ մոտ 3,800 անդամ:

ՏԸՀ-ների կազմ

ՏԸՀ-ների կազմում բոլոր տեղերի 65%-ը զբաղեցրել են կանայք, սակայն նախագահների միայն 40%-ն է եղել կին, իսկ քարտուղարների՝ 87%-ը:







ՏԸՀ անդամների վերապատրաստում

2023 թվականի սեպտեմբերի 2-ից մեկնարկել են ՏԸՀ անդամների վերապատրաստման դասընթացները: «Ականատես»-ի կողմից դիտարկվել է 40 դասընթաց: ՏԸՀ անդամների ուսուցման որակը դիտորդների կողմից մեծամասամբ գնահատվել է բարձր, իսկ ուսուցման կազմակերպվածությունը՝ միջինից բարձր: Դիտարկված խնդիրներն առավելաբար վերաբերել են ՏԸՀ անդամների՝ վերապատրաստումների հաճախելիությանը: Մասնավորապես, դիտարկված դասընթացներին, ընդհանուր առմամբ, մասնակցել է հանձնաժողովի 767 անդամ, որոնցից 180-ը ոչ լիարժեք են մասնակցել վերապատրաստմանը (ներկա չեն եղել ողջ ընթացքին):

Ընտրողների հաշվառում

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն Երևանի ավագանու ընտրություններին ընտրական իրավունք ունեցողների թվին են դասվում 18 տարին լրացած, մինչև քվեարկության օրը Երևանում առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև մեկ տարվա հաշվառում ունեցող ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք: Ըստ այդմ, 2023 թ. սեպտեմբերի 17-ի Երևանի ավագանու ընտրություններին ընտրական իրավունք ունեցողների թիվը 823,559 էր:



Երևանի ավագանու ընտրություններին մասնակցության իրավունքի առումով ՀՀ քաղաքացիների հաշվառման 6 ամիսը լրացել էր 2023 թ. մարտի 18-ին: «Ականատես»-ը հարցում է ուղարկել ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն՝ խնդրելով տրամադրել 2022 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. մարտի 18-ը ՀՀ մարզերից և Արցախի Հանրապետությունից Երևանի վարչական շրջաններում հաշվառում ստացածների մասին տվյալներ՝ ըստ եռամսյակների: Ծառայությունից պաշտոնապես ստացված տվյալների[1] վերլուծությունը վեր հանեց մի շարք անոմալիաներ, ինչպես օրինակ՝ ուռճացված տվյալներ որոշ վարչական շրջաններում կոնկրետ մարզերից տեղափոխված անձանց՝ տարվա առանձին եռամսյակներում ինտենսիվ հաշվառումների վերաբերյալ, ինչի վերաբերյալ «Ականատես»-ի կողմից եղան համապատասխան հրապարակումներ:

2023 թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը պաշտոնական նամակով պարզաբանեց, որ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգը սպասարկում է մի կապալառու կազմակերպություն, որի կողմից «թույլ է տրվել տեխնիկական վրիպակ՝ մարզերի անվանումների հերթական դասավորության պատճառով կատարվել է քանակների սխալ տեղաշարժ, որի արդյունքում ստացվել է մարզերի և քանակների միջև անհամապատասխանություն»: Միաժամանակ, «Ականատես»-ին տրամադրվեցին վերոնշյալ

[1] Տվյալները ներառում են նաև մինչև 18 տարեկան անձանց:

հարցման պատասխան հանդիսացող ճշգրտված տվյալները, որոնց վերլուծությունը որևէ տեսանելի խնդիր այլևս չբացահայտեց:

Խնդրահարույց հասցեներ

«Ականատեսն» ուսումնասիրել է Երևանի ավագանու ընտրությունների նախաշեմին www.police.am կայքում օրենքի պահանջով քվեարկության օրվանից 40 օր առաջ հրապարակված ընտրողների ցուցակը: Մասնավորապես՝ ուշադրության կենտրոնում են եղել առավել մեծաքանակ ընտրողներ ունեցող 50 հասցեները, որտեղ հաշվառված է եղել, ընդհանուր առմամբ, 3,829 ընտրող, այսինքն՝ մեկ հասցեում միջինում մոտ 76 ընտրող: Այս հասցեներում փաստացի հաշվառված ընտրողների թիվը տատանվել է 42-ից մինչև 217 ընտրող:

Ամենաշատ նման հասցեները՝ թվով 10-ը, գտնվել են Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում, ամենաքիչը՝ 2-ական՝ Արաբկիրում և Աջափնյակում: Ամենաշատ ընտրող (թվով 217) ունեցող հասցեն գտնվել է Քանաքեռ-Զեյթունի տարածքում: Ուշագրավ է, որ Քանաքեռ-Զեյթունի դիտարկված 6 հասցեների դեպքում մեկ հասցեում գրանցված է եղել միջինում 97 ընտրող: Այս ցուցանիշով Քանաքեռ-Զեյթունը զիջել է միայն Ավանին, որտեղ 4 հասցեների պարագայում մեկ հասցեում բնակվել է միջինում մոտ 118 ընտրող:

Վարչական շրջան	50-ից ավել ընտրող ունեցող հասցեների քանակ	Գրանցված ընտրողների ընդհանուր թիվ	1 հասցեում ընտրողների միջին թիվ
Աջափնյակ	2	94	47
Արաբկիր	2	106	53
Դավթաշեն	3	192	85.93
Նոր Նորք	3	207	68.25
Ավան	4	475	118.75
Էրեբունի և Նուբարաշեն	5	326	65.2
Քանաքեռ-Զեյթուն	6	584	97.33
Մալաթիա-Սեբաստիա	7	658	89.75
Շենգավիթ	8	126	87.9
Կենտրոն և Նորք-Մարաշ	10	570	78.86
Ընդամենը	**50**	**3829**	**76**

«Ականատես»-ի դիտորդների կողմից տվյալ 50 հասցեներում իրավիճակի փաստացի ստուգումը ցույց է տվել, որ որոշ հասցեներում առկա են խնամքի/առողջության կենտրոններ և հանրակացաններ, ինչով պայմանավորված կարող էին և լինել մանրամասն հասցեավորում իրականացնելու բարդություններ: Առկա են եղել նաև հասցեներ, որտեղ, ըստ բնակիչների, հաշվառումն արվել է, օրինակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ կենցաղային ինչ-ինչ խնդիրներ լուծելու նպատակով: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի, մասնագիտացված խանութի և ֆուտբոլային ակումբի հասցեներում մեծաքանակ ընտրողների առկայությունը բացատրվել է արտասահմանից հրավիրված ֆուտբոլիստների հաշվառման անհրաժեշտությամբ:

Այդուհանդերձ, որոշ դեպքերում ընտրողների կասկածելի մեծ քանակների մասին ողջամիտ հիմնավորում չի եղել: Օրինակ՝

- Մալյան նրբ. 4-34 հասցեում, որը Նորքի գերեզմանատան հասցեն է, գրանցված է եղել 159 ընտրող:
- Շիրակի Օժ. Տնտ. 447, Օդանավակայան 50 և Թաիրովի փ. 46 հասցեներում, որոնք ամայի և բնակության ոչ ենթակա տարածքներ են, համապատասխանաբար, գրանցված են եղել 71, 66, 171 ընտրողներ:

Հարկ է նշել, որ առանձին հասցեներում մեծաքանակ ընտրողների հաշվառման խնդիրը դիտորդական կազմակերպությունների կողմից բարձրաձայնվել է 2012 թվականից ի վեր՝ բոլոր համապետական ընտրությունների ժամանակ, սակայն ՀՀ ոստիկանության կողմից, փաստորեն, պատշաճ լուծում չի տրվել մինչ օրս:

3. Ընտրարշավ

Ընդհանուր միջավայր

«Ականատես»-ի դիտորդները հանդիպել են վարչական շրջանների բնակիչների հետ: Տեղի է ունեցել մոտ 310 հանդիպում, որոնց մասնակցել է մոտ 563 անձ: Ըստ ստացված տվյալների, բնակիչները հիմնականում բողոքել են բակերի անբարեկարգ վիճակից, կանաչապատ տարածքների բացակայությունից, աղբահանությունից: Երևանի բնակիչները դժգոհել են, որ ամեն անգամ ընտրություններից առաջ եղել են խոստումներ, սակայն հետագայում ոչ մի նորմալ ծրագիր չի իրականացվել ու նրանք «հույս էլ չունեն, որ այս ընտրություններից հետո էական որևէ բան կփոխվի»: Այս ապատիան, հնարավոր է, որ հետագայում իր ուղիղ ազդեցությունն ունեցավ քվեարկության օրվա մասնակցության վրա:

Ըստ բնակիչների, քարոզարշավը հիմնականում ընթացել է հանգիստ և հանդարտ: Այդուհանդերձ նաև որոշակի հանգամանքներ, որոնք լարվածություն են ստեղծել նախընտրական պայքարում, մասնավորապես՝ սահմանային անվտանգության սպառնալիքները, ապատեղեկատվությունը, կեղծ օգտատերերի և էջերի միջոցով իրականացվող հակաքարոզչությունը և վիրավորանքը, միմյանց՝ արդեն սովորական դարձած պիտակավորումը: Նրանցից շատերը նաև անհանգստացած են եղել ընտրապայքարի ընթացքում կիրառվող վարչական ռեսուրսի մեծ ծավալներով և ընդգծել, որ նախընտրական

ժամանակահատվածում աննախադեպ քանակով աճ գրանցած բարեկարգումներն ու շինարարական աշխատանքները դրա վառ վկայությունն են:

Կուսակցությունների/դաշինքի ընտրական ցուցակներ

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել և գրանցվել 13 կուսակցություն և մեկ դաշինք՝ ընդհանուր 807 ավագանու թեկնածուներով (առկա շուրջ 800,000 ընտրողի պարագայում՝ մեկ թեկնածու յուրաքանչյուր 1,000 ընտրողից):

Ընտրական օրենսգրքի համաձայն 65 անդամ ունեցող ավագանու դեպքում կուսակցության/դաշինքի ընտրական ցուցակում կարող է լինել առավելագույնը 195 թեկնածու, իսկ նվազագույնը՝ 22: Առավելագույն շեմից 14-ով պակաս՝ 181 թեկնածու է ներկայացրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Հաջորդել են «Ապրելու երկիրը»՝ 129, «Ազգային առաջընթացը»՝ 70 և «Հանրապետությունը»՝ 68 թեկնածուներով: Ամենաքիչը՝ 24-ական, այսինքն՝ նվազագույնից 2-ով ավել, թեկնածու ներկայացրել են «Հաղթանակ» և «Հայաստանի եվրոպական կուսակցություն» կուսակցությունները:



Ընտրական ցուցակներում սեռերի ներկայացվածություն

ՀՀ ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կուսակցության (դաշինքի) և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70%-ը[2]: Սակայն, փոքրամասնություն կազմող սեռի ներկայացուցիչների ինքնաբացարկի դեպքում տվյալ հարցը չի կարգավորվում, ինչը կարող է փոխել սեռերի ներկայացվածության պատկերը մանդատների բաշխման փուլում:

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ընդհանուր ցուցակներում տղամարդիկ կազմել են շուրջ 61%, իսկ կանայք՝ 39%: Վերջիններիս ներգրավումը, ինչպես նաև տեղաբաշխումը առանձին կուսակցությունների և դաշինքի ցուցակներում որոշակիորեն ցույց է տալիս, թե որքանով է ձևական եղել նրանց ներառումը:

Սեռերի բաշխվածության համաչափությունը ամենաշատը խախտված է եղել «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակում, որտեղ տղամարդկանց բաժինը 67.14% է, իսկ կանանցը՝ 32.86%: Համեմատաբար համաչափ բաշխվածություն առկա է եղել 14 ուժերից 4-ի՝ «Ուժը հայրենյաց», «Հանուն սոցիալական արդարության», «Ապրելու երկիր» կուսակցությունների և «Մայր Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակներում, ընդ որում՝ դրանց եռյակ համարներում (1-3, 4-6, 7-9 և այլն) կանայք զբաղեցրել են բարձր տեղեր: Մյուս կուսակցություններում կանայք հիմնականում ներկայացված են եղել ամեն եռյակի երրորդ համարում, ինչը հուշում է, որ կանանց ներկայացվածությունն ապահովված է ընդամենը օրենքի ձևական պահանջը պահպանելու նպատակով:



[2] ՀՀ-ում բնակչության 52.7%-ը կանայք են: ՀՀ վիճակագրական կոմիտե՝ Մշտական բնակչության թվաքանակը https://armstat.am/am/?nid=12&id=19001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC; Մշտական բնակչության թվաքանակը. կանայք https://armstat.am/am/?nid=12&id=19003&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

«Ուժը հայրենյաց» կուսակցությունը միակն է, որի ցուցակում կանայք գերակշռել են: Եվ միայն երկուսի՝ «Ուժը հայրենյաց» և «Ապրելու երկիր» կուսակցությունների ցուցակն են գլխավորել կանայք:

Կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուներ

Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն կուսակցության (դաշինքի) ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցություններից ոչ մեկի) անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել այդ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30%-ը:

Կուսակցության անդամ հանդիսացող թեկնածուները քաղաքական ուժերի ընդհանուր ընտրական ցուցակներում կազմել են մոտ 79.4, իսկ անդամ չհանդիսացողները՝ 20.5%:

Կուսակցության թեկնածուներով ամենից շատ համալրված ընտրական ցուցակը «Հայաստանի եվրոպական կուսակցությանն» էր, որին հաջորդել են «Ուժը հայրենյաց» և «Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունները: Կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուներով առավել հագեցած է եղել «Ազգային առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակը:



«Հանրային ձայն» կուսակցության ընտրական ցուցակում տվյալ կուսակցության անդամ չհանդիսացող անձինք կազմել են 23.91%, սակայն տվյալ ցուցակում ներկայացված է եղել մեկ այլ՝ «Այլանս» կուսակցությունը, որի ներկայացուցիչները զբաղեցրել են ցուցակի 2-րդ, 9-րդ, 11-րդ տեղերը: «Այլանս» կուսակցության ղեկավար Տիգրան Ուլիխանյանը (ցուցակում՝ 2-րդը) պարբերաբար հանդես է եկել Երևանի ավագանու ընտրություններին երկու կուսակցությունների համատեղ հանդես գալու վերաբերյալ հայտարարություններով[3]: Այսինքն, «Հանրային ձայն» և «Այլանս» կուսակցությունները ֆորմալ առումով դաշինք չեն ձևավորել, սակայն Երևանի ավագանու ընտրություններին մասնակցել են կուսակցությունների դաշինքի տրամաբանությամբ: Արդյունքում, նրանք հնարավորություն են ստացել մրցակցել ավելի նպաստավոր պայմաններում՝ դաշինքների համար սահմանված անցողիկ 6% շեմը հաղթահարելու փոխարեն խնդիր ունենալով հաղթահարել կուսակցությունների համար սահմանված 4%-ը:

«Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակում կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուների թիվը որոշակի փուլում անցնել է օրենքով թույլատրելի առավելագույն շեմը՝ 30%-ը, ինչը տեղի է ունեցել երկու կուսակցական թեկնածուների ինքնաբացարկի դիմումների ներկայացման արդյունքում:

Մասնակից քաղաքական ուժերի ընտրական ցուցակների ձևավորման և հաստատման ընթացակարգերի, դրանց կազմավորման սկզբունքների ու չափանիշների, ինչպես նաև ներկուսակցական ժողովրդավարության մեխանիզմների պարզաբանման նպատակով «Ականատես»-ը հարցում է ուղարկել մասնակից բոլոր ուժերին: Բացի «Հայաստանի եվրոպական կուսակցությունից» որևէ քաղաքական ուժից պատասխան չի ստացվել: Սա խնդրահարույց է, մասնավորապես, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստացող «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» կուսակցությունների պարագայում, որոնք, փաստորեն, խախտել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջը:

[3] *«Քննարկում ենք Երևանի ընտրություններին ներկայացվելիք ընտրական ցուցակը: Ի դեպ, տարբեր տեղերից մեսիջներ ուղարկող ու զգուշացնողների համար՝ պարտադիր Այլանսով Հանրային ձայնի հետ, պարտադիր միակ իրական ընդդիմադիր դաշինքով ու ինչքան էլ որ փորձեք "պռավալ" տալ, Վարդան Ղուկասյանը այդ ընտրություններին մասնակցելու է: Այո ընտրությունները մայրաքաղաքում լինելու են թուրքերի ու հայերի միջև և այո՛, մեր միակ հիմնական խոստումը ՔՊ-ն Երևանից դուրս շպրտելն ու ամբողջական իշխանափոխություն անելն է:»,* https://www.facebook.com/UrikhanyanTigran/posts/pfbid034LWhRfsJpouXcJXCSiU5KJJ7ihH5YBMsPyYQXmj6qCpuea6ffndtJqKs8bEEpDv8l. *«..Որոշում է կայացվել մասնակցելու Երևանի ընտրություններին: Որպես Այլանս կուսակցության ղեկավար՝ երկար քննարկումներ եմ ունեցել «Հանրային ձայն» կուսակցության նախագահ, քաղաքական հետապնդման ենթարկվող Արտակ Գալստյանի հետ: Ունենք մեկ ընդհանուր գաղափար՝... ձևավորել լայն դաշինք և վռնդել իշխանություն կոչվածներին ...»,* https://mediahub.am/post/989a9e0468cbcab9?fbclid=IwAR1az1zxXOlU2X1v-69atWVHM-lwgPIJpmpt4WRHn0lTx1nvgecLIdZAIs0

Նախընտրական ծրագրեր

«Ականատես»-ի նախաձեռնությամբ Երևան քաղաքի կառավարման հարցերով շահագրգիռ քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ համատեղ 45 հարց էին ուղղել Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին՝ ակնկալելով, որ հարցերի միջոցով ներկայացվող խնդիրներն ու դրանց համար առաջարկվող լուծումները կարտացոլվեն նրանց նախընտրական ծրագրերում:

45 հարց Երևանի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին[1]

Հարցեր[2]	1 ՀՁ	2 ԲՊ	3 ԱՀ	4 Հ	5 ՈՒՀ	6 ՀԵ	7 ԱԱ	8 ՀՍԱ	9 ՀԿ	10 ՄՀԿ	11 ԼՀ	12 ԺՀ	13 ԱԵ	14 ՍՀՊ
1. Քաղաքի պլանավորման փոխում, համաչափ զարգացում	0	2.2	1.0		0.8	1.8	3.2	0	0	1.0	1.0		2.2	0.2
2. Հանրային գերակա շահի բացառիկության ապահովում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
3. Գլխավոր պլանի/հատակագծի պահպանում	0.6	0	1.4		1.2	0.8	1.6	0	0.6	0.8	0		2.4	0
4. Պատմամշակութային շենքերի վերականգնում	0	0	0.4		0	0	0	0	0.8	0	0		0	0
5. Պատմամշակութային միջավայրի վերականգնում	0	0.2	1.0		0	0	0	0	1.6	0	0		1.4	0.2
6. Նորահայտ հուշարձանների պահպանում	0	0	1.0		0	0	0	0	1.0	0	0		1.0	0
7. Հուշարձանների ցանկի ընդլայնում	0	0	0.4		0.6	0	1.2	0	0	0	0		1.8	0
8. Կանաչ տարածքների՝ շինություններից մաքրում	0.6	0.4	1.4		1.8	0.8	3.8	0.2	1.0	1.6	0		3.2	1.2
9. Քաղաքը շրջապատող լանջերի կանաչի վերականգնում	1.2	2.2	0		1.8	0	0.2	0	0	0	1.4		3.0	0
10. Նոր կանաչ գոտիների ստեղծում	0.8	1.8	0.6		1.4	0	3.4	0	1.6	0	0		2.8	0
11. Մասնավոր փոխադրամիջոցների քանակի նվազեցում	0.8	1.4	2.2		1.0	2.6	0	1.0	2.8	0	1.2		0	0
12. Հանրային տրանսպորտի մատչելիության ապահովում	0.2	1.0	0		1.0	1.4	1.6	1.8	1.2	1.2	0		2.6	1.2
13. Հանրային տրանսպորտի կազմակերպում	1.6	2.8	1.8		1.2	0	3.0	0	2.0	0	0		3.4	1.6
14. Գլխ. պլանով նախատեսված ճոպանուղու և մետրոյի կառուցում	0	2.0	1.2		0	2.6	0	1.6	1.6	0	0		3.0	0
15. Մասնավոր տաքսիների հաշվիչների, աղմուկի կարգավորում	0.6	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
16. Հեծանվուղիների ավելացում	1.2	1.0	0		2.2	0	1.0	0	2.0	1.2	0		2.8	0
17. Կայանատեղիների կազմակերպում	2.0	0	1.4		0	0	0	1.2	0	1.4	1.8		2.2	1.2
18. Մթնոլորտային արտանետումների նվազեցում	2.0	2.4	0		2.2	1.2	0	0	1.8	0.8	0		2.2	0.2
19. Մանկապարտեզների ապահովում	1.0	3.8	0		1.8	0	1.0	1.2	1.4	1.2	0		2.2	0.2
20. Պոլիկլինիկաների սպասարկման կարգավորում	1.2	2.0	1.4		1.8	0	3.0	1.2	1.4	1.0	0		3.0	0.8
21. Բազմաբնակարան շենքերի խնդիրների լուծում	0	1.6	0		0.8	0	2.6	0	1.2	0.2	0.8		1.0	0
22. Գերեզմանների մակերեսի ընդլայնման կանխում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
23. Գերեզմանատների կառավարում, բարեկարգում	0.6	0	0.6		0	0	0	0	0	0	0		2.0	0
24. Այցելու չունեցող գերեզմանների խնամք	0.6	0	0		0	0	0	0	0	0	0		0	0

25. Աղբոտման/աղտոտման կանխարգելում	1.4	0	0.8		2.6	1.0	2.8	0.4	0.4	0	0		0	0
26. Քաղաքի մաքրման համակարգի կազմակերպում	1.4	0.4	0		0	1.2	3.2	0	1.8	0	1.6		3.2	1.4
27. Աղբի տարանջատում, վերամշակում	0	2.2	0.2		0	0	0.6	0	1.6	0	0		0	1.2
28. Պատշաճ ստանդարտներով աղբավայրի ապահովում	2.4	1.6	1.4		0	0.8	2.4	0	1.0	0.8	0		1.6	0.2
29. Թափառող կենդանիների հարցի կարգավորում	1,6	1.8	1.8		0	2.6	0	0	1.2	0	0		2.0	0
30. Տնային կենդանիների պատասխանատու խնամքի խթանում	0	2.6	0		0	0	0	0.8	0	0	0		1.8	0
31. Պատասխանատու ընդերքօգտագործման խթանում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
32. Հանքարդյունաբերության արդյունքում ծագած խնդիրների լուծում	0	0	0		0	0	0	1.0	0	0	0		0	0
33. Լքված հանքերի ռեկուլտիվացիայի ապահովում	0	0.2	0		0	0	0	0	0	0	0		0	0
34. Գնումների մրցակցայնության ապահովում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
35. Կոռուպցիայի արդյունքում ընդունված որոշումների վերանայում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
36. Կապալառուների ընտրության չափանիշների խստացում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
37. Մասնավորից բարեգործության ընդունում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
38. Լեզվաքաղաքականության իրականացում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
39. Պաշտոնյաների և ծառայողների բարեվարքության ապահովում	1.2	0	1.6		0	0	0	0	0	0	0		0	0
40. Պաշտոնյաների կամայականությունների բացահայտում	0.2	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
41. Ավագանու ծախսերի հաշվետվողականության ապահովում	0	0	2.0		0	0	0	0	0	0	0		0	0
42. Քաղաքապետարանի հաշվետվողականության ապահովում	0	0	0		0	1.4	0	0	0	0	0		0	1.2
43. Քաղ.շին. գործընթացում հանրային մասնակցության ապահովում	0	0	0		2.4	1.0	3.0	0	1.4	2.0	0		1.2	2.2
44. Ավագանու աշխատանքներին հանր. մասնակցության ապահովում	0	0	0		0	0	0	0	0	0	0		0	0
45. Միջազգային լավագույն փորձի որդեգրում	0	0.2	0		0	0	0.2	0	0	0	0		0	0

[1] Աղյուսակի տողերում ներկայացված են հասարակական կազմակերպությունների կողմից Երևանի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին տրված հարցերը, իսկ սյուներում՝ վերջիններիս հերթական համարները. N 1«Հանրային ձայն» կուսակցություն, N2 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, N3 «Արդար Հայաստան» կուսակցություն, N4 «Հաղթանակ» կուսակցություն, N5 «Ուժը հայրենյաց» կուսակցություն, N6 «Հայաստանի եվրոպական կուսակցություն, N7 «Ազգային առաջընթաց» կուսակցություն, N8 «Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն, N9 «Հանրապետություն» կուսակցություն, N 10 «Միացյալ Հայաստան» կուսակցություն, N11 «Լուսավոր Հայաստան» կուսակցություն, N12 «Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն, N13 «Ապրելու երկիր» կուսակցություն, N14 «Մայր Հայաստան» դաշինք:

[2] Սրցակցող կուսակցություններին մեկ դաշինքի ծրագրերը (բացառությամբ՝ N4 «Հաղթանակ» կուսակցության և N12 «Ժողովրդավարական Համախմբում» կուսակցության, որոնք ծրագրեր չեն ներկայացրել) նշված ոլորտների միջոցառումների տեսանկյունից գնահատվել են 5 անկախ փորձագետների (2 քաղաքաշինության, 1 շրջակա միջավայրի, 1 տեղական ինքնակառավարման փորձագետներ և 1 սոցիոլոգ) խմբի կողմից՝ 0-4 սանդղակով, որտեղ 0 - որևէ անդրադարձ չկա, 1 - կա թռուցիկ հիշատակում, 2 - ներկայացված է համառոտ առաջարկ, որը սակայն ռելեվանտ չի, չի լուծելու առկա խնդիրները, 3 - ներկայացված է լուծման համառոտ առաջարկ, որը զարգացնելու պարագայում հնարավոր է լուծի առկա խնդիրները, 4 - ներկայացված է մանրամասն և պատշաճ լուծում: Աղյուսակի վանդակների գունավորումները համապատասխանում են միջինացված միավորների միջակայքերին՝ 0, 0-0.9. 1.0-1.9, 2.0-2.9, 3.0-4.0:

Քաղաքական ուժերից միայն մեկի՝ «Լուսավոր Հայաստան»-ի ներկայացուցիչ Դավիթ Խաժակյանն է բանավոր արձագանքել հասարակական կառույցների առաջարկներին: Մյուսներից պատասխան չի ստացվել:

Նախընտրական ծրագիր ունենալու պարտադիր օրենսդրական պահանջի բացակայության պայմաններում «Հաղթանակ» և «Ժողովրդավարական համախմբում» կուսակցություններն առհասարակ չեն ներկայացրել ծրագիր: Մյուս քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերն ուսումնասիրվել են անկախ փորձագետների խմբի կողմից՝[4] վեր հանելու դրանցում 45 հարցերի արտացոլումը:

[4] Ծրագրերը գնահատվել են 5 անկախ փորձագետների (ոլորտները՝ քաղաքաշինություն, էկոլոգիա, սոցիոլոգիա, տեղական ինքնակառավարում) կողմից 0-4 սանդղակով, որտեղ՝ 0-ն նշանակում է, որ որևէ անդրադարձ չկա, 1-ը՝ կա թռուցիկ հիշատակում, 2-ը՝ներկայացված է համառոտ առաջարկ, որը սակայն ռելեվանտ չի, չի լուծելու առկա խնդիրները, 3-ը՝ ներկայացված է լուծման համառոտ առաջարկ, որը զարգացնելու պարագայում հնարավոր է լուծի առկա խնդիրները, և 4-ը՝ ներկայացված է մանրամասն և պատշաճ լուծում:

Նախընտրական շտաբներ

«Ականատես»-ը հարցում է ուղարկել Երևանի ավագանու ընտրություններում մրցակցող քաղաքական ուժերին՝ պարզելու նրանց գործող և ընտրությունների շրջանակներում ստեղծված ընտրական շտաբների հասցեները և յուրաքանչյուր շտաբի տարածքի նկատմամբ ունեցած իրավունքի տեսակը (սեփականություն, վարձակալություն, անհատույց օգտագործում և այլն), սակայն որևէ քաղաքական ուժից պատասխան չի ստացել: Այդպիսով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստացող «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» կուսակցությունները խախտել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջը, քանի որ վերջինի համաձայն, ի թիվս այլոց, տեղեկատվություն տնօրինող են հանդիսանում բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները:

Դիտարկման ժամանակահատվածում դիտորդներն այցելել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքի 82 շտաբ և հավաքագրել տեղեկություններ ընտրական գործընթացներում նկատված խնդիրների, շտաբների տարածքի, աշխատակիցների մասին: Բացի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Շենգավիթում և Մալաթիայում գտնվող 10 շտաբներից՝ մնացած բոլոր դեպքերում հնարավոր է եղել կազմակերպել հարցազրույցներ շտաբների համակարգողների հետ և ստանալ բավարար տեղեկատվություն:

Նախընտրական քարոզչություն

ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին և դաշինքներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու որոշակի կանոններ, որոնք, նաև Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածին համապատասխան, սահմանափակում են վարչական ռեսուրսի օգտագործումը:

Երևան քաղաքի ավագանու 2023 թ. սեպտեմբերի 17-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածը, օրենքի համաձայն, սկսվել է 2023 թ. օգոստոսի 23-ին և ավարտվել սեպտեմբերի 15-ին, ժամը 24:00-ին:

Նախընտրական քարոզչության շրջանում «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդները մասնակցել են շուրջ 110 նախընտրական միջոցառումների, ունեցել են 32 հանդիպում՝ վարչական շրջանների ներկայացուցիչների, 35 հանդիպում՝ ոստիկանության, ԶԼՄ ներկայացուցիչների և տեղական դիտորդների հետ:

Նախընտրական քարոզչական գործիքների կիրառում

Քարոզարշավի ընթացքում մրցակից ուժերն օգտագործել են բազմազան ձևաչափեր: Առավել ակտիվ ու նկատելի է եղել «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու երկիր» կուսակցությունների, առավել պասիվ ու աննկատ՝ «Հայաստանի եվրոպական կուսակցության» քարոզարշավները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ	ԿԻՐԱՌՎՈՂ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ										
	Հանրա-հավաք	Քայլերթ	Բակային հանդի-պումներ	Ավտո-երթեր	Հանրային քննարկում	Գովազ-դային վահանակ	Պաստառ/ թռուցիկ/ բուկլետ	Համացան-ցային գովազդ	Ասոցացվող քարոզչա-նյութեր	Վճարովի եթերա-ժամանակ	Անվճար եթերա-ժամանակ
1. Հանրային ձայն			x			x	x	x			x
2. Քաղաքացիական պայմանագիր	x	x	x			x	x	x	x	x	x
3. Արդար Հայաստան			x			x	x				x
4. Հաղթանակ			x			x	x				x
5. Ուժը հայրենյաց			x	x		x	x	x	x		x
6. Հայաստանի եվրոպական կուսակցություն						x					x
7. Ազգային առաջընթաց			x			x	x	x		x	x
8. Հանուն սոցիալական արդարության			x	x		x	x				x
9. Հանրապետություն	x		x			x	x	x		x	x
10. Միացյալ Հայաստան			x			x	x			x	x
11. Լուսավոր Հայաստան			x			x	x			x	x
12. Ժողովրդավարական համախմբում			x			x	x				x
13. Ապրելու երկիր		x	x		x	x	x	x	x	x	x
14. Մայր Հայաստան	x	x	x			x	x	x		x	x

Քարոզչության ծախսեր

ԿԸՀ կայքի ՎՎԾ բաժնում կուսակցությունների/դաշինքի նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի վերլուծությունից երևում է, որ դրանց նախընտրական հիմնադրամներ մուտք է եղել ընդամենը 563 միլիոն ՀՀ դրամ, իսկ փաստացի ծախսերը կազմել են ընդամենը 557 միլիոն ՀՀ դրամ: Ամենաշատը դրամական մուտք և ծախս հայտարարագրել է «Քաղաքացիական պայմանագիրը»՝ մոտ 299 մլն ՀՀ դրամ, ընդհանուրի կեսից ավելին: Մնացած բոլոր քաղաքական ուժերի համատեղ հայտարարագրած մուտքերի և ծախսերի հանրագումարը շուրջ 40 մլն ՀՀ դրամով պակաս է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մուտքերից և ծախսերից: «Հայաստանի եվրոպական կուսակցությունը» ներկայացրել է զրոյական հայտարարագիր:

Քաղաքական ուժ	Նախընտրական հիմնադրամի մուտքեր (ՀՀ դրամ)	Նախընտրական հիմնադրամի ծախսեր (ՀՀ դրամ)
Հանրային ձայն	5,041,100.0	5,035,560.0
Քաղաքացիական պայմանագիր	299,377,440.0	298,618,899.0
Արդար Հայաստան	4,610,000.0	4,104,600.0
Հաղթանակ	950,000.0	928,200.0
Ուժը հայրենյաց	32,400,000.0	32,389,600.0
Հայաստանի եվրոպական կուսակցություն	0	0
Ազգային առաջընթաց	10,432,500.0	9,114,144.0
Հանուն սոցիալական արդարության	250.000	230.000
Հանրապետություն	32,972,600.0	32,972,600.0
Միացյալ Հայաստան	6,980,000.0	6,924,820.0
Լուսավոր Հայաստան	14,700,000.0	14,698,433.0
Ժողովրդավարական համախմբում	11,350,000.0	11,333,840.0
Ապրելու երկիր	91,093,000.0	88,414,110.0
Մայր Հայաստան	52,409,500.0	52,105,576.0
Ընդամենը	**562,566,140.0**	**556,870,382.0**
Միջինը	**40,183,295**	**39,776,455**

Համադրելով յուրաքանչյուր քաղաքական ուժի կատարած ծախսերը և ստացված քվեները՝ պարզվում է, որ մեկ քվեի համար քաղաքական ուժերը համատեղ ծախսել են միջինում 3,747 ՀՀ դրամ: Առավելագույն գումարը ծախսվել է «Ուժը հայրենյաց» կուսակցության (մեկ քվեն՝ մոտ 19,000 ՀՀ դրամ) և «Ապրելու երկիր» կուսակցության (մեկ քվեն՝ մոտ 10,500 ՀՀ դրամ) կողմից:

Կարևոր է արձանագրել, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությանը նպաստել է նաև վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից կատարված հատկացումները, առնվազն՝ բազմաբնակարան շենքերի

վերելակների արդիականացման, ճանապարհների նորոգման, հանգստի գոտիների և այգիների կառուցման և նորոգման և այլ բարեկարգման նպատակով:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	224.5
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	3957.2
«ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1581.7
«ՀԱՂԹԱՆԱԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	252.1
«ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	18985.7
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0.0
ԱՋԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	208.3
«ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	294.9
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1256.8
ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ	5401.6
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	3521.4
«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	4827.01
«ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	10494.26
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	1457.95
ՄԻՋԻՆ	3747.4

Միաժամանակ, այսպիսի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքական ուժերի կողմից ներդրված ջանքերն ու ֆինանսական ռեսուրսները չեն արդարացրել սպասելիքները, և ընտրողների կողմնորոշումները պայմանավորված են եղել այլ գործոններով:

Քարոզչանյութերի համար սահմանված կանոնների խախտումներ

Նկատվել են քարոզչանյութերի տարածման համար սահմանված կանոնների բազմաթիվ խախտումներ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դեպքում բացահայտվել է 30 դեպք, երբ քարոզչանյութերի վրա բացակայել են տպաքանակի և տպարանի վերաբերյալ տվյալները: Համանման 26 դեպք բացահայտվել է «Ուժը հայրենյաց» և 24 դեպք՝ «Ապրելու երկիր» կուսակցությունների պարագայում:

«Հանուն սոցիալական արդարության» կուսակցության բուկլետների վրա ևս նշում չի եղել տպարանի և տպաքանակի վերաբերյալ: «Միացյալ Հայաստան» դաշինքի և «Ուժը հայրենյաց» կուսակցության բուկլետների վրա նշված է եղել տպաքանակը, սակայն բացակայել է տպարանի վերաբերյալ նշումը: Նկատվել է 5 դեպք, որտեղ «Մայր Հայաստան» դաշինքի պաստառների վրա բացակայել են տպարանի և տպաքանակի վերաբերյալ տվյալները:

Քարոզչանյութերի տարածման կանոնների խախտումներ

Քարոզչանյութերի համար համայնքի կողմից հատկացված անվճար վայրերում ճնշող մեծամասնությամբ փակցվել են «Ապրելու երկիր» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների պաստառները, ընդ որում, երբեմն դրանք ծածկել են ամբողջ տարածքը՝ չթողնելով որևէ այլ քարոզչանյութ փակցնելու հնարավորություն:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է արտաքին գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունների՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար քարոզչանյութերի տեղադրման ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ ապահովելու պարտականությունը, սակայն հռչակագրային բնույթ ունի և գործնականում պատշաճ չի կիրարկվում: Քաղաքի տարբեր հատվածներում նկատվել է առանձին կուսակցությունների և թեկնածուների վճարովի հիմունքներով տեղադրվող քարոզչական պաստառների գերկենտրոնացում, երբեմն՝ ասոցացվող նյութերի համադրմամբ: Գերկենտրոնացում ամենից հաճախ արձանագրվել է «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր» և «Ուժը հայրենյաց» կուսակցությունների քարոզչանյութերի դեպքում, հիմնականում՝ Կենտրոն և Արաբկիր վարչական շրջանների տարածքում: Օրինակ՝ Հրազդան մարզադաշտի հարևանությամբ՝ դեպի Բրազիլիայի հրապարակ տանող ճանապարհի աջ հատվածում գովազդվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 20 վահանակներ, իսկ շրջակայքում որևէ այլ կուսակցության քարոզչանյութ առկա չի եղել:

Միևնույն 3 կուսակցությունների պարագայում բազմաթիվ են եղել նաև քարոզչանյութերի՝ արգելված վայրերում տարածման դեպքերը: Այսպես, «Քաղաքացիական պայմանագրի» կուսակցության պարագայում դիտորդների կողմից արձանագրվել է 55, «Ապրելու երկիր» կուսակցության դեպքում՝ 43, իսկ «Ուժը հայրենյաց»-ի դեպքում՝ 33 նման դեպք: Արգելված վայրերում քարոզչանյութերի փակցման 4-5 դեպք արձանագրվել է «Հանրապետություն», «Ժողովրդավարական համախմբում», «Արդար Հայաստան», «Ազգային առաջընթաց» կուսակցությունների և «Միացյալ Հայաստան» դաշինքի դեպքում: Հիմնականում այդպիսի նյութեր նկատվել են բազմաբնակարան շենքերի, շքամուտքերի ներքին և արտաքին հատվածների, մթերային խանութների, կրպակների և առևտրային օբյեկտների, սյուների վրա:

ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախընտրական քարոզչությունը սկսելուց 10 օր առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնել (բացառությամբ հանրակրթական դպրոցների)՝ սահմանելով այնպիսի պայմաններ, որոնք համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար կապահովեն հավասար հնարավորություններ (հավասար մակերես): 10,000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի տվյալ որոշումը ներկայացվում է ԿԸՀ, և այդ տեղեկատվությունը հրապարակվում է ԿԸՀ կայքում:

«Ականատես»-ի արձանագրած խախտումները վկայում են այն մասին, որ գործնականում առկա չէ մեթոդաբանություն, որը կապահովի նշված դրույթի պահպանումը՝ հավասար հնարավորությունների (հավասար մակերես) ապահովման համատեքստում, ինչպես նաև առկա չեն այս պահանջի կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության գործիքներ:

«Ականատես»-ի հարցման ի պատասխան տրված ԿԸՀ պարզաբանումներից բխում է, որ ԸԸՀ-ները պարբերաբար շրջայց են կատարում Երևանի տարբեր վարչական շրջաններում, առկայության դեպքում՝ արձանագրում են հայտնաբերված խախտումները, անհապաղ իրազեկում են տեղական ինքնակառավարման մարմիններին, որպեսզի վերջիններս ձեռնարկեն օրենքով սահմանված միջոցներ: Մատնանշվել է նաև ԿԸՀ-ի համապատասխան լիազորությունը սահմանող դրույթը, որի ուժով նախընտրական քարոզչության կանոնների խախտման դեպքում վերջինս դիմում է իրավասու մարմիններ խախտումը կանխելու համար կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի կամ կուսակցության նկատմամբ: Փաստացի իրավիճակը, սակայն, ցույց է տալիս, որ տվյալ դրույթի պահպանման նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվում:

«Ականատես»-ի մեկ այլ հարցմանը տված ԿԸՀ-ի պատասխանը նաև վկայում է, որ 5քմ-ից փոքր մակերեսների դեպքում ևս առկա չէ բաշխման որևէ մեթոդաբանություն, և պարզ չէ, թե ինչպես են գործնականում ապահովվում ոչ խտրական և հավասար հնարավորությունները:

Օրենքի խախտմամբ փակցված քարոզչանյութերի հեռացում

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ օրենքի խախտմամբ փակցված քարոզչանյութերի հեռացման պատասխանատուն համայնքի ղեկավարն է, սակայն չի նկատվել ակտիվ աշխատանք օրենքի խախտմամբ փակցված քարոզչանյութերը հեռացնելու ուղղությամբ:

«Ականատես»-ի դիտորդները արգելված վայրերում փակցված քարոզչանյութերի մի քանի տասնյակ դեպքերով ահազանգել են համապատասխան ԸԸՀ-ներ, որպեսզի վերջիններս իրենց տարածքում քարոզչության կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության շրջանակում ապահովեն դրանց հեռացումը, այդ թվում՝ ՏԻՄ-ի միջոցով, սակայն ողջամիտ ժամկետում քարոզչանյութերի հեռացման դեպքերը եղել են հազվադեպ: Որոշ դեպքերում հեռացնելուց հետո քարոզչանյութերը կրկին հայտնվել են միևնույն արգելված վայրերում:

Ընդհանուր առմամբ, վարչական շրջանների աշխատակազմերը հիմնականում հետամուտ չեն եղել ահազանգերին, իսկ ԸԸՀ-ների արձագանքը, բացառությամբ երկուսի, եղել է անբավարար:

Քարոզչություն ԶԼՄ-ներով

ՀՀ ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածի համաձայն նախընտրական քարոզչական նյութերի հրապարակումը պետք է ուղեկցվի «Նախընտրական քարոզչություն» լուսագրով, իսկ քարոզչական տեսանյութերի դեպքում՝ տեսանյութի վրա տեղադրվող «Նախընտրական քարոզչություն»՝ անընդմեջ ուղեկցվող լուսագրով: Նախընտրական քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակումը պետք է տեղեկություններ պարունակի պատվիրատուի վերաբերյալ: ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած ԶԼՄ-ները նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պարտավոր են ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների) համար ապահովել ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

Արձանագրվել են նախընտրական քարոզչական նյութերի՝ առանց «Նախընտրական քարոզչություն» լուսագրի ուղեկցման և այլ անհրաժեշտ տվյալների հրապարակման բազմաթիվ դեպքեր համացանցային լրատվամիջոցներում: Այս մասին «Ականատես»-ը տեղեկացրել է ԿԸՀ-ին՝ արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու ակնկալիքով: Սակայն հետագա դիտարկումները ցույց են տվել, որ քարոզարշավի ողջ ընթացքում ԶԼՄ-ների գերակշիռ մասը (բացառությամբ «Առավոտ» լրատվականի) շարունակել են տարածել քարոզչանյութը՝ օրենքի պահանջի խախտմամբ:

«Արմենպրես» պետական (բաժնետոմսերի 100%-ը տնօրինում է ՀՀ-ն) լրատվական գործակալություն ՓԲԸ-ի կողմից հիմնադրված լրատվամիջոցում տեղադրված են եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բազմաթիվ քարոզչանյութեր, որոնք չեն ապահովել օրենքով սահմանված պահանջները: «Ականատես»-ի դիմումի հիման վրա ԿԸՀ-ի միջնորդությամբ տվյալ խնդիրը լուծվել է և քաղաքական գովազդները հեռացվել են:

Քարոզարշավի ընթացքում Հանրային հեռուստաընկերության «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդաշարը կազմակերպել է երկու հանդիպում բարձրաստիճան քաղաքական գործիչների՝ սեպտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանի (մոտ 25 րոպե) և սեպտեմբերի 11-ին Նիկոլ Փաշինյանի (մոտ 60 րոպե) հետ: Այս հարցազրույցների բովանդակության զգալի մասը պարունակել է քարոզչություն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին և հակաքարոզչություն «Ազգային առաջընթաց» կուսակցության, մասնավորապես՝ դրա առաջին համար Հայկ Մարությանի դեմ:

Քարոզչություն սոցիալական ցանցերում

Crowdtangle գործիքով իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ֆեյսբուքյան և ինստագրամյան ցանցում առավել տեսանելի երեք հիմնական թեկնածուները Տիգրան Ավինյանը, Հայկ Մարությանն ու Մանե Թանդիլյանն էին[5]: Հրապարակումներ կատարելու հաճախականության առումով առավել ակտիվ է եղել Մ.Թանդիլյանը՝ օրական միջինում 3.49, որին հաջորդել է Տ.Ավինյանը՝ 3.44 հրապարակմամբ: Հ.Մարությանը նախավերջին տեղում է՝ օրական միջինում 0.88 հրապարակմամբ:

[5] Տեխնիկական պատճառներով հնարավոր չի եղել ուսումնասիրել «Լուսավոր Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող թեկնածու՝ Դավիթ Խաժակյանի էջը: Եվս երեք կուսակցությունների ընտրական ցանկերը գլխավորող թեկնածուներ Արտակ Գալստյանը, Տիգրան Խզմալյանը և Արման Ղուկասյանը էջ չեն ունեցել, ուստի չեն ներառվել ուսումնասիրության մեջ:

Ուշագրավ է, որ չնայած սոցիալական մեդիայում համեմատաբար պասիվ ներկայացվածության՝ Հայկ Մարությանի հրապարակումները ստացել են ավելի մեծ արձագանք՝ հավանումներ, տարածումներ և մեկնաբանություններ: Օրինակ՝ օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը Հ.Մարությանի էջում տեղադրված ընդամենը 40 հրապարակումներն ունեցել են 270,811 հավանում, տարածում և մեկնաբանություն, մինչդեռ Տ.Ավինյանի 156 հրապարակումներին այդպիսի արձագանքների քանակը 202,963 էր, իսկ Մ.Թանդիլյանի 152 հրապարակումների արձագանքը՝ 43,361:



Կուսակցությունների էջերում կատարվող քարոզչության ուսումնասիրությունից պարզվում է[6], որ առավել ակտիվ է եղել «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքը, որը ուսումնասիրվող ժամանակահատվածում կատարել է 370 հրապարակում: Նրան հաջորդել է «Արդար Հայաստան» կուսակցությունը՝ 294 և «Քաղաքացիական պայմանագիր»-ը՝ 206 հրապարակմամբ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հրապարակումներն ունեցել են առավել մեծաքանակ հավանում, տարածում և մեկնաբանություն՝ 130,499: Նրան հաջորդել է «Հանրապետություն» կուսակցությունը՝ 95,492 հավանումների, տարածումների և մեկնաբանությունների քանակով: Ի տարբերություն Հայկ Մարությանի հրապարակումների նկատմամբ ակտիվ արձագանքի, նրան առաջադրած «Ազգային առաջընթաց» կուսակցությունն ունեցել է հրապարակումների ամենաքիչ հավանումների, տարածման ու

[6] Ուսումնասիրության մեջ ներառված չէ «Հաղթանակ» կուսակցությունը, քանի որ ուսումնասիրվող հարթակներում էջ չի ունեցել:

մեկնաբանությունների դեպքերը: Սա, ի լրումն այլ հնարավոր գործոնների, կարող է պայմանավորված լինել տվյալ կուսակցության՝ ֆեյսբուքյան ցանցում ցածր ակտիվությամբ (օրական միջինը՝ 0.7 հրապարակում) և որևէ վճարովի քաղաքական գովազդ չտարածելու փաստով:



Meta Ads Library գործիքով ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առցանց գովազդի վրա ամենաշատ գումարը ծախսել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 20 գովազդի համար վճարելով 6,223 ԱՄՆ դոլար (այն ունեցել է 300,000 - 400,000 ցուցադրում (impressions))[7]: «Ապրելու երկիր» կուսակցությունը 102 գովազդի համար ծախսել է 5,282 ԱՄՆ դոլար (25,000 - 35,000 ցուցադրում): «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքը 96 գովազդի համար ծախսել է 2,249 ԱՄՆ դոլար (30,000 - 40,000 ցուցադրում): «Հանրապետություն» կուսակցությունը 30 գովազդի համար ծախսել է 1,480 ԱՄՆ դոլար (80,000 - 90,000 ցուցադրում):

[7] Օգտատերերի էջերում գովազդների ցուցադրման միջին քանակը:



Ընտրական ցուցակների 1-20-րդ տեղերը զբաղեցնող ավագանու թեկնածուների էջերում տեղադրված քաղաքական գովազդների համար ամենաշատ գումար ծախսվել է երեք կուսակցությունների թեկնածուների էջերի համար: «Ապրելու երկիր» կուսակցության քաղաքապետի թեկնածու Մանե Թանդիլյանի էջի 130 գովազդի համար ծախսվել է 6,811 ԱՄՆ դոլար (30.000 - 40.000 ցուցադրում): Նույն կուսակցության ընտրական ցուցակի 2-րդ համարի՝ Մեսրոպ Առաքելյանի էջում տեղադրվել է 39 գովազդ՝ ծախսելով 3,310 ԱՄՆ դոլար (80.000 - 90.000 ցուցադրում):

«Լուսավոր Հայաստան» կուսակցության քաղաքապետի թեկնածու Դավիթ Խաժակյանի էջում տեղադրվել է 49 գովազդ՝ ծախսելով 6,693 ԱՄՆ դոլար (120.000 - 130.000 ցուցադրում):

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի էջում տեղադրվել է 57 գովազդ՝ ծախսելով 6,304 ԱՄՆ դոլար (90.000 - 100.000 ցուցադրում): Նույն կուսակցության ընտրական ցուցակի 7-րդ համարի թեկնածու Արմեն Գալջյանի էջում տեղադրվել է 4 գովազդ՝ ծախսելով 117 ԱՄՆ դոլար (50.000 - 60.000 ցուցադրում):



Նախընտրական քարոզչության շրջանի ակտիվացմանը զուգահեռ սոցիալական ցանցերում ակտիվացել են ակնհայտ կեղծ օգտատերերն ու էջերը, որոնք կազմակերպված ձևով և նպատակաուղղված հակաքարոզչություն են իրականացրել մրցակից կուսակցությունների նկատմամբ: «Ականատես»-ի դիտորդների հետ հանդիպումներում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ նշել են, որ պարբերաբար տեղի են ունենում կեղծ օգտատերերի կողմից գրոհներ և կեղծ էջերով տարածվում է վարկաբեկող տեղեկատվություն իրենց մասին: Այս խնդրին իրենց հետազոտություններում անդրադարձել են նաև հետաքննող լրագրողները (Սիվիլնեթ, Փաստերի ստուգման հարթակ), որոնց արդյունքները, մասնավորապես՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից իրականացվող գործողությունների մասով, մտահոգությունների տեղիք են տալիս:

«Ականատես»-ն ուսումնասիրել է ֆեյսբուքյան ցանցում նախընտրական քարոզչության մեջ ակտիվորեն ներգրավված, հավանումներ տվող, հրապարակումները տարածող կամ մեկնաբանող 700 օգտահաշիվ՝ ստուգելու դրանց իրական լինելը: Պարզվել է, որ դրանցից 270-ը պատկանում են կեղծ օգտատերերի, որոնք ակտիվորեն մասնակցել են քարոզչությանը օգտագործելով տարբեր մեթոդներ, այդ թվում՝ հրապարակումների տակ դրել են բարկացած «էմոջիներ», արել վիրավորական մեկնաբանություններ, մտել են կոշտ բանավեճերի մեջ մյուս օգտատերերի հետ՝ սատարելով առանձին թեկնածուների կամ հակաքարոզչություն արել այլոց համար: Այսպիսի ծավալներով կեղծ օգտահաշիվների ներգրավումը «թվային ընտրարշավում» խնդրահարույց է քարոզչության բարեվարքության և թափանցիկության ապահովման, ինչպես նաև ընտրությունների վրա հնարավոր արտաքին ազդեցությունների տեսանկյունից:

Լռության օրը քարոզչության կամ հակաքարոզչության դեպքեր արձանագրվել են միայն համացանցային տիրույթում: Քարոզչություն է իրականացվել «Քաղաքացիական

պայմանագիր» կուսակցության հետ ասոցացվող էջերի կողմից, «Լուսավոր Հայաստան» կուսակցության ֆեյսբուքյան պաշտոնական էջով: Քարոզչություն է իրականացվել նաև ընտրությունների մասնակից քաղաքական ուժերի առանձին թեկնածուների և այլ կուսակիցների կողմից, այդ թվում՝ տարածելով իրենց ուժի (ներառյալ՝ ասոցացվող) քարոզչանյութերը: Այդպիսի դրսևորումներ են նկատվել՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ Վահագն Ալեքսանյանի, Էմիլ Երեմյանի, Արմեն Գալջյանի, Հրաչյա Հակոբյանի և Արմեն Միերյանի, «Հանրապետություն» կուսակցությունից՝ Արամ Սարգսյանի և Անի Խաչատրյանի, «Ազգային առաջընթաց» կուսակցությունից՝ Գրիգոր Երիցյանի, «Հաղթանակ» կուսակցությունից՝ Հրանտ Դավոյանի, «Լուսավոր Հայաստան» կուսակցությունից՝ Դավիթ Խաժակյանի և Աննա Նավասարդյանի հրապարակումներում:

4. Վարչական ռեսուրսի չարաշահում

Երևանի ավագանու ընտրությունների նշանակմանը նախորդող զարգացումների և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու Տ.Ավինյանի՝ Երևանի փոխքաղաքապետի պաշտոնի ստանձնման միջոցով իշխանության լծակներին տիրապետելու արդյունքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում լայնորեն կիրառվել է վարչական ռեսուրսը:

Վարչական շրջանների ղեկավարների և աշխատակազմերի ներգրավում քարոզարշավում

Վարչական ռեսուրսի առավել ակնհայտ և համակարգային դրսևորումը Երևանի գրեթե բոլոր վարչական շրջանների կառավարման մարմինների աշխատակիցների ակտիվ ներգրավումն էր քարոզչական գործընթացներում: Օրինակ՝

- Օգոստոսի 24-ին Մալաթիա-Սեբաստիայում տեղի ունեցած՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավին մասնակցել են Երևանի քաղաքապետի խորհրդական Սաշա Կատվալյանը և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թաղապետի տեղակալ Լազր Խաչատրյանը, որոնք չեն գտնվել արձակուրդում: Մեկ այլ դեպքում նշված անձինք աշխատանքային ժամին գտնվել են կուսակցության նախընտրական շտաբում:
- Արաբկիր և Աջափնյակ վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցներին դիտորդները նկատել են աշխատանքային ժամերին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բուկլետներ բաժանելիս:
- Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ և ժամանակավոր պաշտոնակատար Հրաչյա Հակոբյանը արձակուրդում չգտնվելով՝ պարբերաբար մասնակցել է «Քաղաքացիական պայմանագրի» կողմից կազմակերպած բակային հանդիպումներին, պարբերաբար քարոզչական կարգախոսներով ֆեյսբուքյան գրառումներ կատարել:
- Արաբկիր վարչական շրջանի տեղակալ Գեղամ Կարապետյանը, ինչպես նաև թաղապետարանի այլ աշխատակիցներ աշխատանքային ժամին մասնակցել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավին:

- Շինարարների փողոցում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբում աշխատանքային ժամին գտնվել են վարչական շրջանի աշխատակազմի քարտուղարը, վարչական շրջանի ղեկավարի տեղակալը և «Աջափնյակ 7» համատիրության նախագահը:

Հարկ է նկատել, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Երևանի բոլոր վարչական շրջանների ղեկավարները (երբեմն նաև նրանց տեղակալները), որոնք նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակում ներառված թեկնածուներ էին, համատարած գտնվել են արձակուրդում և հաճախ դիտորդները չեն կարողացել հանդիպել նրանց հետ: Միաժամանակ, ֆորմալ առումով գտնվելով արձակուրդում, վարչական շրջանների ղեկավարները մասնակցել են համապատասխան թաղապետարանների առօրյա աշխատանքներին ու հանդիսավոր միջոցառումներին, հսկել ակտիվորեն ընթացող բարեկարգման գործընթացները:

Վարչական շրջանի ղեկավարների և անձնակազմի կողմից գրեթե ամենօրյա ռեժիմով իրականացվել են բակային շրջայցեր և հանդիպումներ, որոնց ընթացքում համատեղելով ավագանու թեկնածուի և վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը՝ նրանք փորձել են արձանագրել և լուծել բնակիչների առաջ քաշած խնդիրները, իսկ, երբեմն, նաև փորձել պարզել, թե բնակիչները ո՞ւմ են հակված ընտրելու: Նրանք հանդիպումների ժամանակ անընդհատ շեշտել են իրենց պաշտոնն ու ասել, որ «թաղապետարանը ժողովրդի կողքին է» և այդտեղ է՝ լսելու բնակիչների բոլոր խնդիրները:

Կենտրոն, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջաններում արձանագրվել են դեպքեր, երբ թաղապետարանների աշխատակիցները և համատիրությունների ներկայացուցիչները մասնակցել են հարցումների կազմակերպմանը և տուն առ տուն այցերի միջոցով քաղաքացիներին հարցեր ուղղել՝ պարզելու նրանց դիրքորոշումը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանն ընտրելու հարցում:

Սեպտեմբերի 5-ին «Ականատես»-ը Երևանի քաղաքապետարանին հարցում է ուղղել՝ Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակից կուսակցությունների ընտրական ցուցակներում ներառված՝ Երևանի քաղաքապետարանի կամ Երևանի վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների ցանկի և նրանց արձակուրդում գտնվելու ժամկետի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Հարցման պատասխանը ստացվել է միայն 2023 թ. հոկտեմբերի 6-ին՝ այդպիսով զրկելով դիտորդական առաքելությանը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից:

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ֆեյսբուքյան էջերում ուշադրություն են գրավում ակտիվ հրապարակումները և սեփական գործունեության լուսաբանումը ընտրությունների օրվան ընդառաջ և հաճախ կտրուկ անկումը ընտրություններից հետո: Սա հարցականի տակ է դնում այդ հրապարակումների միջոցով հետապնդվող նպատակի իրավաչափությունը և փաստացի վկայում, որ էջերը ծառայեցվել են ընտրությունների ժամանակ քարոզչության և քաղաքացիների քվեն շահելու նպատակով:

Կրթական հաստատությունների աշխատողների ներգրավում քարոզարշավում

Քարոզարշավի առաջին իսկ օրերին արձանագրվել են կրթական հաստատությունների աշխատակիցների ներգրավման բազմաթիվ դեպքեր: Արձագանքելով դրան՝ 2023 թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ, կոչ անելով ուսումնական հաստատությունները չօգտագործել քաղաքական գործընթացներում: Չնայած դրան այս արատավոր պրակտիկան շարունակվել է:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից կազմակերպվող միջոցառումներին հաճախ են ներկա եղել կրթական հաստատությունների աշխատակիցներ, որպես կանոն՝ խմբերով: Մասնավորապես՝

- Սեպտեմբերի 7-ին Նոր Նորքում կազմակերպված հանրահավաքի ժամանակ ներկա են եղել ինչպե՛ս համատիրությունների աշխատակիցներ, այնպե՛ս էլ՝ դպրոցների և մանկապարտեզների աշխատողներ, մշակույթի տան սաներ: Նկատվել է նաև հավաքի մասնակիցներին ավտոբուսներով բերելու գործընթաց:
- Սեպտեմբերի 9-ին Ավան-Առինջի այգում տեղի ունեցած քարոզչական միջոցառման ժամանակ ներկա են եղել մանկապարտեզների և դպրոցների աշխատակիցներ, որոնց ներքին խոսակցություններից պարզ է դարձել, որ ստիպված են եկել՝ տնօրենների կարգադրությամբ, սակայն հրաժարվել են դիտորդին ներկայացնել իրենց դպրոցների ու մանկապարտեզների համարները:
- Երևանի «Քանաքեռ-Զեյթունի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիչը ներգրավված է եղել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում սեպտեմբերի 12-ին կազմակերպված «Զեյթունի օրվա», իսկ համատեղության կարգով՝ նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական միջոցառմանը մարզադպրոցի սաների մասնակցությունն ապահովելու գործում: Մարզադպրոցի մարզիչը դպրոցի սաների ծնողական խմբում տարածել է միջոցառման մասնակցության մասին հայտարարությունը, նշելով, որ «ցանկալի ու պարտադիր է բոլորի ներկայությունը», իսկ միջոցառումից ժամեր առաջ ծնողներին ևս մեկ անգամ հիշեցում է ուղարկվել երեխաների մասնակցության մասին: Առհասարակ, մարզադպրոցի ֆեյսբուքյան էջում բազմաթիվ են եղել «Քաղաքացիական պայմանագրի» և Տ. Ավինյանի քարոզչական նյութերը:
- Նույն միջոցառմանը մասնակցություն ապահովելու նպատակով «Ավուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի սաների ծնողական խմբում տեղադրվել է միջոցառման հայտարարությունը՝ ընդգծելով, որ երեխաների և ծնողների մասնակցությունը շատ ցանկալի է և որ խնդրանքը փոխանցվում է տնօրենի անունից:
- Կրթական հաստատությունների ներկայացուցիչների կոլեկտիվ մասնակցություն է արձանագրվել սեպտեմբերի 15-ին, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից կազմակերպված երթին ու հանրահավաքին: Մասնավորապես՝ դրանց մասնակցել են Ալավերդու թիվ 10 դպրոցի ուսուցչական կազմի, Վանաձորի մի քանի մանկապարտեզների, Շենգավիթի դպրոցների և մանկապարտեզների աշխատակիցները:

Պետական և համայնքային կազմակերպությունների աշխատակիցների հարկադրված մասնակցություն միջոցառումներին

Քարոզարշավի վերջին օրը՝ սեպտեմբերի 15-ին, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից կազմակերպվել էր համակիրների խոշորածավալ երթ և հանրահավաք, որոնց ընթացքում արձանագրվել են վարչական ռեսուրսի չարաշահման բազմաթիվ դեպքեր: Մասնավորապես՝

- Երևանի Շենգավիթ, Նոր Նորք, Մալաթիա-Սեբաստիա, Ավան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններից աշխատանքային ժամերին կազմակերպված ձևով՝ ավտոբուսների միջոցով, աշխատակազմերը տեղափոխվել են միջոցառման վայրեր և մասնակցել երթին ու հանրահավաքին:
- Մարզերից, մասնավորապես՝ Արտաշատի, Վեդու, Թալինի, Գյումրու, Փարաքարի համայնքապետարանների և Շիրակի մարզպետարանի աշխատակիցները կազմակերպված ձևով մասնակցել են երթին և հանրահավաքին, հիմնականում՝ լքելով աշխատավայրը աշխատանքային ժամերին:
- ՀՀ արդարադատության նախարարության, դրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի աշխատակիցներին հրահանգներ են տվել և հորդորել մասնակցելու հանրահավաքին:
- Արձանագրվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության, Երևանի ընդհանուր իրավասության դատարանի, Երևանի քաղաքապետարանի և այլ նախարարությունների աշխատակիցների կոլեկտիվ մասնակցությունը:
- Միջոցառումներին մասնակցել են կրթական հաստատությունների աշխատակիցներ Ալավերդի և Վանաձոր քաղաքներից, Շենգավիթ վարչական շրջանից, որոնք, ըստ ստացված տվյալների, բերվել են հավաքի հարկադրանքի միջոցով:
- Երթին և հանրահավաքին նկատվել է «Կոտայք» գարեջրի գործարանի աշխատակիցների մասնակցությունը, որոնք ևս, ըստ ստացված տվյալների, բերվել են հավաքին հարկադրանքի միջոցով:
- Արաբկիր վարչական շրջանի աշխատակիցները հանրահավաքի և երթի ժամանակ օգտագործել են իրենց ծառայողական մեքենաները:

ՏԻՄ աշխատանքների հետ քարոզչության զուգորդում

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հատկացված լրացուցիչ միջոցների հաշվին Երևանի բոլոր վարչական շրջաններում իրականացված բարեկարգման և շինարարական աշխատանքների ընթացքին, ավարտին, հանձն-ընդունման, շինությունների ու այգիների բացման արարողություններին զուգընթաց իրականացվել է ակտիվ քարոզչություն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին՝ դրա ցուցակում ներառված և վարչական շրջանների ղեկավար հանդիսացող թեկնածուների վաստակի հիշատակմամբ կամ անմիջական մասնակցությամբ:

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բնակիչները տարիներով բողոքել են ջրամատակարարման խողովակների վիճակից: Միայն 2023 թ. օգոստոսի 21-ին Երևանի քաղաքապետարանում գործակարգավարական խորհրդակցության ժամանակ փոխքաղաքապետ Տ. Ավինյանը որոշում է կայացրել խողովակների փոփոխման վերաբերյալ:
- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանը ակտիվ այցելություններ է կատարել այն բակեր, որտեղ իրականացվել են բարեկարգման աշխատանքներ, օրինակ՝ Դրոյի 6 հասցե, Մինաս Ավետիսյանի անվան այգի, Դրոյի 24 հասցեի մարզադաշտ և այլն:
- Նոր Նորք վարչական շրջանի ֆեյսբուքյան էջով նշվել է, որ թաղապետ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Նոր Նորքի գրասենյակի ղեկավար և այդ կուսակցության ընտրական ցուցակի 37-րդ համարը հանդիսացող Արմեն Միերյանի ջանքերով լուսավորվել է Նանսենի այգին: Այնինչ, տարածքի բնակիչների վկայություններով, այգին միշտ լուսավորված է եղել, պարզապես քարոզարշավին մոտ ժամանակահատվածում մեկնարկել է լուսավորման ցանցի արդիականացումը, որը ներկայացվել է որպես Միերյանի ձեռքբերում:
- Նույն վարչական շրջանի 4-րդ զանգվածում մեկնարկել են բակերի բարեկարգման աշխատանքները, իսկ 7-րդ զանգվածում մեծ շուքով բացվել է խաղահրապարակ, որին ներկա էր Նոր Նորքի թաղապետ Արմեն Միերյանը և Տիգրան Ավինյանը:
- Նոր Նորքի 3-րդ զանգվածում սկսվել են վերանորոգման աշխատանքներ տեղի պոլիկլինիկայում, որում ավելի քան 10 տարի ոչ մի աշխատանք չէր արվել: Սաֆարյան փողոցից մինչև Գյուրջյան փողոցը ասֆալտապատվել է: Բարեկարգվել է թիվ 160 դպրոցի բակը:

Լայնածավալ շինարարական աշխատանքներին և ենթակառուցվածքների բարեկարգումներին զուգընթաց արագացված կարգով լուծումներ են տրվել նաև անհատ բնակիչների կամ բնակիչների խմբի կողմից ներկայացված խնդիրներին: Այսպես, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շտաբների ներկայացուցիչների հետ հարցազրույցի ընթացքում պարզ է դարձել, որ բնակիչները ներկայացնում են իրենց խնդիրը շտաբում, իսկ շտաբի ներկայացուցիչները տեղում զանգահարում են թաղապետարան և արագ լուծում քաղաքացու խնդիրը (օրինակ՝ տեղադրում մուտքի պատուհան Աջափնյակի թաղապետարանի կողմից): Շտաբներ դիմած քաղաքացիների շատ խնդիրներ այս մեխանիզմով ուղարկվել են թաղապետարաններ:

Չնայած որոշ վարչական շրջաններում և բակերում տարվող մոտ մեկ տարի առաջ սկսված ակտիվ քարոզչությանը՝ Տ.Ավինյանը խուսափել է այցելել այնպիսի տարածքներ (օրինակ՝ Ֆիզիկայի գիտավան), որտեղ բնակիչները դժգոհել են ապօրինի կառուցապատումից և հատուկ իրեն հրավիրել են այցելել իրենց տարածք:

Մշակութային և զվարճանքի միջոցառումների կազմակերպում

Ուշագրավ է նախընտրական քարոզարշավի շրջանում տարատեսակ տոնակատարությունների, համերգների կազմակերպման կտրուկ աճը, այդ թվում՝ համայնքային միջոցների հաշվին:

- Կենտրոնի թաղապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի նախաձեռնությամբ մոտ 1,400 աշակերտ Կենդանաբանական այգու նվեր-տոմսեր են ստացել: Խանջյանի անվան թիվ 53 դպրոցի աշակերտների համար տվյալ այցելությունը կազմակերպվել է Երևան Սիթի Տուր զբոսաշրջային ավտոբուսներով:
- Նույն վարչական շրջանի ղեկավարը նաև Անդրանիկի 32 հասցեի վերանորոգված ֆուտբոլի դաշտում կատարված աշխատանքներին ծանոթանալիս կազմակերպել է մուլտիերոսների այց՝ երգ ու պարով, ուրախ խաղերով փոքրիկներին զվարճացնելու համար:
- Աջափնյակի Թումանյանի այգում սեպտեմբեր 12-15-ը կազմակերպվել են բացօթյա օպերային համերգներ: Այդպիսի համերգներից առաջինները անցկացվել էին հունիսին՝ Արամ Խաչատրյանի հոբելյանական միջոցառումների շարքում և, փաստորեն, կրկնվել երեք ամսվա ընդմիջումից հետո՝ հենց նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

Մի քանի վարչական շրջաններում իրականացվել են «վարչական շրջանի տոն» կոչվող տոնակատարություններ, որոնք նախկինում երբևէ հայտնի չեն եղել կամ չեն իրականացվել: «Ականատես»-ի պաշտոնական հարցմանը Երևանի քաղաքապետարանը չի տրամադրել տոնակատարության օրերը սահմանելու վերաբերյալ իրավական հիմքերը: Պատասխանից պարզվել է, որ 12 վարչական շրջաններից 6-ը չունեն տոնակատարության օրեր, 3-ի՝ Աջափնյակ, Շենգավիթ և Նուբարաշենի տոները հունիսին են, և 3-ինը՝ Նորք Մարաշի, Դավթաշենի և Նոր Նորքինը՝ սեպտեմբերին: Ընդ որում, վերջին երկու վարչական շրջանների տոները առաջին անգամ որոշել են նշել հենց 2023 թվականի սեպտեմբերին:

Սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած Նոր Նորք վարչական շրջանին նվիրված տոնակատարության կազմակերպման համար ծախսվել է նախկին նմանատիպ միջոցառումների կազմակերպման ծախսերի համեմատ մոտ 8 անգամ ավել գումար: Տոնակատարության ընթացքում բնակիչներին ներկայացվել են տվյալ վարչական շրջանում կատարված աշխատանքները, բարեկարգումները:

Չնայած, որ Երևանի քաղաքապետարանի պատասխանում նշված էր, որ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը չունի տոն և ծախսեր չեն իրականացվել, այդպիսի տոնակատարություն փաստացիորեն կազմակերպվել է սեպտեմբերի 12-ին՝ ուղեկցվելով Տ. Ավինյանի ներկայությամբ և ակտիվ քարոզչությամբ:

Վարչական շրջան	Տոնակատարության ժամկետ	Տոնակատարության ծախսեր 2023 թ. սեպտեմբերին
Դավթաշեն	առաջին անգամ՝ 2023 թ. սեպտեմբեր	694,000 ՀՀ դրամ
Նոր Նորք	առաջին անգամ՝ 2023 թ. սեպտեմբեր	8,770,000 ՀՀ դրամ
Նորք-Մարաշ	հերթական տոնակատարություն՝ 2023 թ. սեպտեմբեր	1,694,600 ՀՀ դրամ
Քանաքեռ-Զեյթուն	առաջին անգամ՝ 2023 թ. սեպտեմբեր	Տեղեկություն առկա չէ

Վարչական ռեսուրսների չարաշահման այլ դեպքեր

Ընտրությունների նախաշեմին՝ 2023 թ. սեպտեմբերի 3-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու Տիգրան Ավինյանը հայտարարեց. «Անհուսալի պարտավորություններ ունեցող բազմաթիվ երևանցիներ (որոնց թիվը մոտ 150,000 է) դիմել են իրենց՝ խնդրով: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ քննարկման արդյունքում որոշակի համաներման տրամաբանությամբ նախագիծ ենք ցանկանում մշակել, որպեսզի քաղաքացիները կարողանան թոթափել այդ բեռը, քանի որ ֆինանսական խնդիրների են բախվում»:

Նախընտրական քարոզարշավի վերջին օրը Երևանի քաղաքապետարանը տեղադրեց վճարովի գովազդ «Թատերական Երևան 2024» ծրագրի մասին: Ծրագիրը դրամաշնորհի բաց մրցույթ էր և յուրաքանչյուր հաղթող 2,5 միլիոն դրամ էր ստանալու (ֆոնդը՝ 10 միլիոն ՀՀ դրամ): Հարկ է նշել, որ «Թատերական Երևան» խորագրով դրամաշնորհի մրցույթ արդեն իսկ կայացել էր 2023 թ. ամռանը:

5. Այլ խնդրահարույց խախտումներ

Անչափահասների ներգրավում հավաքներին

Երեխաները ընտրելու իրավունք չունեն, նրանց ներգրավումը քարոզարշավներին հիմնավորված չէ: Նրանց մասնակցությունը քարոզարշավում որևէ ձևաչափով պետք է հիմնված լինի բացառապես կամավորության սկզբունքի հիման վրա:

Հայտնի են մի շարք դեպքեր, երբ քաղաքական ուժերը անչափահասներ են խմբերով ներգրավել իրենց քարոզչական գործողություններում, ֆասադային մասնակցության ապահովման և այդպիսով, թերևս, ընտրողների համակրանքը գրավելու նպատակով: Երեխաները, երբեմն, կրել են կուսակցությունների/դաշինքի տարբերանշաններով վերնաշապիկներ, իրենց ձեռքերում պահել դրոշակներ և բաժանել թռուցիկներ: Անչափահասների ծնողները մոտակայքում չեն նկատվել:

- «Ապրելու Երկիր» կուսակցության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային հանդիպումներին, Աջափնյակի «Բուենոս Այրեսի» այգում, Դավթաշենում և Կենտրոն համայնքում տեղի ունեցած երթին մասնակցել է առնվազն 19 անչափահաս:
- «Մայր Հայաստան» դաշինքի կազմակերպած երթին և Նոր Նորքում իրականացրած քարոզչական հանդիպումներին արձանագրվել է 11 անչափահասի մասնակցություն:
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից Արաբկիրի թաղապետի նախաձեռնությամբ իրականացվող բակային հանդիպումներին և երթերի ու հանդիպումների ժամանակ կուսակցության դրոշները պահելու միջոցով, մասնակցել է առնվազն 17 անչափահաս:
- «Արդար Հայաստան» կուսակցության հանդիպումներից մեկին ներգրավվել է առնվազն 4 անչափահաս:

Կամավորության սկզբունքի ակնհայտ խախտման մասին են փաստում վարչական ռեսուրսի չարաշահմամբ անչափահասների ներգրավման վերաբերյալ նկարագրված այլ դրվագները:

Հավաքներին մասնակցելուն նյութապես շահագրգռելու դեպքեր

Երևանի ավագանու ընտրություններին տեղ են գտել հավաքների մասնակիցներին նյութապես շահագրգռելու դեպքեր, ինչը քրեորեն պատժելի արարք է, և դրա համար նախատեսված է պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով:

Այսպես՝ «Promo host» գովազդային տեխնոլոգիաների կազմակերպությունն իր ինստագրամյան աշխատանքային չաթում հավաքագրել է երիտասարդ կանանց՝ մեկ ժամը 1,000 դրամ գումարի դիմաց քարոզչական երթերին մասնակցելու՝ «ուղղակի քայլելու» համար՝ առանց նշելու որևէ քաղաքական ուժի անուն: Մասնակցել ցանկացողներից պահանջվել է նախապես ուղարկել իրենց լուսանկարը՝ կազմակերպչի կողմից հաստատում ստանալու նպատակով: Նրանց հանձնարարվել է կրել սպիտակ շապիկներ և ջինսե տաբատներ, որը համապատասխանել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների համազգեստին: Մասնակիցները հրավիրվել են Սայաթ-Նովա 40 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գլխամասային գրասենյակ, որտեղից պետք է մեկնարկեին քարոզչական երթերը: Նման հայտարարություն տեղադրվել է նաև «Սիթի Փրոմոուշն» ֆեյսբուքյան օգտահաշվում, որտեղ նշվել է, որ անհրաժեշտ են «մեծ խմբաքանակի աղջիկներ և տղաներ բացօթյա միջոցառման ժամանակ ձեռքի դրոշակներ պահելու համար», որոնցից նաև պահանջվելու է տարածել թռուցիկներ: Նկարագրված դեպքի առիթով «Ականատես»-ը հաղորդում է ներկայացրել ՀՀ դատախազություն:

Բացի այդ, «Ականատես»-ի դիտորդներն անձամբ են գրանցել նման դեպք օգոստոսի 30-ին, երբ Աջափնյակ համայնքի Բուենոս Այրեսի այգում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հանրահավաքին մասնակցող անչափահասներից մեկը դիտորդին տեղեկացրել է, որ 4,000 ՀՀ դրամ է վճարվում քարոզչական դրոշ պահելու համար:

Բարեգործության կամ դրանց խոստումների դեպքեր

Ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը կուսակցության կողմից կամ նրա անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք կամ ծառայություններ տալու/մատուցելը կամ դրանք խոստանալը քրեորեն պատժելի արարք է, որի համար նախատեսվում է պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով:

Նախընտրական քարոզչության ընթացքում «Ապրելու երկիր» կուսակցությունը քարոզչական նյութերին զուգահեռ որոշ ընտրողների տրամադրել է նվեր-քարտեր: Դրանք կոշտ քարտեր են, որոնց մի կողմում նշված է կուսակցության անունն ու լոգոն, մյուսում առկա է գրառում՝ «Պահիր այս քարտը, անակնկալները՝ սեպտեմբերի 17-ից»: Այդպիսի քարտ ստացած տարեց քաղաքացիներից որոշները նաև կարծել են, որ իրենց նվիրել են բանկային քարտ:

Նվեր-քարտերը ընտրողների մոտ ձևավորել են որևէ բարիք (ապրանք, ծառայություն) ստանալու առերևույթ ակնկալիք: Իսկ «Ապրելու երկիր» կուսակցության գրասենյակի ներկայացուցիչը «Ականատես»-ի ներկայացուցչի ստուգող հարցին ի պատասխան հաստատել է, որ քարտի պահպանման դեպքում ընտրողներին սպասվում են նվերներ, իսկ մանրամասները հայտնի կլինեն ընտրություններից հետո: Նկարագրված դեպքի առիթով «Ականատես»-ը հաղորդում է ներկայացրել ՀՀ դատախազություն:

Ատելության և վիրավորական խոսույթ

Ատելության խոսույթը ուղղորդված խոսքի ձև է, որը մերժում է արժանապատվության և հավասարության՝ մարդու հիմնարար իրավունքները և փորձում նսեմացնել անհատների և խմբերի դիրքը հասարակության մեջ: Այն նաև պարունակում է ռիսկեր՝ հրահրելու ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն, այդ թվում՝ պայմանավորված քաղաքական հայացքներով:

Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրվել են ատելության խոսույթի տարրեր պարունակող որոշ դրսևորումներ: Օգոստոսի 29-ին Աջափնյակում կայացած հանդիպման ժամանակ «Ուժը հայրենյաց» կուսակցության ներկայացուցիչ Մերի Մարկոսյանը դիտորդի հետ անձնական զրույցում նշել է, որ «քաղաքը պետք է մաքրել հնդիկներից և պարսիկներից», այրելու կոչեր արել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հասցեին:

Ատելության խոսքի և թշնամանքի տարածման տարրեր են պարունակել «Հանրային ձայն» կուսակցության ներկայացուցիչ Վարդան Ղուկասյանի ուղիղ եթերների ընթացքում հնչող խոսույթը և մյուս թեկնածուների հանդեպ հայհոյախառն արտահայտությունները:

Ատելության խոսքից զատ, նախընտրական քարոզչության ընթացքում գերակշռող է եղել վիրավորանքը, անձերի թիրախավորումը և թշնամանքի տարածումը: Դրանով ամենաշատն աչքի է ընկել «Մայր Հայաստան» դաշինքը, որը կառավարությանը և քաղաքային իշխանությանն անվանել է «երիտթուրքեր», «հարավ-կովկասյան թաթարներ», դաշինքի գրեթե բոլոր ելույթներն ուղեկցվեն են «Նիկոլ դավաճան», «պետության գլխին նստած աղբակույտ» արտահայտություններով: Բնակիչների հետ զրույցում դաշինքի ընտրական ցուցակը գլխավորող թեկնածու Անդրանիկ Թևանյանը հայտարարել է, որ «այդ դավաճանին

հրապարակային գնդակահարելու ենք, մահապատժի ենք ենթարկելու»: Այս կոչերին ներգրավվել են նաև անչափահաս երեխաներ՝ առանց ծնողների ներկայության:

Քարոզչության խոչընդոտում և բռնություն

Քարոզչանյութերի փակցման համար համայնքի կողմից հատկացված անվճար վայրերում, ինչպես նաև չսահմանված վայրերում հանդիպել են պատռված քարոզչանյութեր, ինչը հանդիսանում է քարոզչության խոչընդոտում: Այդպիսի 24 դեպք նկատվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, 10-ական դեպք՝ «Ապրելու երկիր» և «Ուժը հայրենյաց» կուսակցությունների, և 2-ական դեպք՝ «Լուսավոր Հայաստան», «Միացյալ Հայաստան», «Ազգային առաջընթաց» կուսակցությունների դեպքում:

Օգոստոսի 24-ին գրանցվել է քարոզչության խոչընդոտման դեպք, երբ «Մայր Հայաստան» դաշինքի ներկայացուցիչներին Շինարարների փողոցի բնակիչները թույլ չեն տվել ներկայացնել նախընտրական ծրագիրը կամ զրուցել իրենց հետ: Բնակիչներն անվանարկել են դաշինքի ներկայացուցիչներին, պահանջել հեռանալ տարածքից:

Սեպտեմբերի 3-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ Արարատյան զանգվածի շտաբներից մեկի մոտ հավաքվել են «Ազգային ժողովրդավարական բևեռ» կուսակցության համակիրները, ջուր լցրել շտաբի վրա, անվայել խոսքեր ասել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչներին, որոնք որոշ ժամանակ անց շտաբի մոտակայքից հեռացրել են ագրեսիա դրսևորող անձանց:

Սեպտեմբերի 8-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բակային այցերի ընթացքում տեղի է ունեցել բռնության գործադրում և ընդհարում բնակիչներից մեկի և կուսակցության համակիրների միջև: Բակային երթի ժամանակ մի քաղաքացի շքամուտքից դուրս գալով բղավել է «Նիկոլ դավաճան», որից հետո «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության երթի մասնակից համակիրներից երկուսը մոտեցել են քաղաքացուն և սկսել հարվածել: Այնուհետ, տեսնելով, որ դիտորդը և ոստիկանության աշխատակիցը մոտենում են, մի քանի համակիր նրանց հեռացրել են դեպքի վայրից, իսկ երթի մյուս մասնակիցներին հորդորել են արագ առաջ շարժվել: Ոստիկանությունը բռնություն գործադրողներին պատասխանատվության ենթարկելու փորձ չի կատարել:

Դիտորդության իրականացման խոչընդոտներ

Դիտորդների իրավունքները սահմանվում և պաշտպանվում են ՀՀ ընտրական օրենսգրքի 30-32-րդ հոդվածներով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն այդ իրավունքների իրականացմանը խոչընդոտելու համար:

Սեպտեմբերի 6-ին «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդը հերթական շրջայցի ընթացքում այցելել է Կենտրոն վարչական շրջանի Ռուսթավելի 17 հասցե՝ ընտրողների ցուցակների ճշգրտության ստուգման նպատակով: Նույն փողոցի վրա է գտնվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբը: Դիտորդը լուսանկարել է նաև շտաբը, դրա շրջակայքում առկա քարոզչական նյութերը: Այս ընթացքում դիտորդին է մոտեցել թիվ 11 մանկապարտեզի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սոֆիկ Կարապետյանը և ասել, որ դիտորդն իրավունք չունի լուսանկարել շտաբը կամ հարցեր

տալ հասցեների հետ կապված: Կինը վեճի է բռնվել դիտորդի հետ, խոչընդոտել է լուսանկարահանմանը, վերցրել և հրաժարվել է վերադարձնել դիտորդի՝ ԿԸՀ կողմից տրամադրված վկայականը: Ս.Կարապետյանին միացել են ևս երկու կին (ենթադրաբար՝ շտաբի աշխատակիցներ), վեճի բռնվել դիտորդի հետ՝ նրա իրավունքների իրացման կապակցությամբ: Տվյալ դեպքի առիթով «Ականատես»-ը հաղորդում է ներկայացվել ՀՀ դատախազություն:

Մեկ այլ դեպքում, դիտորդը լուսանկարել է Արտաշատի համայնքապետարանի և Արարատի մարզպետարանի աշխատակիցների խմբի կազմակերպված մասնակցությունը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ամփոփիչ հանրահավաքին, որից հետո նրան են մոտեցել այդ խմբի որոշ ներկայացուցիչներ, դրսևորել ագրեսիվ վարքագիծ և սպառնալիքներ հնչեցնելով ստիպել, որպեսզի դիտորդը ջնջի խմբի լուսանկարները:

Սեպտեմբերի 13-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակի առաջին համար Տ. Ավինյանը «24 Նյուզ» լրատվական ալիքի «Հարցազրույց» հաղորդման ընթացքում (15:35-21:06 րոպեներ) «Ականատես» դիտորդական առաքելությանը մեղադրել է «մանիպուլյացիայի», «իրականությանը չհամապատասխանող» տվյալներ հրապարակելու մեջ: Նա նշել է, որ «Ականատես»-ի անաչառության առումով առկա են «լուրջ և խորքային խնդիրներ», որ ինքը «կասկածում է» առաքելության տրամաբանությանը, անաչառությանը, ինչպես նաև հարցականի տակ է դրել դիտորդական կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրները: Նա նաև եթերում առաջարկել է «Ականատես»-ի անունն իր մոտ չտալ: Տիգրան Ավինյանի կողմից «Ականատես» դիտորդական առաքելության բարի համբավը արատավորող և վիրավորական մի շարք արտահայտություններ են հնչել նաև սեպտեմբերի 6-ին լրագրողների հետ ունեցած զրույցի (42:30 րոպեից) և սեպտեմբերի 15-ին Սիվիլնեթի տաղավարում տեղի ունեցած հարցազրույցի (07:30 - 14:55 րոպեներ) ժամանակ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակի 83-րդ համարի ավագանու թեկնածու Գնել Սարգսյանը սոցիալական ցանցի իր էջում, ինչպես նաև դիտորդական առաքելության ֆեյսբուքյան պաշտոնական էջի մեկնաբանություններում ագրեսիվ ու հայհոյախառը գրառումներ է կատարել՝ ի արձագանք «Ականատես» դիտորդական առաքելության որոշ բացահայտումների:

6. Քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկություն և հաշվետվողականություն

Քաղաքական ուժերի հաշվետվողականության ապահովման տեսանկյունից կարևորագույն փաստաթուղթ են հանդիսանում կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերը, կուսակցությունների/դաշինքի նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Կուսակցությունների ֆինանսական վերահսկողությունը հնարավոր է ապահովել միայն այս փաստաթղթերի համադրման ու վերլուծության միջոցով, իսկ միասնական մոտեցումների բացակայությունը, ոչ ամբողջական ու ներդաշնակ տվյալների տրամադրումը խոչընդոտում են կուսակցությունների, և մասնավորապես՝ նախընտրական քարոզչության օրինականության նկատմամբ վերահսկողությանը:

Կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրեր

ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում, ընտրություններին մասնակցող կուսակցությունները (դաշինքները) ԿԸՀ են ներկայացնում կուսակցության (դաշինքում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր, որը հրապարակվում է կայքում որպես սկանավորված պատկեր: Այս հայտարարագրերի բովանդակության ստույգության, ներկայացվող տվյալների որակի նկատմամբ որևէ պետական վերահսկողություն չի իրականացվում: Օրենքի պահանջներն այս առումով ևս հստակ չեն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԿԸՀ ներկայացվող գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը միասնական մոտեցմամբ չեն լրացվում: Օրինակ՝ մի շարք քաղաքական ուժեր լրացնում են կուսակցության բոլոր նվիրատուների տվյալները՝ նշելով նվիրատուի անուն-ազգանունը, մյուսներն՝ ընդհանրական կերպով նշում են՝ «Նվիրատուներ» և փոխանցված գումարի ընդհանուր չափը: Որոշները չեն ներկայացնում իրենց ունեցած գույքը

Ներկայացվող հայտարարագրերը բավարար մատչելի չեն հանրային վերահսկողության նպատակով: Տվյալները մեքենայաընթեռնելի չեն և հնարավորություն չեն տալիս դրանք ենթարկել մշակման, վերաօգտագործման և վերարտադրման:

Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրեր

ՀՀ ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունները և դաշինքները նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման հետ կապված ծախսերն իրականացնում են նախընտրական հիմնադրամների միջոցների հաշվին, իսկ դրանցում կատարված նվիրատվությունների և գումարների օգտագործման վերաբերյալ հայտարարագրեր են ներկայացնում ԿԸՀ ՎՎԾ: Երևանի ավագանու ընտրությունների պարագայում հայտարարագրերը ներկայացվում են երեք ժամանակահատվածների համար՝ նախընտրական քարոզչության մեկնարկից հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփումից՝ ոչ ուշ, քան 3 օր առաջ:

Յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է կուսակցության/դաշինքի նախընտրական հիմնադրամին կատարել մինչև նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով (100,000 ՀՀ դրամ) նվիրատվություն: ԿԸՀ ՎՎԾ-ն ստուգում է հայտարարագրերը, ստուգման արդյունքներով կազմում եզրակացություն և ներկայացնում ԿԸՀ, որը պարտավոր է այն անհապաղ հրապարակել իր համացանցային կայքում:

Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և ծախսերի հայտարարագրումը ևս իրականացվում է ոչ միասնական մոտեցմամբ: Որոշ մասնակիցներ հայտարարագրերում նշում են նախընտրական շտաբների հասցեն և դրանց վրա կատարված ծախսերը, մյուսները՝ ներկայացնում շտաբների ծախսը առանց համապատասխան հասցեի նշման: Երկարաժամկետ դիտորդների կողմից փաստացի այցելած որոշ շտաբներն, այդ թվում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 21 շտաբը, առհասարակ արտացոլված չեն

եղել հայտարարագրերում: Որոշ դեպքերում կուսակցությունների կենտրոնական գրասենյակները ներառվել են շտաբների ցանկում, այլ դեպքերում՝ ոչ, մինչդեռ ամենայն հավանականությամբ նրանց՝ Երևանում գտնվող բոլոր գրասենյակները օգտագործվել են որպես նախընտրական շտաբներ:

Հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օգոստոսի 30-ին «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի հիմնադրամ միևնույն անուն-ազգանվամբ ֆիզիկական անձի կողմից մուտքագրվել է թվով 6 նվիրատվություն՝ յուրաքանչյուրը 100,000 ՀՀ դրամի չափով, սակայն ԿԸՀ ՎՎԾ կողմից սեպտեմբերի 8-ին հրապարակված եզրակացության համաձայն «հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել»: «Ականատես»-ի հարցմանն ի պատասխան ԿԸՀ-ն տեղեկացրել է, որ իր կողմից ձեռնարկված քայլերի արդյունքում նվիրատվությունների՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող 500,000 ՀՀ դրամը օրենքի պահանջին համապատասխան փոխանցվել է ՀՀ պետական բյուջե, ինչը ևս, փաստորեն, արտացոլված չէր եզրակացությունում:

Մասնակից քաղաքական ուժերի նախընտրական հիմնադրամների հայտարարագրերի ուսումնասիրությունը ի հայտ բերեց մի շարք՝ հիմնադրամներին իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների դեպքեր, ինչն արգելված է օրենքով: Այսպես «Ապրելու երկիր» կուսակցության դեպքում արձանագրվել է մեկ իրավաբանական անձի՝ «Գրին Վեյ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրամին նվիրատվություն 360,000 ՀՀ դրամի չափով: «Հանրապետություն» կուսակցության նախընտրական հիմնադրամին նվիրատվության է արել «Սիտի Սայնս» ՍՊԸ-ն 382,000 ՀՀ դրամի չափով: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դեպքում իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունները երեքն են՝ «Կորիզ-Մ» ՍՊԸ-ից, «Ա Թիվի»-ից և «Շարկ» ՍՊԸ-ից, համապատասխանաբար 19,247,240, 3,200 և 127,000 ՀՀ դրամ: Օրենքի խախտմամբ կատարված նվիրատվությունների պետական բյուջե փոխանցվելու հանգամանքը արձանագրված է առաջին երկու կուսակցությունների նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում: ՎՎԾ-ն իր վերջին՝ սեպտեմբերի 23-ի եզրակացությունում ընդհանուր ձևակերպումներով արձանագրում է, որ եղել են նվիրատվության գումարի առավելագույն չափի գերազանցման, անանուն նվիրատվության և ընտրելու իրավունք չունեցող անձի նվիրատվության դեպքեր, որոնք փոխանցվել են պետական բյուջե, սակայն հստակեցված չեն կուսակցություններն ու մուծումները, գումարները չեն համապատասխանում կուսակցությունների հայտարարագրած թվերին:

Ինչպես և գույքի և եկամուտների հայտարարագրման պարագայում, նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը մատչելի չեն ուսումնասիրության և վերլուծության համար: Ներկայացվող տվյալների ձևաչափը բաց և մեքենայաընթեռնելի չէ և հնարավորություն չի տալիս տվյալները ենթարկել մշակման, վերաօգտագործման և վերարտադրման:

Խնդրահարույց է, որ ԿԸՀ ՎՎԾ-ի կողմից պատշաճ արձանագրում չեն ստանում բոլոր փնթի և ոչ լիարժեք տվյալները: Մանրամասն չեն ներկայացվում վերհանված խնդիրներն ու լուծումները, և տեսանելի չէ տվյալ կառույցի կողմից վերահսկողության արդյունավետությունը:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունները

Կուսակցությունը, ըստ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում՝ հրապարակել հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը, իսկ նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:

Դիտարկման արդյունքում բացահայտվել են մի շարք դեպքեր, երբ կուսակցությունները չեն ներկայացրել տարեկան հաշվետվությունները, ներկայացրել են դրանք սահմանված ժամկետների զգալի խախտմամբ, չեն կատարել նախատեսված դեպքերում աուդիտորական եզրակացությունը հրապարակելու պահանջը: Ներկայացված տվյալները ոչ միշտ են մեքենայաընթեռնելի՝ բաց ձևաչափով:

Բացի այդ, նկատվել է տվյալների անհամապատասխանություն Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախորդ տարված տարեկան հաշվետվությունների և ընտրություններին գրանցումից հետո ներկայացվող գույքի և եկամուտների մասին հայտարարագրերի միջև: Տարեկան հաշվետվություններում տվյալները լիարժեք չեն, ինչը վերահսկողության տեսանկյունից ստեղծում է դժվարություններ և կուսակցությունների փաստացի գույքի մասին աղճատված ու հատվածային պատկեր:

7. Քվեարկության օր

2023 թ. սեպտեմբերի 17-ին «Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է Երևան քաղաքի ավագանու ընտրությունների քվեարկության օրվա դիտարկում:

Մասնակցություն

Քվեարկությանը մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների մոտ 28.46%-ը, որն ամենացածր ցուցանիշն է Երևան քաղաքի ՏԻՄ ընտրությունների պատմության ընթացքում:



Քվեարկության օրվա ընթացքում ընտրողների մասնակցության դինամիկան էական անոմալիաներ չի գրանցել և համամասնորեն է բաշխվել ըստ ժամերի:



Առավել ակտիվ մասնակցություն արձանագրվել է Ավան (32.22%), Դավթաշեն (31.98%)և Նորք-Մարաշ (31.07%)վարչական շրջաններում, իսկ ամենապասիվը՝ Էրեբունի վարչական շրջանում (24.35%):

Դիտարկված տեղամասերում քվեարկության նախապատրաստման, բուն քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացները հիմնականում կազմակերպվել են օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ առանց լուրջ խախտումների: Ընդհանուր առմամբ, քվեարկության օրն անցել է խաղաղ:

Արձանագրված էական խախտումները եղել են տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ, դրվագային և չհամակարգված: Քվեարկության գաղտնիությանն առնչվող խնդիրները հիմնականում կապված են եղել ընտրատեղամասի և/կամ քվեարկության սենյակի անհաջող ընտրության կամ սխալ կահավորման հետ: Տեխնիկական և ընթացակարգային խնդիրները պայմանավորված են եղել ՏԸՀ անդամների մոտ անհրաժեշտ գիտելիքի բացակայությամբ կամ իրականացվող աշխատանքի նկատմամբ անկարգապահ և անպատասխանատու վերաբերմունքով: Խախտումների մասին դիտորդի գնահատականը գրանցամատյանում չգրանցելու դեպքերը ի ցույց են դրել որոշ ՏԸՀ նախագահների և/կամ քարտուղարների վերաբերմունքը օրենքի պահանջների նկատմամբ:

Նախապատրաստական փուլ

Մի քանի տասնյակ ընտրատեղամասերում արձանագրվել է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության համար պատշաճ պայմանների բացակայության խնդիր, չնայած որ դրանք ԿԸՀ կայքում ներառված են եղել «մատչելի» կամ «մասամբ մատչելի» տեղամասային կենտրոնների ցանկում: Ինչպես պարզվել է հետագայում, այդպիսի կարգավիճակ ամրագրելիս ԿԸՀ-ն ոչ բոլոր դեպքերում է փաստացի ստուգել տարածքները:

Արձանագրվել է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքն ուշ տպելու և սխալ պահպանման երկու տիպի խնդիր մի շարք տեղամասերում.

- Բազմաթիվ տեղամասերից ստացված տեղեկատվության արդյունքում բացահայտվել է, որ տեխնիկական սարքավորումները ընտրողների բացակայության մասին տեղեկանքը կարողանում են տպել միայն ժամը 08:00-ից ոչ շուտ, ինչը հակասում է օրենքով սահմանված տրամաբանությանը, որտեղ ժամը 08:00-ի դրությամբ նախապատրաստական գործընթացները պետք է ավարտված լինեն, և ՏԸՀ-ները բացվեն՝ ընտրողներին ընդունելու համար:

- 9/47 տեղամասում տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը սոսնձվել է գրանցամատյանում միայն 12:50-ին՝ դիտորդի դիտարկման հիման վրա: Մինչ այդ տեղեկանքները պահվել են չհրկիզվող պահարանում: Այդ մասին գրանցամատյանում կատարվել է գրառում:
- 2/48 տեղամասում տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը ժամը 11:30-ին դեռևս չի սոսնձվել գրանցամատյանում: Այս սխալն ուղղվել է դիտորդների կողմից փաստն արձանագրելուց հետո միայն: Մինչ այդ տեղեկանքը պահվել է հանձնաժողովի նախագահ Գայանե Ալեքյանի կողմից ինչ-որ գրքույկի մեջ՝ ենթադրաբար ուղեցույցում: Այդ մասին գրանցամատյանում կատարվել է գրառում:

Արձանագրվել է չիրկիզվող պահարանի բացման և քվեատուփը պատշաճ կնքելու հետ կապված խնդիր հետևյալ տեղամասերում.

- 6/3 և 10/43 տեղամասերում չիրկիզվող պահարանը բացվել է մինչև ժամը 07:00-ը տեղի ունենալիք ՏԸՀ նիստը, ընդ որում՝ ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնք չպետք է ներկա գտնվեին տեղամասում:
- 8/27 տեղամասում արձանագրվել է քվեատուփի փակման և կնքման կարգի խախտում:
- 8/38 ընտրատեղամասում քվեատուփը կնքված չի եղել: Խնդիրը շտկվել է դիտորդի կողմից գրանցամատյանում գրառում կատարելուց հետո:

Երկու տեղամասում նկատվել է կողմնակի անձանց ներկայություն.

- 2/40 տեղամասում գտնվել է կողմնակի անձ, որը զրուցել է ՏԸՀ նախագահ Արմինե Քոչարյանի հետ, այնուհետ միասին մուտք են գործել քվեարկության սենյակ և շարունակել խոսել տեխնիկական սարքավորումների վերաբերյալ: Դիտորդի հարցմանը ՏԸՀ նախագահը պատասխանել է, որ նա դատախազի թիկնապահն է և քվեարկության կարգն էր հարցնում:
- 4/34 տեղամասում ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկի շտաբի պետը մոտեցել է ՏԸՀ անդամներից մեկին և զրուցել վերջինիս հետ, սակայն մեկ րոպե անց նա հեռացվել է ընտրատեղամասից՝ դիտորդի առաջարկով:

Քվեարկություն

Ընտրողների ընտրելու իրավունքի իրացման հետ կապված արձանագրվել է երեք դեպք երկու տեղամասում.

- 6/06 ընտրողների ցուցակում ներառված երկու անձի տվյալները, ըստ սարքի ազդանշանի, առկա չեն եղել տեխնիկական սարքում: Անձանցից մեկն այնուհետև կարողացել է մասնակցել քվեարկությանը՝ նույնականացման քարտը տեխնիկական սարքի միջոցով ընթերցելուց հետո: Մյուսին չի թույլատրվել քվեարկել և առաջարկվել է ներկայացնել անձը հաստատող այլ փաստաթուղթ, չնայած, որ նա արդեն իսկ ուներ անձը հաստատող վավեր փաստաթուղթ: Խախտումն արձանագրվել է գրանցամատյանում:
- 10/02 տեղամասում ընտրողների ցուցակում ներառված անձի տվյալները բացակայել են տեխնիկական սարքում, ինչի արդյունքում անձին չի թույլատրվել քվեարկել վավեր փաստաթղթի առկայության պայմաններում: ԸԸՀ-ից նրան ուղղորդել են լրացուցիչ տեղեկանք վերցնելու: Խախտումն արձանագրվել է գրանցամատյանում:

Քվեաթերթիկների տրամադրման և քվեատուփի հետ կապված արձանագրվել է երեք խնդիր.

- 5/2 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամը քվեաթերթիկներն առանձնացնելիս չի ներառել 12 համարի քաղաքական ուժի քվեաթերթիկները: ՏԸՀ նախագահի նկատողությունից հետո իրավիճակը շտկվել է:

- 7/60 ընտրատեղամասում ակնհայտորեն պակաս են եղել 4-րդ և 14-րդ համարի քվեաթերթիկները: Դիտորդի կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո հանձնաժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը լրացրել է քվեաթերթիկների տրցակները:
- 7/13 տեղամասում քվեատուփի համար պատասխանատու ՏԸՀ անդամը յուրաքանչյուր ընտրողի քվեարկությունից հետո չի փակել քվեատուփի ճեղքը: Դիտորդի գնահատականը գրանցվել է գրանցամատյանում, խախտումը չի շարունակվել:

Երեք տեղամասում նկատվել է կահավորման և քվեարկության գաղտնիության ապահովման խնդիր՝ երբեմն պայմանավորված ընտրատեղամասի և/կամ քվեարկության սենյակի անհաջող ընտրությամբ.

- 1/01 ընտրատեղամասի քվեարկության սենյակի կահավորումը չի երաշխավորել քվեարկության գաղտնիության իրավունքը: Քվեախցիկների կողքին առկա է եղել դուռ, որով ելումուտ են արել ՏԸՀ անդամները: Դիտորդների՝ վերակահավորելու վերաբերյալ առաջարկը մերժվել է:
- 8/23 տեղամասում ժամը 17:40-ին արձանագրվել է «Հայաստան» դաշինքից ՏԸՀ անդամ Սվետլանա Ղարախանյանի կողմից քվեարկության գաղտնիության խախտում: Դրոշմանիշեր փակցնելու համար պատասխանատու՝ հանձնաժողովի տվյալ անդամը սխալ կահավորման արդյունքում այնքան մոտ է նստած եղել քվեարկության խցիկին, որ նրան տեսանելի են եղել քվեարկությունները: Նա դիտողություններ է արել, որպեսզի ընտրողները քվեաթերթիկները չծալեն, չպատռեն և չփչացնեն: Հանձնաժողովի նախագահ Աստղիկ Աղեկյանը վերացրել է խախտումը՝ քվեախցիկից հնարավորինս հեռու տեղադրելով դրոշմանիշ փակցնող հանձնաժողովի անդամի սեղանը: Դիտորդի գնահատականը գրանցվել է գրանցամատյանում:
- 10/12 տեղամասում քվեախցիկների կողքին առկա էր դուռ, որը փակված չէր, և կարող էր օգտագործվել հանձնաժողովի անդամների կողմից: Դուռը փակելու համար դպրոցի տնօրենի կողմից բանալի չէր տրամադրվել հանձնաժողովի նախագահին:

Դիտարկվել է քվեարկողին օգնելու կարգի խախտման մեկ դեպք.

- Թիվ 1/14 տեղամասում ընտրողն առանց ՏԸՀ նախագահի թույլտվության տեղամաս է մուտք գործել օգնողի հետ համատեղ, մինչդեռ վերջինս չի հանդիսացել տվյալ տեղամասի ընտրող: Դիտորդը դեպքի կապակցությամբ դիմել է հանձնաժողովի նախագահ Աննա Տիգրանյանին՝ գրանցամատյանում գրառում կատարելու համար, որը սակայն մերժել է խախտման վերաբերյալ գնահատականը գրանցելու դիտորդի պահանջը:

Ընտրատեղամասերում և դրանց հարակից տարածքներում նկատվել է կողմնակի անձանց ներկայության, իսկ որոշ դեպքերում՝ ընտրողների մասնակցության նկատմամբ ենթադրյալ վերահսկողության կամ վերահսկողության փորձի 13 դեպք:

- 2/04 տեղամասային կենտրոնից 50 մետր շառավղով տարածքից դուրս, սակայն մեկուկես ժամ շարունակ, գտնվել է մեկ անձ մի քանի այլոց հետ միասին, որոնք սակայն պարբերաբար փոփոխվել են: Տվյալ անձը պարբերաբար դիմավորել է տեղամաս գնացող անձանց և խոսել նրանց հետ: Նա ընտրատեղամասում գրանցված է եղել որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձ: Հեռանալու մասին մի շարք հորդորներին նա բացասական է արձագանքել՝ պատճառաբանելով, որ գտնվում է իր բակում: Հանձնաժողովի նախագահ Հակոբ Պապոյանի հետ զրույցի արդյունքում նա ի վերջո հեռացել է:
- 2/30 տեղամասում միևնույն կողմնակի անձը տեղամաս է այցելել երկու անգամ, մեկ անգամ մի տղամարդու, երկրորդ անգամ՝ մի քանի կանանց հետ: Դիտորդի լուսանկարելուց հետո նա լքել է տեղամասային կենտրոնը:
- 6/18 և 6/19 ընտրատեղամասերի դիմաց ներկա են եղել երեք անձիք, ովքեր ցուցակներով զանգեր են կատարել՝ փորձելով ճշտել թե արդյոք համապատասխան անձինք եկել են տեղամաս թե ոչ և/կամ որտեղ են: Դիտորդի կողմից դեպքը արձանագրելուց և նկարահանելուց հետո նրանք հեռացել են տեղամասային կենտրոնի տարածքից: Այնուհետև, միևնույն անձինք նկատվել են այլ՝ թիվ 6/32 տեղամասային կենտրոնի մոտ, որտեղ կարճատև հանդիպում են ունեցել «Մայր Հայաստան» դաշինքի վստահված անձ Լուսինե Ջամալյանի հետ և լքել տեղամասը՝ նկատելով դիտորդների կողմից արձանագրման փաստը: Որոշ ժամանակ անց նշված անձանցից երկուսը նկատվել են նաև 6/44 տեղամասի առջևում՝ մի քանի այլ անձանց հետ խոսելիս: Դեպքի առնչությամբ հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն հանցագործության մասին:
- 7/44 տեղամասում ժամը 19:10-ի սահմաններում արձանագրվել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձ Ալիետա Զաքարյանը իր հեռախոսը փոխանցել է հանձնաժողովի նախագահ Հասմիկ Սարգսյանին, ով իր հետ խոսող անձին այդ հեռախոսազրույցի ընթացքում ասել է, թե չի կարող որևէ տվյալ տրամադրել՝ նշելով որ դրանք կարող է տրամադրել միայն ԿԸՀ-ին, այնուհետև հեռախոսը փոխանցել է վստահված անձին: Երբ դիտորդը խախտման վերաբերյալ իր գնահատականը լրացրել է գրանցամատյանում, Հ.Սարգսյանը նշել է, որ իրեն ասել են «իրենց թերթիկներ տան քվեարկության ամփոփման մասին նշումներ կատարելու համար», ինչը նա մերժել է: Հանձնաժողովի նախագահը խնդրի վերաբերյալ կապ է հաստատել նաև ԿԸՀ հետ, որտեղից ևս հաստատել են իր գործողությունների ճշտությունը: Դիտորդի գնահատականը գրանցվել է գրանցամատյանում:
- 8/40 տեղամասային կենտրոնում և դրան հարակից տարածքում շուրջ 30 րոպե ներկա է գտնվել տվյալ շենքում տեղակայված թիվ 75 դպրոցի տնօրենը՝ առաջարկելով իր օգնությունը աշխատանքները կազմակերպելու հարցում: Հանձնաժողովի նախագահ Թագուհի Թեքիրյանի միջնորդությամբ տվյալ անձը հեռացել է տեղամասային կենտրոնից:

- 9/22 ընտրատեղամասում արձանագրվել է «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության ավագանու թեկնածու Մարինե Մալխասյանի ներկայությունը, որը քվեարկության սենյակում գտնվել է շուրջ 40 րոպե և փորձել է միջամտել ՏԸՀ աշխատանքներին: Դիտորդների կողմից հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո, վերջինս փորձել է դուրս հրավիրել թեկնածուին, որը, սակայն, անմիջապես չի հեռացել և դրսևորել է ագրեսիվ վարքագիծ թե՛ դիտորդների, թե՛ ՏԸՀ նախագահի հանդեպ: Ի վերջո, թեկնածուն հեռացվել է ոստիկանության միջամտությամբ: Միջադեպն արձանագրվել է գրանցամատյանում:
- 9/56 տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձ Ռազմիկ Քոչարյանը, շուրջ երկու ժամ գրանցամատյանում գրանցված լինելով հանդերձ, բացակայել է քվեարկության սենյակից: Նա գտնվել է քվեասենյակին հարող տարածքում, այնուհետ՝ բակում, որտեղ զրուցել է մի խումբ անձանց հետ: Դիտորդի նկատողությունից հետո վստահված անձը վերադարձել է քվեասենյակ: Գրանցամատյանի վարման կարգի խախտման կապակցությամբ դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահ Աշոտ Շադունցին՝ իր գնահատականը գրանցելու գրանցամատյանում, սակայն գրանցումը մերժվել է:
- 9/57 տեղամասում արձանագրվել է կողմնակի անձի ներկայություն: «Ուժը հայրենյաց» կուսակցության ավագանու թեկնածու Արմեն Եղիազարյանը գտնվել է տեղամասում շուրջ 30 րոպե, այնուհետ ՏԸՀ նախագահի հորդորով և ոստիկանության միջամտությամբ հեռացվել է տեղամասից: Միջադեպն արձանագրվել է գրանցամատյանում:
- 10/15 տեղամասում արձանագրվել է ընտրողների ուղղորդում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձի կողմից, որը դրսևորել է քվեարկողներին հատուկ հայացքներ ուղղելու և նրանց կողմից գլխով համաձայնության ժեստ ստանալու եղանակով: Դիտորդի կողմից արձանագրվել է այդպիսի 5-6 դեպք, ինչի կապակցությամբ հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն հանցագործության մասին:
- 10/28 ընտրատեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձը կատարել է զանգեր, նշումներ հեռախոսում, պարբերաբար հաղորդակցվել է ընտրողների հետ: Դիտորդի բարձրաձայնումից հետո նա պարզաբանել է, որ մարդիկ բարևում են կամ մոտենում են իրեն, քանի որ ճանաչում են:

ԿԸՀ կողմից հեռարձակվող տեսագրությունների դիտարկման արդյունքում և արագ արձագանքման խմբի ուսումնասիրությունից պարզվել է, որ տեղամասերից մեկում եղել է բռնության միջադեպ:

- 9/2 տեղամասում ընտրողների միջև տեղի է ունեցել հրմշտոց, որը սակայն տևել է մի քանի րոպե և հարթվել է կուսակցություններից մեկի վստահված անձի միջամտության շնորհիվ:

Արդյունքների ամփոփում

Ընտրությունների արդյունքների ամփոփման ժամանակ նկատվել է ընթացակարգային երեք խախտում.

- 2/19 տեղամասում, ժամը 20:00-ին, ընտրատեղամասը փակելուց հետո արձանագրվել է, որ տեղամաս ներկայացած երկու թեկնածուները տեսանելի կերպով չեն կրում իրենց վկայականները, դրանք պահելով իրենց ձեռքերում: Դիտորդի կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո այն կարգավորել է:
- 7/42 տեղամասում, ժամը 22:00-ի սահմաններում արձանագրվել է, որ միևնույն տեղամասում միաժամանակ գտնվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2 վստահված անձ, որոնցից մեկը գրանցված չի եղել: Միայն դիտորդի կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո չգրանցված վստահված անձը հեռացել է տեղամասից:
- 10/43 տեղամասում սահմանված նմուշի ճմրթված քվեաթերթիկը հանձնաժողովի քվեարկությամբ համարվել է անվավեր: Դեպքը գրանցվել է գրանցամատյանում:

Արդյունքների աղյուսակավորում

«Ականատեսն» իրականացրել է 10 ԸԸՀ աշխատանքների դիտարկում սեպտեմբերի 17-ին՝ 20:00-ից սկսած: Քվեարկության արդյունքների աղյուսակավորման գործընթացն ընթացել է հիմնականում սահուն: Էական են եղել հետևյալ խախտումները.

Մի շարք ընտրատեղամասերից ներկայացված պարկերը եղել են բաց, ստիպված բացվել են կամ եղել են դրանց հետ կապված այլ խնդիրներ:

- 7/03, 7/04 և 7/47 ընտրատեղամասերի ընտրական պարկերը գտնվել են բաց վիճակում, ինչի կապակցությամբ կազմվել է արձանագրություն և բոլորը փակվել են:
- 2/47, 2/48, 2/27, 2/17, 2/51, 2/16, 2/24 և 4/31 ՏԸՀ-ներից ներկայացված պարկերը բացվել են, քանի որ հանձնաժողովները սխալմամբ դրանց մեջ էին տեղադրել ընտրողների ցուցակների փաթեթները, որոնք պետք է ներկայացվեին պարկի հետ մեկտեղ, սակայն դրանից դուրս:
- 3/31, 5/08, 5/15, 5/3, 5/19, 5/13, 6/41, 9/9, 9/25, 9/26, 9/43, 9/59 ընտրատեղամասերի դեպքում առաջացել է անհրաժեշտություն մեծ պարկը բացելու և այնտեղից հանելու մի քանի պարագաներ, որոնք չպետք է այնտեղ լինեին:
- 4/23 տեղամասի դեպքում պարկը բացվել է, քանի որ դրա մեջ տեղադրված են եղել այնպիսի պարագաներ (ընտրական ցուցակները), որոնք պետք է լինեին փոքր փաթեթների մեջ, իսկ փոքր փաթեթների մեջ հակառակը՝ տեղադրված են եղել պարկի մեջ տեղադրման ենթակա փաստաթղթեր:
- Պարկերում տեղադրման ոչ ենթակա ընտրական փաստաթղթեր/պարագաների առկայություն կամ դրանցում տեղադրման ենթակա փաստաթղթերի՝ փոքր փաթեթներում տեղադրման դեպքեր արձանագրվել են 5/4, 8/5, 9/9, 9/25, 9/26, 9/43, 9/59 տեղամասերի դեպքում:

Մի շարք ընտրատեղամասերի արձանագրություններում առկա են եղել անհամապատասխանություններ:

- 1/03 տեղամասի արձանագրությունում ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվն ու քվեարկության մասնակիցների թիվը (517) ավել է եղել բոլոր թեկնածուների կողմ քվեարկած և անվավեր քվեաթերթիկների հանրագումարի (515) համեմատ: ԸԸՀ-ն եզրակացրել է, որ տարբերությունը պայմանավորված է կտրոն ստացած որոշ ընտրողների կողմից ընտրություն չկատարելով, և ԿԸՀ հետ խորհրդակցելուց հետո ՏԸՀ նախագահին և քարտուղարին հրահանգել են փոփոխել ընտրական պարագաների պարկի հետ ԸԸՀ ներկայացված 2 արձանագրություններում ներառված ելակետային տվյալները՝ քվեարկության մասնակիցների թիվը և ընտրողներից ստացված կտրոնների թիվը՝ դրանք դարձնելով 515: Կատարված փոփոխությունները ԸԸՀ-ի կողմից չեն գրանցվել գրանցամատյանում: Դիտորդի գնահատականը գրանցվել է գրանցամատյանում:
- 1/11 տեղամասի երկու արձանագրություններում որպես քվեարկության մասնակիցների թիվ և ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվ նշվել է 603-ը, այնինչ բոլոր կուսակցություններին «կողմ» քվեարկած և անվավեր քվեաթերթիկների հանրագումարը կազմել է 606: ՏԸՀ նախագահն ու քարտուղարը, միմյանց հետ քննարկելով, հայտարարել են, թե «Հանրային ձայն» կուսակցության «կողմ» քվեարկված թերթիկների թիվը արձանագրվել է սխալ, 73-ի փոխարեն՝ 79-ը: Այս դեպքում ևս ԸԸՀ հանձնարարականով փոփոխվել են արձանագրությունների ելակետային տվյալները՝ թե՛ «Հանրային ձայն» կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը (73), թե՛ քվեարկության մասնակիցների թիվն ու ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվը (600):
- 5/17, 5/14, 5/07 ընտրատեղամասերի ներկայացրած արձանագրություններում բացահայտվել են ընտրողներից ստացված քվեարկության կտրոնների թվի և չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թվի գումարի և ՏԸՀ-ին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թվի տարբերություններ: Անճշտությունների արձանագրման հիման վրա ՏԸՀ անդամները ուղղումներ են մտցրել արդյունքների ամփոփման արձանագրությունների մեջ:
- 3/5 ՏԸՀ-ն անավարտ արձանագրություն էր ներկայացրել ԸԸՀ, որի լրացումն ավարտել են ԸԸՀ-ում:
- 9/24 ՏԸՀ--ի անդամները չէին ստորագրել արձանագրությունները և այդ տեսքով էին ներկայացրել ԸԸՀ: Ժամը 05:00-ին անդամներին կանչել են ԸԸՀ, որպեսզի ստորագրեն արձանագրությունները:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանք

Ընտրատեղամաս դիտորդների մուտքը խոչընդոտելու վերաբերյալ արձանագրվել է մեկ դեպք.

- 8/35 տեղամասում որոշակիորեն խոչընդոտվել է «Ականատես»-ի երկու դիտորդների միաժամանակյա ներկայությունը՝ հանձնաժողովի նախագահ Արայիկ Գալստյանի և քարտուղար Կարինե Շախբազյանի կողմից երկու դիտորդի ներկա գտնվելու իրավաչափության վերաբերյալ հստակ դիրքորոշում չունենալու հետևանքով: ԸԸՀ-ի հետ մի քանի անգամ կապ հաստատելուց հետո (այդ թվում՝ «Ականատես»-ի համակարգող կենտրոնի կողմից) խնդիրը կարգավորվել է մոտ 20 րոպե անց:

ՏԸՀ աշխատանքներում նկատվել են բազմաթիվ տեխնիկական թերացումներ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին տիրապետելու և քվեարկության գործընթացը լիարժեք կազմակերպելու առումով: Օրինակ՝

- 2/37 տեղամասում ժամը 19:10-ի դրությամբ արձանագրվել է, որ հանձնաժողովի նախագահ Աննա Հարությունյանն ու քարտուղար Ինգա Հովհաննիսյանը վաղօրոք ստորագրել են գրանցամատյանում զետեղված արդյունքների ամփոփման նիստի արձանագրությունը: Դիտորդի գնահատականը գրանցվել է գրանցամատյանում:
- 5/2 ընտրատեղամասում գրանցամատյանում գրանցումները հանձնաժողովի նախագահ Միքայել Կիրակոսյանի և քարտուղար Նելլի Թանգամյանի կողմից իրականացվել են մատիտով: Դիտորդի նկատառումից հետո խնդիրը կարգավորվել է:
- 6/15 տեղամասում խախտվել է վիճակահանությամբ սահմանված՝ ՏԸՀ անդամների գործառույթներ իրականացնելու հերթափոխը: Դիտորդի դիտարկմանն ի պատասխան ՏԸՀ անդամները նշել են, որ հերթականությունը փոխվել է պայմանավորված այն հանգամանքով, որ նշված հանձնաժողովի անդամ ունի տեսողության խնդիր: Դիտորդի գնահատականը գրանցվել է գրանցամատյանում:

Քվեարկության օրն արձանագրվել են հյուրասիրության դեպքեր, ինչը կարող է պարունակել ռիսկեր ընտրական հանձնաժողովների անդամների անկաշկանդ գործունեության համար:

- Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Արմեն Միերյանը, ով նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 37-րդ համարն է, սննդի հյուրասիրություն է կազմակերպել թիվ 2 ընտրատարածքի ՏԸՀ անդամների համար:
- Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Կամսար Բաբինյանը, ով նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 23-րդ համարն է, սննդի հյուրասիրություն է կազմակերպել թիվ 6 ընտրատարածքի ՏԸՀ-ների անդամների համար:

8. Դիմում-բողոքներ և հաղորդումներ պետական մարմիններին

Դիտորդների կողմից արձանագրված ընտրախախտումների վերաբերյալ «Ականատես»-ը 3 դիմում-բողոք է ներկայացրել ընտրական հանձնաժողովներին և 4 հանցագործության մասին հաղորդում՝ իրավապահ մարմիններին:

ԸԸՀ ներկայացված դիմում-բողոքներ

Դիտորդական առաքելության կողմից սեպտեմբերի 19-ին թիվ 6 և թիվ 10 ԸԸՀ ներկայացվել է 2 դիմում-բողոք:

Ներկայացված դիմում-բողոքներով վարչական վարույթի հարուցումը մերժվել է այն հիմքով, որ վերհանված խախտումներն արդեն իսկ ՏԸՀ գրանցամատյաններում առկա են և քննարկվել են ԸԸՀ-ների կողմից:

ԿԸՀ ներկայացված դիմում-բողոքներ

Սեպտեմբերի 20-ին մեկ դիմում-բողոք է ներկայացվել ԿԸՀ՝ դիտորդական նախաձեռնության շրջանակներում արձանագրված մի շարք ընտրախախտումների, մասնավորապես՝ քվեարկության արդյունքների ամփոփման արձանագրություններում տեղ գտած թերությունների, տվյալների միջև հակասությունների, անավարտ, քվեարկության արդյունքների ամփոփման չստորագրված արձանագրություններ ներկայացված լինելու, ընտրողների ցուցակները, ընտրական պարագաները ընտրատեղամասերից ներկայացված պարկերում սխալմամբ տեղադրված լինելու, ընտրական պարկերը բաց վիճակում ներկայացված լինելու դեպքերով:

ԿԸՀ-ն՝ ներկայացված դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը մերժել է այն հիմնավորմամբ, որ դիմումատու հասարակական կազմակերպությունը չի հանդիսանում դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, ինչով պայմանավորված՝ ԿԸՀ-ն չի քննարկել դիմում-բողոքով ներկայացված ընտրախախտումները և թողել է անհետևանք, առանց գնահատելու և օրենսդրությամբ սահմանված միջոցներ ձեռնարկելու:

Նման մեկնաբանությունը և դրան համապատասխան ձևավորված իրավակիրառ պրակտիկան իրավաչափ չէ և հակասում է ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, ինչպես նաև ժողովրդավարական ընտրությունների բնագավառում սահմանված միջազգային չափորոշիչներին: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Այս իրավունքի շրջանակներում պետք է ներառվի նաև յուրաքանչյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը, քանի որ ընտրելու իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այդ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա և հետևաբար՝ յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի լիարժեք իրականացման վրա: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ ընտրողի, դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում- բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ պետք է ենթակա լինեն, ըստ էության, քննության և գնահատման: Հակառակ մեկնաբանությունը հանգեցնում է ընտրական իրավունքի էության խախտմանը:

Այս խնդիրը բարձրացվել է նաև միջազգային կազմակերպությունների և մարմինների կողմից ՀՀ-ին տարիներ շարունակ ներկայացվող հանձնարարականների միջոցով:

Միջազգային կազմակերպությունների դիտարկումները

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) կողմից՝ ՀՀ Նախագահի 2013 թ. փետրվարի 18-ի ընտրությունների վերաբերյալ հրապարակված Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում ներկայացվել է առաջարկ ՀՀ ընտրական օրենսգիրքը փոփոխելու վերաբերյալ՝ իրավունք վերապահելով քաղաքացիներին, տեղական դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին՝ դիմումներ ներկայացնելու ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների, անօրինական քարոզչության իրականացման, ինչպես նաև ընտրությունների արդյունքների դեմ:

ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Հանուն ժողովրդավարության՝ օրենքի միջոցով (Վենետիկի) հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2016 թ. հունիսի 13-ին հաստատված համատեղ կարծիքով շեշտվել է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում արդեն իսկ առաջարկվել էր փոփոխել ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ քաղաքացիներին, հավատարմագրված դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին իրավունք ընձեռելով բողոքարկել ընտրական հանձնաժողովների որոշումները և գործողությունները, նախընտրական քարոզչության ընթացքում ոչ իրավաչափ գործունեությունը և ընտրությունների արդյունքները, ինչպես նաև հեշտացնելու ընտրություններին առնչվող դիմումների ներկայացման և բողոքարկման ընթացակարգը և սահմանելու ավելի երկար ժամկետ՝ քվեարկության օրը տեղի ունեցած խախտումների և ընտրությունների արդյունքների բողոքարկման համար:

ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2016 թ. հոկտեմբերի 17-ին հաստատված համատեղ կարծիքով (CDL-AD(2016)031) նշվել է, որ նախորդ՝ 2016 թ. հունիսի 13-ի համատեղ կարծիքով ներկայացված առանձին առաջարկություններ այդպես էլ չեն կատարվել, և հատկապես շեշտադրվել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնման վերաբերյալ տրված հանձնարարականը:

Նույն խնդիրը արձանագրվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից 2018 թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների վերաբերյալ հրապարակված ամփոփիչ զեկույցով:

ԵԽ Վենետիկի հանձնաժողովը ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ հրապարակված վերջին ամփոփիչ կարծիքով (CDL-AD(2023)030 ODIHR-481/2023, para 64) վերահաստատել է ՀՀ Ընտրական օրենսգրքով քվեարկության/ընտրությունների արդյունքները անմիջականորեն ընտրողների, դիտորդների և դիտորդական կազմակերպությունների կողմից վիճարկելու իրավունքի սահմանման առաջարկը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18:00-ն, ստացված դիմումներին ԸԸՀ-ները և ԿԸՀ-ն պատասխանում են, իսկ ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ ԸԸՀ-ն՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ: Տվյալ դրույթի ուժով փաստացի բացառվում է ԿԸՀ կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը ԸԸՀ-ների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը, քանի որ այն պարտավորված է մինչև արդյունքների ամփոփումը քննել միայն այն բողոքները, որոնք ներկայացվել են մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18:00-ն, մինչդեռ ԸԸՀ-ն իրավասու է որոշում կայացնել նաև նշված վերջնաժամկետից հետո:

Իրավակիրառ պրակտիկայում ԸԸՀ-ների ճնշող մեծամասնությունը որոշումներ է կայացնում ԿԸՀ դիմելու վերջնաժամկետի նույն օրը կամ նույնիսկ դրան հաջորդող օրը: Սահմանված վերջնաժամկետներն, ըստ էության, իմաստազրկում են ԸԸՀ որոշումների բողոքարկումը ԿԸՀ, քանի որ բողոք ներկայացնելու դրությամբ արդեն իսկ սպառված է լինում՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը այն ԿԸՀ-ի կողմից քննելու հնարավորությունը: Հետևաբար, տվյալ իրավակարգավորումը և դրան համապատասխան ձևավորված իրավակիրառ պրակտիկան վկայում են ընտրական հանձնաժողովների գործողությունները/որոշումները վիճարկելու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության մասին:

Իրավապահ մարմիններին ներկայացված հաղորդումներ

«Ականատես» դիտորդական առաքելության անունից առերևույթ քրեաիրավական բնույթ ունեցող խախտումները բացահայտելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել չորս հաղորդում.

1. 2023 թ. սեպտեմբերի 4-ին՝ հաղորդում հավաքին (քայլերթին) մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու դեպքով (ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդված).
2. 2023 թ. սեպտեմբերի 8-ին՝ հաղորդում կուսակցության շտաբի ներկայացուցիչների կողմից նախընտրական քարոզչության դիտարկման շրջանակում դիտորդի լիազորությունների իրականացմանը՝ օրենքով չարգելված լուսանկարահանում իրականացնելը խոչընդոտելու դեպքով (ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդված).
3. 2023 թ. սեպտեմբերի 6-ին՝ հաղորդում «Ապրելու երկիր» կուսակցության քարոզարշավի ընթացքում որոշ ընտրողների նվեր-քարտեր տրամադրելու դեպքով (ՀՀ քրեական օրենսգրքի 221/219-րդ հոդվածներ):
4. 2023 թ. սեպտեմբերի 19-ին՝ հաղորդում անձի ընտրական գործընթացներին մասնակցելու իրավունքի ազատ իրականացումը թիվ 6 և թիվ 10 ընտրատարածքների մի շարք տեղամասերում ընտրողներին ուղղորդելու/քվեարկությունը վերահսկելու ենթադրյալ դեպքերի կապակցությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդված):

ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված առաջն երեք հաղորդումներով նախաձեռնվել են քրեական վարույթներ առերևույթ քրեաիրավական բնույթ ունեցող խախտումները բացահայտելու և դեպքերի հանգամանքները պարզելու նպատակով: Վերջին հաղորդմանը ընթացք չի տրվել՝ ընտրախախտումներ չարձանագրելու հիմքով:

«Ականատես» դիտորդական առաքելության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ սեպտեմբերի 15-ի դրությամբ իրավապահ մարմինների կողմից ընթացք է տրվել նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածին վերաբերող, ընդհանուր առմամբ, 17 առերևույթ ընտրական խախտումների վերաբերյալ հաղորդման, որոնց թվում՝ 6-ը վերաբերել է սպառնալիքների կամ նյութապես շահագրգռելու եղանակով օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելուն հարկադրելուն, 3-ը՝ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելուն, 1-ը՝ ընտրողների ցուցակներ կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելուն, 4-ը՝ նախընտրական քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն իրականացնելուց հրաժարվելուն հարկադրելուն կամ նախընտրական քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելուն, 1-ը՝ ընտրական իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելուն:

9. Ավագանու ձևավորում և քաղաքապետի ընտրություն

Ընտրությունների քվեարկության արդյունքներով ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված անցողիկ շեմը (կուսակցությունների համար՝ 4% և դաշինքների համար՝ 6%) հաղթահարել և ավագանու կազմում ներգրավվել է 5 քաղաքական ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիր» (32.57%), «Ազգային առաջընթաց» (18.89%), «Հանրապետություն» (11.32%) և «Հանրային ձայն» (9.68%) կուսակցությունները և «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքը (15.43%):



Առավել մեծաքանակ ձայներ «Քաղաքացիական պայմանագիր»-ը ստացել է Շենգավիթ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում, առավել փոքրաթիվ՝ Նորք-Մարաշում և Նուբարաշենում:

Քվեարկության արդյունքների ամփոփում՝ ըստ վարչական շրջանների



Երևանի քաղաքապետի ընտրություն

Երևանի ավագանու նիստերի, այդ թվում՝ քաղաքապետի ընտրության առաջին նիստի իրավազորությունն ապահովելու համար հարկավոր է ավագանու անդամների ընդհանուր թվի (65 անդամ) մեծամասնության ներկայությունը՝ 33 և ավելին: Ավագանու անդրանիկ նիստին ընդառաջ «Ազգային առաջընթաց»-ն առաջարկել է իրենց որպես ընդդիմադիր դիրքավորող «Մայր Հայաստան»-ին և «Հանրային ձայն»-ին չմասնակցել նիստին, որպեսզի վերջինս չկայանա և ստեղծվեն հիմքեր արտահերթ ընտրություններ հայտարարելու համար:

Հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ Երևանի նորընտիր ավագանու առաջին նիստը: «Ազգային առաջընթաց» և «Մայր Հայաստան» խմբակցությունները չմասնակցեցին ավագանու անդրանիկ նիստին: «Հանրային Ձայն» խմբակցության 7 ավագանու անդամներից ավագանու նիստին ներկայացան 5-ը, ըստ էության՝ ապահովելով անհրաժեշտ 37 ավագանու անդամի ներկայությունը և Երևանի քաղաքապետի ընտրության հնարավորությունը:

Որպես քաղաքապետ առաջադրված էր մեկ թեկնածու՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջին համար Տիգրան Ավինյանը, ում ընտրվելու համար հարկավոր էր ստանալ ներկա ավագանու անդամների ընդհանուր թվի 40%-ի, այսինքն՝ 26-ի «կողմ» ձայները:

Տիգրան Ավինյանը ստացավ 32 «կողմ» (ամենայն հավանականությամբ՝ հենց «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» խմբակցությունների ավագանու անդամների ձայները) և 5 «դեմ» ձայն, ինչի արդյունքում ընտրվեց քաղաքապետ: Միևնույն օրը «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» խմբակցությունները կնքեցին համագործակցության հուշագիր, ըստ որի Երևանի կառավարումն իրականացնելու են միասին, այսինքն՝ գործադիր մարմնում նշանակումները կատարվելու են փոխհամաձայնեցված:

«Հանրային ձայն» կուսակցության անդամների՝ ավագանու անդրանիկ նիստին մասնակցելու վերաբերյալ որոշումը ժամանակային առումով համընկավ այն լուրի հետ, որ դատարանը որոշել է չերկարաձգել տվյալ կուսակցության նախագահ Արտակ Գալստյանի կնոջ կալանավորման ժամկետը, ինչը հանրային ընկալումներում մի շարք հարցեր առաջացրեց դատական ռեսուրսի հնարավոր ներգործության և քաղաքական գործարքի վերաբերյալ:

Հանրության մեջ առավել լայն արձագանք ստացավ Երևանի քաղաքապետի երդմնակալության արարողությունը, որը կազմակերպելու համար քաղաքապետարանը ծախսել էր ավելի քան 87 մլն դրամ, ինչն անհամեմատ մեծ գումար էր Երևանի նախորդ քաղաքապետերի երդմնակալության արարողությունների ծախսերի համեմատ: Պետք է նկատել, որ 2018 թվականի հեղափոխությանը նախորդող քաղաքապետերի երդմնակալության համար, ըստ առկա տվյալների, առհասարակ գումար չի ծախսվել:

Մեկ այլ խնդրահարույց փաստ էր լրագրողների մուտքի արգելքը Երևանի քաղաքապետարանի շենք՝ լուսանկարահանելու նորընտիր քաղաքապետի երդմնակալության արարողությունը, ինչի պաշտոնական պատճառաբանությունը՝ տարածքի սահմանափակ լինելն էր, ինչը հիմնավոր չէր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրական գործընթացների բարելավման, դրանցում ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման, արդարության հաստատման և ընտրական գործընթացների ու արդյունքների նկատմամբ հանրային վստահության բարձրացման, ինչպես նաև ՏԻՄ-երի հետագա գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է վերանայել ՀՀ ընտրական օրենսգիրքը, ինչպես նաև առնչվող այլ իրավական ակտերը, մասնավորապես՝ ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման և անցկացման պրակտիկան ու մոտեցումները:

ՏԻՄ-ի ձևավորում

1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում ամրագրել Երևանի քաղաքապետի հրաժարականի կամ այլ հիմքով տվյալ պաշտոնը թափուր մնալու պարագայում Երևանի քաղաքապետի պարտադիր ընտրելու պահանջ և տվյալ պահանջը չիրականացնելու իրավական հետևանքներ, ներառյալ՝ ավագանու արտահերթ ընտրություններ: Ժամանակավոր պաշտոնակատարի ինստիտուտի համար սահմանել առավելագույն հնարավոր ժամկետ:

2. Օրենսդրությամբ նախատեսել, որ համայնքներում ավագանու անդամները չեն կարող զբաղեցնել հանրային ծառայության այլ պաշտոն՝ լիարժեքորեն ապահովելու տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը և անկախությունը:

Ընտրական հանձնաժողովներ

3. ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների կազմում պաշտոնների՝ հանձնաժողովների նախագահների, տեղակալների և քարտուղարների պաշտոնների բաշխման գործընթացում նախատեսել սեռերի քվոտաներ՝ համաչափ ներկայացվածությունն ապահովելու նպատակով:
4. Վերանայել ՏԸՀ-ների ձևավորման կարգը՝ փոքրացնելով կուսակցական սկզբունքով առաջադրումների և մեծացնելով ԸԸՀ-ների կողմից (բացառելով տվյալ ընտրություններին մասնակցող, այդ թվում՝ դաշինքների մաս կազմող կուսակցությունների անդամների կամ նրանց կողմից ներկայացված անձանց) նշանակումների համամասնությունը, միաժամանակ ստեղծելով երաշխիքներ հանձնաժողովների անդամների առավել պրոֆեսիոնալ, անկողմնակալ և պատասխանատու աշխատանքի համար:
5. Սահմանել ԸԸՀ անդամների կենսագրականները ԿԸՀ համացանցային կայքում հրապարակելու պահանջ՝ հաշվի առնելով ԸԸՀ-ների դերը և հրապարակել ՏԸՀ անդամների հիմնական աշխատավայրի վերաբերյալ տվյալները՝ երաշխավորելու անհամատեղելիության պահանջների նկատմամբ հանրային վերահսկողությունը:
6. ԸԸՀ և ՏԸՀ-ների համար նախատեսել էթիկայի կանոններ, որոնք կկանխարգելեն շահերի բախման իրավիճակները, այդ թվում՝ սահմանելով արգելք ընդունելու նվերներ, ներառյալ՝ հյուրասիրություն քաղաքական ուժերից, պետական և ՏԻՄ-երից:
7. Կատարելագործել ԸԸՀ և ՏԸՀ անդամների հավաքագրման, ընտրության և վերապատրաստման գործընթացները և մեթոդաբանությունը՝ բանիմաց և պրոֆեսիոնալ կադրերի ներգրավման նպատակով:
8. Ինչպես ԿԸՀ-ին, այնպես էլ ԸԸՀ-ներին վերապահել քարոզարշավի նկատմամբ առավել նախաձեռնողական հիմունքներով արդյունավետ վերահսկողություն իրականացնելու գործիքակազմ (օրինակ՝ հանձնաժողովների կողմից ՁԼՄ-ներով նյութերի մոնիտորինգ, համայնքներում քարոզչական (այդ թվում՝ ասոցացվող) նյութերի տարածման, ընտրատեղամասերի կահավորման կանոնների հսկում՝ պարբերական այցելությունների իրականացման միջոցով և այլն) ընտրախախտումների կանխարգելման և վերացման հարցում:
9. Ապահովել տեխնիկական սարքերի միջոցով ընտրողների բացակայության մասին զրոյական տեղեկանքի սահմանված ժամկետում տպագրելու տեխնիկական հնարավորությունը:
10. Ձեռնարկել քայլեր ԿԸՀ կայքում առավելագույնս ապահովելու տեղեկատվության հասանելիությունը բաց տվյալների ձևաչափով՝ մշակման, վերօգտագործման և որոնման հնարավորությամբ:
11. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում գործարկել քարոզչության կանոնների խախտման վերաբերյալ ահազանգերի ներկայացման առանձնացված թեժ գիծ՝ ԿԸՀ և ԸԸՀ-ների կողմից վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ընտրողների ցուցակներ

12. Մեծաթիվ ընտրողներով և կասկածելի հասցեները ճշգրտել և հստակեցնել՝ միաժամանակ ընտրություններից առաջ կազմակերպելով ՀՀ ոստիկանության պրոակտիվ եղանակով պարզաբանում այդպիսի հասցեների վերաբերյալ: Բացի այդ՝ արձանագրել առկա խնդիրները, պատճառները և լուծումները ԿԸՀ գործունեության մասին ՀՀ Ազգային ժողով ներկայացվող պարբերական հաղորդումների մեջ:
13. Ձեռնարկել քայլեր ապահովելու ԿԸՀ կայքում հրապարակվող ընտրողների ստորագրված ցուցակներում ստորագրությունների սյան ծածկումը և անձնական տվյալների պաշտպանությունը՝ հաշվի առնելով, որ ընտրական հանձնաժողովի անդամի կողմից համապատասխան սյունակում անհատական կնիքի առկայությունը արդեն իսկ վկայում է տվյալ ընտրողի՝ քվեարկությանը մասնակցելու փաստի մասին:

Կուսակցություններ/դաշինքներ

14. Ընդլայնել՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված «տեղեկություն տնօրինող» անձանց շրջանակը՝ ներառելով տվյալ պահին և վերջին երեք տարում համապետական կամ տեղական ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին՝ հաշվի առնելով, որ նրանք, հավակնելով իշխանության, պետք է պատրաստ լինեն կրելու թափանցիկության և հաշվետվողականության պատասխանատվությունը:
15. Ընտրական գործընթացներում «տեղեկություն տնօրինող» հանդիսացող կուսակցությունների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի խախտմանն առնչվող դատական գործերի համար նախատեսել քննության արագացված ընթացակարգեր:
16. Կուսակցության ընտրական ցուցակում որևէ այլ կուսակցության ղեկավար մարմնի կազմից որևէ ներկայացուցիչ կամ որոշակի թվով (օրինակ՝ մինչև 10%) այլ անդամներ ներառելու պարագայում նախատեսել կուսակցությունների դաշինքով հանդես գալու հստակ պահանջ:
17. Կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում տվյալ կուսակցության անդամ հանդիսացող թեկնածուների ինքնաբացարկի դեպքում նախատեսել մեխանիզմ, որով կապահովվի օրենքով կուսակցության անդամ չհանդիսացող անձանց համար սահմանված առավելագույնը 30% շեմը:
18. Կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում կին թեկնածուների ինքնաբացարկի դեպքում նախատեսել, որ նրան փոխարինի տվյալ կուսակցության (դաշինքի) ընտրական ցուցակի հերթական՝ միևնույն սեռի հաջորդ թեկնածուն՝ ապահովելու օրենքով սահմանված առնվազն 30% շեմը:

Քարոզչություն

19. Հստակեցնել քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղերի բաշխման կանոնները՝ գործնականում ապահովելու կուսակցությունների հավասար հնարավորությունները: Նախատեսել արդյունավետ վերահսկողական գործիքներ և կուսակցությունների նկատմամբ կիրառել

պատասխանատվության համարժեք միջոցներ քարոզչանյութերի տարածման նշված կանոնները խախտելու համար՝ դրանց կրկնման դեպքերը կանխելու նպատակով:

20. Հստակեցնել համայնքի ղեկավարի կողմից՝ արգելված և չսահմանված վայրերում փակցված քարոզչական նյութերի հեռացման ժամկետը, ինչպես նաև սահմանել վարչական պատասխանատվություն՝ տվյալ գործառույթը չիրականացնելու համար:
21. Արգելված և չսահմանված վայրերում քարոզչական նյութերի փակցման կրկնվող պրակտիկան կանխելու նպատակով գործնականում կուսակցությունների նկատմամբ կիրառել օրենսդրությամբ սահմանված վարչական պատասխանատվության միջոցները:
22. Արտաքին գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունների կողմից քարոզչանյութերի տեղադրման ոչ խտրական և անկողմնակալ պայմանների ապահովման պահանջը խախտելու դեպքերի համար նախատեսել վարչական պատասխանատվության միջոցներ:
23. ԿԸՀ-ի կողմից 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով արտաքին գովազդային վահանակների բաշխման ընթացակարգը տարածել 1-5 քառ. մետր մակերեսով պաստառների/վահանակների վրա՝ բաշխումը կազմակերպելով էլեկտրոնային ինքնաշխատ եղանակով՝ ապահովելու համաչափ բաշխում և հնարավորինս բացառելու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի գովազդային վահանակների կուտակումը առանձին վայրերում:
24. Վերացնել բնակելի շենքերի վերելակներում (ներսում և դրսի կողմից) քարոզչանյութեր փակցնելու հնարավորությունը՝ հաշվի առնելով, որ դա սահմանափակում է բնակիչների հավասար հասանելիությունը մրցակցող բոլոր քաղաքական ուժերի վերաբերյալ տեղեկատվությանը:
25. Անչափահասներին՝ հավաքին մասնակցելուն հարկադրելը կամ այդ նպատակով նյութապես շահագրգռելը դիտարկել որպես տվյալ արարքը ծանրացնող հանգամանք:

Քարոզչություն համացանցում

26. Նախատեսել պատասխանատվություն համացանցում գործող ԶԼՄ-ների կողմից քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակման ժամանակ «նախընտրական քարոզչություն» լուսագրեր չտեղադրելու, պատվիրատուի մասին տեղեկություններ չհրապարակելու, ինչպես նաև վճարովի հիմունքներով գովազդային նյութերը՝ առանց կուսակցության կամ նրա ներկայացուցչի հետ կնքված գրավոր պայմանագրի տեղադրելու համար:
27. Իրականացնել քարոզարշավի ընթացքում առավել ակտիվ կեղծ օգտահաշիվների, ինչպես նաև համացանցով տարածվող գովազդի ուսումնասիրություն և վերլուծություն՝ գնահատելու Հայաստանի քաղաքական միջավայրում դրանց իրական ազդեցությունը՝ հետագայում համապատասխան քաղաքականություն մշակելու նպատակով:
28. Ակտիվորեն համագործակցել սոցիալական հարթակների կառավարման մարմինների հետ՝ մշակել կեղծ տեղեկատվության և օգտահաշիվների հայտնաբերման և դրանց ազդեցության չեզոքացման գործիքակազմ:

Երրորդ անձանց ներգրավման կարգավորում

29. Սահմանել նախընտրական քարոզարշավում ներգրավվող «երրորդ անձ» եզրույթը՝ ներառելով առնվազն այն իրավաբանական անձանց (հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ և այլն), որոնց անվանումները ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են կուսակցությունների անվանման հետ, կամ որոնց ղեկավար կազմի անդամները ամբողջությամբ կամ մասամբ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների անդամներն են, նաև այն իրավաբանական անձանց, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենց գործունեության ընթացքում իրականացնում են նախընտրական քարոզչություն կամ հակաքարոզչություն:
30. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում՝ սահմանափակել (օրինակ՝ առավելագույնը մինչև 2,000,000 ՀՀ դրամ) ու հաշվետու դարձնել (օրինակ՝ ամրագրելով 500,000 ՀՀ դրամից ավել գումարի ծախսը հայտարարագրելու պահանջ)) երրորդ անձանց կողմից իրականացվող ծախսերը և ֆինանսական աղբյուրները:
31. Սահմանել նախընտրական քարոզարշավում ներգրավվելու նպատակով օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից, օտարերկրյա իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից նվիրատվություններ ստանալու կամ ստացված նվիրատվությունները նախընտրական քարոզչության նպատակով օգտագործելու արգելք նաև երրորդ անձանց համար:

Վարչական ռեսուրսի օգտագործում

32. Սահմանափակել զարգացման/տարեկան ծրագրերից չբխող՝ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորումը ընտրություններից առնվազն վեց ամիս առաջ, բացառությամբ արտակարգ իրավիճակների:
33. Արգելել համատիրությունների ղեկավարների կողմից քարոզչության իրականացումը աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս:
34. Սահմանել պաշտոնատար անձանց կողմից նախընտրական քարոզչությունը պաշտոնական գործուղումների հետ համատեղելու, ինչպես նաև գործուղման ավարտից հետո տվյալ մարզի կամ համայնքի տարածքում քարոզչություն անելու հստակ արգելք:
35. Սահմանել պետական կամ համայնքային բյուջեներով նախապես չպլանավորած միջոցների, այդ թվում՝ պետական կենսաթոշակների, նպաստների, դրամական օգնությունների նախատեսման կամ դրանց չափի ավելացման կամ պարտքերի մարման արգելք՝ առնվազն ընտրություններ նշանակելու մասին որոշումն ընդունելու պահից սկսած՝ բացառությամբ չնախատեսված և հրատապ լուծում պահանջող միջոցառումների՝ ստանալով վերահսկող ներկայացուցչական մարմնի (ՀՀ ազգային ժողովի, համայնքի ավագանու):
36. Հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերում ներառել վարչական ռեսուրսի և դրա չարաշահման ռիսկերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված բաղադրիչ և նյութեր, ինչպես նաև դրանց վերաբերող դրույթներ ներառել հանրային ծառայողների վարքականոններում:

37. Նախատեսել ԿԸՀ գործառույթ՝ գնահատելու, թե արդյոք նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող առանձին գործողություններն ու ծախսերը ենթակա են որակման որպես նախընտրական քարոզչություն:

Նախընտրական հիմնադրամներ և ծախսեր

38. Կուսակցությունների տարեկան հաշվետվություններում, կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերում և նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում տվյալների լրացման և ներկայացման համար սահմանել միասնական մոտեցում, հստակեցնել ներկայացվող տվյալների ձևաչափը և մշակել համապատասխան մանրամասն ու մատչելի ուղեցույցեր:
39. Կուսակցությունների վերահսկողության բոլոր գործառույթները կենտրոնացնել մեկ մարմնում:
40. Նախատեսել կուսակցությունների հաշվետվությունների, գույքի և եկամուտների հաշվետվությունների և նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և ծախսերի հայտարարագրերի՝ ակնկալվող ձևաչափին համապատասխան ներկայացման և տվյալների ստուգման ու վերլուծության պահանջ և պատասխանատվության միջոցներ:
41. Նախընտրական հիմնադրամի մուծումներն անել բացառությամբ նույնականացման քարտով:
42. Սահմանել կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրում նվիրատվություն կատարած անձանց անուն-ազգանունների և մուծած գումարի հրապարակման պահանջ:
43. Հստակեցնել անշարժ գույքի (ինչպես կենտրոնական և տարածքային գրասենյակների, այնպես էլ նախընտրական ժամանակահատվածում բացված շտաբների) և դրա օգտագործման վերաբերյալ հաշվետվողականության պահանջները՝ ապահովելու տվյալների համադրման և ամբողջական պատկեր ստանալու գործնական հնարավորություն:
44. Օրենքով կարգավորել նախընտրական հիմնադրամներում որևէ անձի կամ կուսակցության կողմից մուծված՝ սահմանաչափը գերազանցող գումարի վերադարձը համապատասխանաբար տվյալ անձին կամ կուսակցությանը, և միայն անհնարինության դեպքում՝ սահմանել ՀՀ պետական բյուջե փոխանցելու պահանջ:
45. Սահմանել պահանջ, որ նախընտրական քարոզարշավի համատեքստում կուսակցությունների կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված ծառայությունների մատուցման բոլոր պայմանագրերը հրապարակվեն կամ հասանելի դառնան դիտորդական կազմակերպություններին:
46. Նախատեսել կուսակցությունների կողմից տարեկան հաշվետվությունների և նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի առցանց լրացման մեխանիզմ՝ ապահովելու, որ դրանք լինեն մեքենայաընթեռնելի ձևաչափով, մշակման, վերաօգտագործման և որոնման ենթակա:
47. Սահմանել ՎՎԾ-ի (վերահսկող մարմնի) կողմից ստուգման արդյունքներով կազմվող եզրակացությանն առաջադրվող պահանջները և ձևաչափը, որոնք պետք է արտացոլեն ստուգման ընթացքում ձեռնարկված միջոցների մանրամասն

նկարագրությունը, ստուգման ընթացքում արձանագրված բոլոր խախտումները՝ խախտման տեսակների և կիրառված մեթոդների մատնանշմամբ:

Քվեարկություն և արդյունքների հաշվարկ

48. Սահմանել տեղամասային կենտրոնների ընտրության և դրանց մատչելիության կարգավիճակը հաստատելու համար պատշաճ ստուգման մեխանիզմներ՝ կանխարգելելու ընտրողների ընտրելու իրավունքի խախտումները, այդ թվում՝ բացառելու տեղամասերի դժվարամատչելիության խնդիրը:
49. Վերացնել օրենքով սահմանված՝ քվեարկության նախապատրաստման ընթացակարգի և տեխնիկական սարքերի ծրագրավորման միջև անհամապատասխանությունը:
50. Նախատեսել քվեարկության օրվա տեսագրությունների հասանելիությունը ԿԸՀ կայքում քվեարկությունից հետո առնվազն մինչև ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը և տեսանկարահանող սարքերը փոխարինել տեսաձայնագրող սարքերով:

Խախտումների և քվեարկության արդյունքների բողոքարկում

51. Ճանաչել դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով, ինչպես նաև սահմանել դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը: Քննարկման առարկա դարձնել նաև քվեարկության/ընտրությունների արդյունքները անմիջականորեն ընտրողների, դիտորդների և դիտորդական կազմակերպությունների կողմից վիճարկելու իրավունքի սահմանումը ՀՀ Ընտրական օրենսգրքով:
52. Խթանել բողոքարկմանն առնչվող վարչարարությունը՝ վերացնելով ընտրական բոլոր գործընթացներին առնչվող հայցերով պետական տուրքի վճարման պահանջը:
53. Վերանայել Ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին վերաբերող իրավակարգավորումները, որոնց ուժով փաստացի բացառվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը ԸԸՀ-ների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնվել է 2018 թ. «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության, «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամի և «Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի» կողմից:

«Ականատես»-ի նպատակն է հանրային անկողմնակալ հսկողության միջոցով նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը:

«Ականատես»-ը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություն կատարելուց, որը կարող է մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ:

https://www.facebook.com/akanatesditord

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) հիմնադրվել է 2000 թ.-ին, Երևանում: ԹԻՀԿ առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու և ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

Հեռ.՝ +37410569589, կայքէջ՝ www.transparency.am

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ) հիմնադրվել է 1999 թ.-ին, Գյումրիում: ԺԱԱ առաքելությունն է արտահայտման, մամուլի և տեղեկատվության ազատության պաշտպանությունը:

Հեռ.՝ +37431250622, կայքէջ՝ www.asparez.am

«Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամը ստեղծվել է 2019 թ.-ին, Երևանում: Հիմնադրամի գործունեությունն ուղղված է բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնելուն՝ ապահովելու ավելի հարմարավետ և առաջադեմ բուհական համակարգ Հայաստանում:

Հեռ.՝ +37477250545, էլ. փոստ՝ restartfoundationedu@gmail.com

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը (ԻԶՊՀ) հիմնադրվել է 2018 թ.-ին, Երևանում: ԻԶՊՀ գործունեությունն ուղղված է ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանությանը և իրավական դաշտի բարեփոխումներին:

Հեռ.՝ + 37499515600, կայքէջ՝ Ldpf.am